



Ձիաց մեր հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

ԼԳ ՏԱՐԻ

Դ. ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքուկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության

Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլեկտրոնային՝ amaa.armenia@amaa.am.

Իրենց պտուղներից նրանց կճանաչեք: (Մատթ. 7.16)

ՊՏՈՒՂՆԵՐԻՆ ՆԱՅԵՆՔ

«Ասել ճշմարտությունը» խաղի ավարտին մասնակիցները խնդրում են, որ ոտքի կանգնի իսկական անձը: Իսկ մինչ այդ չորս հայտնի անձինք հարցեր են տալիս երեք հոգու, որոնք պնդում են, թե իրենք նույն մարդն են: Անշուշտ, նրանցից երկուսը ստում են: Եվ խաղի գրավչությունն այդ է՝ հարցերի միջոցով պարզել իրական անձնավորությունը: Հեռուստատեսային խաղի դրվագներից մեկում օրինակ խումբը փորձում էր գտնել իսկական «Կարմիր քթով հյուսիսային եղջերուն» երգի բառերի հեղինակ Ջոնի Մարկին: Եվ պարզվեց, որ նույնիսկ շատ հարցեր տալու միջոցով դժվար է իմանալ՝ ով ով է:

Հեռուստատեսային ծրագրի համար գուցե և զվարճալի է ստախոսին բացահայտելը, սակայն իրականում նույնպես դժվար է տարբերակել՝ ով ով է, երբ հատկապես խոսքը վերաբերում է սուտ մարգարեններին: «Հափշտակող գայլերը» հաճախ են գալիս մեզ մոտ «ոչխարի հանդերձներով», և Հիսուսը նույնիսկ իմաստուններին հորդորում է զգուշ լինել (Մատթ. 7.15): Լավագույն քննությունը ոչ այնքան լավ հարցերն են, որքան լավ աչքերը: Հարկավոր է տեսնել նրանց պտուղները և ըստ այդմ ճանաչել նրանց, որովհետև լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, ոչ էլ հակառակը (Հմ. 16-20):

Աստվածաշունչն օգնում է մեզ տեսնելու լավ ու վատ պտուղները: Բարի պտուղը «սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, բարություն, հավատ» է (Գաղ. 5. 22-23): Պետք է ուշադիր լինել, քանի որ գայլերը խաբեությունամբ են զբաղվում: Բայց Սուրբ Հոգով լցված հավատացյալները ծառայում են իսկական Բարի Հովվին՝ «Ճշմարտությամբ ու շնորհով լի Միածնին» (Հովհ. 1.14):

Աղոթք - Մե՛ծ Հովիվ, տուր ինձ աչքեր ու ականջներ, որ նայեմ ու լսեմ բարի պտուղներից: Ամեն:

Հաճախ եմ հանդիպում ոչխարի հագուստով գայլերի: Նայեմք ՊՏՈՒՂԻՆ, որ կարողանանք զանազանել բարին չարից:

Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով միմյանց հանդուժելով: (Եփ. 4.2)

ԱՍՏԾՈ ԱՁՆԻՎ ՇՆՈՐՀՔԸ

Ամերիկացի բանաստեղծուհի էմիլի Դիքինսոնը կարծում է, որ Աստծո ճշմարտությունն ու փառքը «չափազանց պայծառ են» խոցելի մարդկանց համար և պետք է այդ մասին հայտնել ոչ միանգամից: «Ասա՛ ճշմարտությունը, բայց ոչ ուղիղ»,- առաջարկում է նա: Լավագույնը Աստծո շնորհքին ու ճշմարտությանը անուղղակիորեն հասու լինելն է: ճշմարտությունը աստիճանաբար պետք է մատուցել, այլապես մարդը կկուրանա: Պողոս առաքյալը եփեսացիներին ուղղված 4-րդ նամակում նման բան է ասում, երբ հավատացյալներին հորդորում է լինել «ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով միմյանց հանդուժելով» (Հմ. 2): Նա բացատրում է, որ հավատացյալների՝ միմյանց նկատմամբ հանդուժողակա՜նության ու հեզության հիմքը Քրիստոսի շնորհալի վարմունքն է մեզ հետ: Իր մարդեղության մեջ (Հմ. 9-10) Հիսուսն ինքն իրեն բացահայտեց այնպիսի հանդարտ ու մեղմ ձևերով, որոնք անհրաժեշտ էին, որ մարդիկ վստահեն ու ընդունեն իրեն:

Այդ ինքնաբացահայտումը Նա շարունակում է նուրբ ու սիրառատ ձևերով՝ զորացնելով իր ժողովրդին ու սովորեցնելով աճել ու հասունանալ «Քրիստոսի մարմնի շինության համար, մինչև ամենքս հասնենք հավատի միություն և Աստծո Որդու ճանաչողության՝ որպես հասուն և կատարյալ մարդ Քրիստոսին չափանիշ ունենալով» (Հմ. 12-13): Աճելով դառնում ենք պակաս խոցելի՝ մեր հարցերի պատասխանները այլ տեղերից փնտրելիս (Հմ.14) և ավելի վստահ՝ հետևելով Հիսուսի օրինակին (Հմ. 15-16):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ այն մեղմ ձևերի համար, որով բացահայտում ես Քո բարությունը, շնորհքն ու ճշմարտությունը: Օգնի՛ր ինձ, որ, վստահելով Քո սիրո խնամքին, գտնեմ համբերություն և հանգիստ:

Ասված իր շնորհքն ու ծննդությունը հայնում է մեղմ ու անուղղակի ձևերով: Նրա սված այդ ազնիվ շնորհով վարվենք միմյանց հետ:

Բայց ով թափանցում է ազատության կատարյալ օրենքի մեջ և դրա մեջ մնում... , նա իր արարքով երանելի կլինի: (Չակ. 1.25)

ՐԱՅԵԼՈՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի նքնաճանաչմամբ զբաղվող հոգեբանները երեխաներին հարցրել են, թե ում են տեսնում հայելու մեջ: Մինչև մեկուկես տարեկան երեխաները սովորաբար չեն ճանաչում իրենց: Դրանից հետո է, որ հայելում արտացոլված պատկերը կապում են իրենց հետ: Ասել է, թե ինքնաճանաչումը առողջ աճի և հասունության կարևոր նշան է:

Սա կարևոր է նաև Հիսուսին հավատացողների աճի համար: Հակոբոսը այսպես է ներկայացնում հայելու ճանաչման քննությունը: Հայելին «Աստծո ճշմարտության խոսքն է» (Հակ.1.18): Սուրբ գրությունները կարգալով՝ ի՞նչ ենք տեսնում: Արդյո՞ք ինքներս մեզ ենք ճանաչում, երբ նկարագրվում են սերն ու խոնարհությունը: Արդյո՞ք վերլուծում ենք մեր գործողությունները, երբ կարգում ենք Աստծո պատվիրանները: Սուրբ Գիրքը կօգնի հասկանալ, թե արդյո՞ք մեր արարքները համապատասխան են այն ամենին, ինչ Աստված ցանկանում է մեզ համար, կամ գուցե կարիք ունենք ապաշխարության և բարեփոխվելու:

Հակոբոսը հորդորում է պարզապես չկարգալ Աստվածաշունչն ու անցնել՝ «ինքներս մեզ խաբելով» (Հմ.22) ու մոռանալով, թե ինչ ենք վերցնում: Սուրբ Գիրքը մեզ տրամադրում է Աստծո ծրագրի համաձայն ապրելու ճանապարհային քարտեզ: Կարգալով այն՝ խորհրդածում ենք դրա մասին, մարտում այն: Մենք կարող ենք նաև խնդրել Իրենից, որ մեզ տա աչքեր՝ տեսնելու մեր սրտերը և ուժ՝ կատարելու անհրաժեշտ փոփոխությունները:

Աղոթք - Սիրելի՛ Չայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ Սուրբ Գիրքն օգտագործեմ որպես հայելի իմ կյանքի շարժառիթների և արարքների ժամանակ: Ամեն:

Աստվածաճշի՛ն նայե՛նք որդես հայելի և շեսնե՛նք մեր կյանքում կասարելի՛ք փոփոխությունները:

Հոգիս ծարավի է քեզ: (Սաղմ. 63.1)

ՄԵՐ ՄՐՏԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Ընտանիքը ամառային արձակուրդին մեկնել էր 2200 մղոն իրենց տնից հեռու, և նրանց Բոբի շունը կորավ: Ամեն տեղ փնտրեցին սիրելի շանը, բայց՝ ապարդյուն:

Վեց ամիս անց Օրեգոն նահանգի Միլվերթոն քաղաքի իրենց տանը մոտեցավ հյուժված ու տանջահար Բոբին: Շունը երկար ու վտանգավոր ճանապարհորդությունից հետո գտել էր տուն՝ իրեն սիրողների մոտ բերող ճանապարհը:

Կենդանու որոնումն ու վերադարձը ոգեշնչել էր բոլորին: Գրքեր, ֆիլմեր ու կտավներ ստեղծվեցին այդ թեմայով: Այդ դիպվածը սրտեր էր հուզել, որովհետև Աստված մեր սրտերում ավելի խոր կարոտ է դրել: Հին ժամանակների աստվածաբան Օգոստինոսը դա այսպես է նկարագրել. «Մեզ ստեղծել ես Քեզ համար, և մեր սրտերը անհանգիստ են, քանի դեռ Քեզանով չենք խաղաղվել»: Այս նույն ցանկությունը հուսահատ, բայց ավելի պերճախոս նկարագրել է Դավիթն իր ազոթքում, երբ Հուդայի անապատում թաքնվում էր իրեն հետապնդողներից. «Ո՛վ Աստված, դու ես իմ Աստվածը, քեզ եմ փնտրում առավոտից. հոգիս ծարավի է քեզ, մարմինս քեզ է ցանկանում այս ցամաք ու ծարավ երկրում, որտեղ ջուր չկա» (Սաղմ. 63.1):

Դավիթը փառաբանեց Աստծուն, քանի որ Նրա «ողորմությունն ավելի լավ է, քան կյանքը» (Հմ.3): Հիսուսի միջոցով Աստված փնտրել է մեզ ու ճանապարհ բացել, որպեսզի մենք վերադառնանք տուն՝ դեպի Իր կատարյալ սերը՝ անկախ նրանից, թե որքան հեռու ենք եղել ժամանակին: Դիմելով իրեն՝ մենք կգտնենք մեր սրտի իսկական տունը:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ, որ ճանապարհ բացիր, որպեսզի Քո կյանքի, խաչի վրա մահվան և հարության միջոցով գամ դեպի Քեզ: Ամեն:

Մի orեստենելու ենք Հիսուսին Իր փառքով: Ինչո՞ւ ենք դաժնաբանվում այդ օրվան:

Տերը տվեց, Տերն էլ առավ: Տիրոջ անունը թող օրհնյալ լինի: (Գոր. 1.21)

ՎՇՏԱՅԱՐ ԵՎ ԵՐԱՆՏԱՊԱՐՏ

Մորս մահից հետո ինձ մոտեցավ քաղցկեղով հիվանդ իր ընկերուհիներից մեկը և ասաց. «Մայրդ շատ ազնիվ էր իմ հանդեպ: Ցավում եմ, որ մահացավ ...իմ փոխարեն»:

Պատասխանեցի, որ մայրս սիրում էր իրեն, և մենք միասին աղոթել ենք, որ Աստված թույլ տա, որպեսզի ինքը տեսնի իր մանչուկների մեծանալը:

Մենք միասին արտասովեցինք ու խնդրեցինք Աստծուն, որ օգնի նրան՝ խաղաղ վշտանալ: Նաև ուրախությունս հայտնեցի իր ապաքինման համար:

Աստվածաշունչը ցույց է տալիս, թե որքան բարդ բան է վիշտը: Երբ Հոբբ կորցրեց գրեթե ամեն ինչ՝ նաև իր զավակներին, տխրեց, «գետին ընկավ ու երկրպագություն արեց» (Հոր.1.20): Արտաճմլիկ և հոսադրող անձնատուր արարքով և երախտագիտությունը նա հայտարարեց. «Տերը տվեց, Տերն էլ առավ: Տիրոջ անունը թող օրհնյալ լինի» (Հմ. 21): Թեև ավելի ուշ Հոբբը պայքարեց իր վշտի դեմ՝ Աստծո կողմից իր կյանքը վերակառուցելու համար, այդ պահին ընդունեց և նույնիսկ ուրախացավ Աստծո տված լավ ու վատ իրավիճակների համար:

Աստված հասկանում է, թե ինչպես ենք մենք պայքարում մեր զգացումների դեմ: Նա մեզ հրավիրում է անկեղծորեն վշտանալ: Նույնիսկ երբ վիշտը թվում է անվերջ ու անտանելի, Աստված հաստատում է, որ ինքը չի փոխվել ու չի փոխվի: Այդ խոստմամբ Նա մխիթարում ու զորացնում է, որ երախտապարտ լինենք Իր ներկայություն համար:

Աղոթք - Կարեկից Աստված, շնորհակալ եմ, որ ճանաչում ես ինձ և տեսնում ես իմ վշտի յուրաքանչյուր դրսևորումը: Ամեն:

Կորուսներն ու ցավերն անդակաս են: Սակայն անհրաժեշտ է այդ սազնադների մեջ աղավիհնել Ասծուն և հուսալ:

Նրան պիտի օգնես, որպեսզի քեզ մոտ ապրի: (Դևտ. 25.35)

ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ ՈՒՐԻՇ ԱՊԱԳԱ

Կանգամ նահանգի Նիոդեշա քաղաքի երեք հարյուր միջին և բարձր դասարանցիներ մասնակցում էին դպրոցական մի հավաքի: Նրանք շատ զարմացան և ուրախացան՝ լսելով, որ իրենց քաղաքի հետ կապ ունեցող մի զույգ որոշել է հետագա 25 տարիներին վճարել քոլեջի բոլոր սովորողների ուսման վարձը:

Նիոդեշա քաղաքը ծանր տնտեսական վիճակում էր, և շատ ծնողներ մտահոգ էին, թե ինչպես են հոգալու իրենց զավակների ուսման համար: Եվ նրանց մատուցված նվերը ոչ միայն տեղին էր, այլև հույս ներշնչող: Նվիրատուները նույնպես վստահ էին, որ իրենց քայլով նպաստելու են, որ մարդիկ տեղափոխվեն այդ քաղաք: Նրանք իրենց հայրենի քաղաքի համար պատկերացնում էին նոր ու բարեկեցիկ ապագա

Աստված ուզում էր, որ Իր ժողովուրդը առատաձեռն լինի ոչ միայն հոգալով իր կարիքները, այլև նոր ապագա պատկերացնելով իր հարևանների համար: Աստծո ցուցմունքները հստակ էին. «Եթե քո եղբայրը աղքատանա, և նրա ձեռքը քեզ մոտ թուլանա, նրան պիտի օգնես» (Դև. 25. 35): Առատաձեռնությունը կապված էր ոչ միայն ֆիզիկական կարիքների հետ, այլև նկատի էր առնում, թե ինչ է անհրաժեշտ նրանց համայնքին ապագայում համատեղ ապրելու համար: Դրա համար էլ Աստված ասաց «Նրան պիտի օգնես, որպեսզի քեզ մոտ ապրի» (Հմ.35):

Աստծո վիթխարի ստեղծագործ առատաձեռնությունը մեզ քաջալերում է դեպի այն օրը, երբ մենք բոլորս ապրելու ենք միասին ու առատություն մեջ:

Աղոթք - Հայր, պայքարում եմ առատաձեռնության տարբեր ձևերով: Օգնիր ինձ, որ տեսնեմ ու գործեմ: Ամեն:

Առասաձեռն լինելով՝ կարելի է ուրիշների կարիքները հոգալ և օգնել ինքներս մեզ, որ մտածենք այս կյանքից այնկողմ եղող բաների մասին:

Մի՛ հոգացեք ձեր կյանքի համար: (Մատթ. 6. 25)

ԵՐԿՆՔԻ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Ամռան արևը նոր էր դուրս եկել, երբ հարևանս, ինձ տեսնելով մեր բակում, ժպտալով շշնջաց, որ մոտենամ իրեն: Ես հետաքրքրված մոտեցա ու տեսա, որ պատշգամբի մի անկյունում խոտի փոքրիկ մի կույտի վրա թռչունների բույն է հայտնվել: «Տեսնո՞ւմ ես ձագերին, իրենց մորն են սպասում», - ասաց հարևանս՝ ցույց տալով ձվից նոր դուրս եկած թռչունների՝ դեպի վեր ուղղված հագիվ երևացող կտուցները: Մենք զարմացած հետևում էինք այդ արարածներին: Ես զգուշորեն լուսանկարեցի հարևանիս անակնկալ «հյուրերին»:

Հաջորդ շաբաթ մայր թռչունն ու ձագերն անհետացան նույնքան լուռ, ինչպես հայտնվել էին: Ո՞վ պետք է հոգար նրանց մասին:

Աստվածաշունչը տալիս է այս հարցի հայտնի ու փառավոր պատասխանը: «Մի՛ հոգացեք ձեր կյանքի համար, - ասում է Հիսուսը (Մատթ. 6. 25): - Նայե՛ք երկնքի թռչուններին, որոնք ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ շտեմարանների մեջ ամբարում, և ձեր երկնավոր Հայրը նրանց կերակրում է» (Հմ. 26): Աստված ինչպես հոգ է տանում թռչունների մասին, այդպես էլ հոգում է մեզ համար՝ դաստիարակելով մեզ մտքով, հոգով ու մարմնով: Հոյակապ խոստում է: Թող որ մենք ամեն օր նայենք նրան ու ճախրենք՝ առանց անհանգստանալու:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, պարտավորեցնող է իմանալը, որ Դու հոգում ես իմ կարիքները: Խնդրում եմ՝ օգնի՛ր, որ հարգեմ ապահովելու Քո խոստումը՝ ամեն օր ավելի ու ավելի վստահելով Քեզ: Ամեն:

Տարբերություն կա անհանգստության և ծրագրվածի միջև: Ասված ամեն օր աղաչողություն է մեր կարիքները:

Նրա աստվածային զորությունը մեզ շնորհեց կյանքին և աստվածապաշտությանը վերաբերող ամեն ինչ: (Բ. Պետ. 1.3)

ԺՈՒԺՎԱԼՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒ ԶՈՐՈՒԹՅԱՐ

1 972 թ. Սթենդֆորդի գիտնականները մի գիտափորձ կատարեցին, որը հայտնի է «Ջեֆիրային թեսթ» անունով: Դրա էությունն այն էր, որ երեխաները, եթե կարողանում էին զսպել իրենց ցանկությունն ու տասը բույս սպասել, հետո այդ քաղցրավենիքից կրկնակի էին ստանում: Երեխաների մեկ երրորդը կարողանում էր համբերել:

Հնարավոր է ժուժկալություն դրսևորել, եթե դրա դիմաց առաջարկվում է մեզ անհրաժեշտ որևէ բան: Պետրոսը հորդորում է մեր հավատքին ավելացնել մի շարք առաքինություններ, որոնց թվում՝ ժուժկալությունը (Բ. Պետ. 1. 5-6): Հիսուսի հանդեպ իր անխախտ հավատքով Պետրոսն իր ընթերցողներին խրախուսում էր իրենց հավատը հարստացնել համբերությամբ, աստվածապաշտությամբ, եղբայրասիրությամբ ու սիրով (Հմ. 5-8):

Գուցե թվարկված առաքինությունները մեզ չեն արժանացնի Աստծո բարեհաճությանն ու չեն ապահովի մեր տեղը երկնքում, բայց մեզ և մեզ հետ շփոթողներին ցույց են տալիս ժուժկալության անհրաժեշտությունը, քանի որ Աստված իմաստունություն և զորություն է տալիս դրանք կատարելու: Եվ ամենալավն այն է, որ «Նրա աստվածային զորությունը մեզ շնորհեց կյանքին և աստվածապաշտությանը վերաբերող ամեն ինչ» (Բ. Պետ. 1.3):

Աղոթք - Սուրբ Հոգի, խնդրում եմ իմ մեջ աճեցրու՝ Հիսուսին արտացոլող հատկությունները, որպեսզի կարողանամ բացահայտել ինձ շրջապատող աշխարհի հանդեպ Քո ցուցաբերած բարությունը: Ամեն:

Տերը մեզ սալիս է անհրաժեշտ առաքինությունները: Մեզ մնում է դրանք զարգացնել՝ ի փառս Նրա:

Կենդանի է Աստօն խոսքն ու ազդեցիկ: (Եբ. 4.12)

ԱՍԾՈՆ ԽՈՍՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստեֆանը բավական շնորհալի կատակերգու էր, բայց նաև՝ շփացած: Մեծացել էր քրիստոնեական ընտանիքում, բայց հոր և երկու եղբայրների՝ ավիավթարից զոհվելուց հետո նրան տանջում էին կասկածները: Քսան տարեկանում կորցրել էր հավատը, սակայն մի գիշեր Չիկագոյի ցուրտ փողոցներում քայլելիս վերագտավ, երբ մի անծանոթ նրան նվիրեց գրպանի Աստվածաշունչ: Բացելով Սբ. Գիրքը՝ նա մի էջանշան տեսավ, որն ասում էր, թե իր նման անհանգստությունն ունեցողները պետք է կարդան Հիսուսի Լեռան քարոզը, որ զետեղված է Մատթեոսի ավետարանի 6. 27-34 -ում: Ստեֆանը դարձի եկավ, և իր կարդացած բառերը բորբոքեցին սիրտը: Նա հիշում է. «Սա կատարյալ թեթևություն զգացի: Այդ ցրտին փողոցի անկյունում կարդացի Լեռան քարոզը, և իմ կյանքը լիովին փոխվեց»: Այդպես է Աստվածաշունչի զորությունը: Սուրբ Գիրքը նման չէ մեկ այլ գրքի, որովհետև կենդանի է: Աստվածաշունչը պարզապես չենք կարդում: Աստվածաշունչն ինքն է մեզ կարդում. «Կենդանի է Աստծու խոսքն ու ազդեցիկ և ամեն մի երկսայրի սրից առավել կտրուկ է. այն թափանցում է մինչև շնչի և հոգու, հոդերի և ողնաձուծի բաժանումը, քննում է սրտի խոկումներն ու խորհուրդները» (Եբ. 4.12): Աստվածաշունչը մոլորակի ամենահզոր ուժն է, որ փոխակերպում ու առաջնորդում է մեզ դեպի հոգևոր հասունություն: Եկե՛ք բանանք այն ու բարձրաձայն կարդանք՝ խնդրելով Աստծուց, որ բորբոքի մեր սրտերը: Նա խոստանում է, որ Իր ասած խոսքը «ապարդյուն չի վերադառնա, այլ կկատարի Իր կամքը և հաջողություն կունենա այն բանում, ինչի համար ես ուղարկել եմ նրան» (Յու. 55.11): Աստծո խոսքի ուժով մեր կյանքը երբեք նույնը չի մնա:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Աստվածաշունչը ինձ տալուդ համար: Խնդրում եմ, որ այն միշտ ապրի իմ կյանքում: Ամեն:

Կարդա՛ Աստվածաշունչը և կեսնես, թե ինչդես կփոխվի կյանդ:

Ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները քող հայտնի լինեն Աստծուն: (Փիլ. 4. 6)

ՈՒՐԱՆ ԳՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոգեբան Ռոբերտ Էմմոնզի կատարած ուսումնասիրության համար մասնակիցները բաժանվեցին երեք մասի, որոնցից յուրաքանչյուրը շաբաթական գրառումներ էր կատարում իրենց մատյանում: Խմբերից մեկը հինգ բանի համար երախտագիտություն էր հայտնել: Մյուս խումբը հինգ ամենօրյա դժվարություն էր նշել: Երրորդ խմբի համար հինգ իրադարձությունն էլ քիչ ազդեցություն էին ունեցել: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ երախտագիտություն հայտնողների խմբի անդամներն ընդհանուր առմամբ ավելի լավ էին զգում, ավելի լավատես էին և ավելի քիչ առողջական խնդիրներ ունեին:

Շնորհակալություն հայտնելը կյանքի հանդեպ հայացքը փոխելու ուժ ունի և մարդուն ավելի երջանիկ է դարձնում: Աստվածաշունչը երկար ժամանակ բարձր է գնահատել Աստծոն շնորհակալություն հայտնելու օգուտները, քանի որ այն մեզ հիշեցնում է Իր բնավորության մասին: Սաղմոսները բազմիցս կոչ են անում Աստծո ժողովրդին, որ շնորհակալություն հայտնեն Իրեն, «Որովհետև բարի է Տերը, և հավիտյան է նրա ողորմությունը» (Սաղմ. 100.5), շնորհակալ լինել Իր ողորմության և մարդկանց որդիներին արած իր սքանչելիքների համար (107. 8,15,21,31): Երբ Պողոս առաքյալը փակեց փիլիպպեցիներին ուղղված իր նամակը, որն ինքնին շնորհակալական նամակ էր իրեն աջակցած եկեղեցուն, երախտագիտության աղոթքները կապեց Աստծո խաղաղության հետ, որ «ամեն մտքից վեր է» (4.7):

Կենտրոնանալով Աստծո և Նրա բարության վրա՝ տեսնում ենք, որ մենք կարող ենք ցանկացած իրավիճակում շնորհակալություն հայտնելով աղոթել:

Աղոթք - Երկնքում բնակվող Հայր, շնորհի՛ր ինձ երախտագիտության ու շնորհակալության ոգի, որպեսզի հաղթահարեմ ինձ հանդիպած խնդիրները:

Եթե դասրաս եմ մեր կարիքներն ու հոգսերը Տիրոջ մոտ բերելու, կկարողանամք ուրախ արսով շնորհակալություն հայտնել:

Գնա՛ այն երկիրը, որ ես ցույց կտամ քեզ:....Եվ Աբրամը գնաց: (ԾՆՈՂ. 12. 1,14)

ՔՈ ԲԱԺԻՆԸ ԵՎ ԱՍՏԾՈՆ ԲԱԺԻՆԸ

Ընկերոջս՝ Ջենիսին առաջարկել էին տնօրինել իր աշխատավայրի բաժանմունքներից մեկը: Նա չէր համարձակվում ընդունել առաջարկը, որովհետև մտածում էր, թե չունի համապատասխան փորձառություն: «Ինչու՞ ես ինձ այստեղ դնում, եթե պիտի ձախողվեմ», - հարցրեց նա Աստծուն:

Ավելի ուշ նա կարդաց Ծննդոց 12-ում Աստծո՝ Աբրամին արած կոչի մասին: Նրա բաժինն էր «գնալ Աստծո ցույց տված երկիրը: Եվ Աբրամը գնաց» (Հմ.1,4): Սա արմատական քայլ էր: Աստված խնդրեց վստահել Իրեն՝ հետևում թողնելով իր իմացածը, որովհետև մնացածն անելու էր Ինքը: Նա խոստանում էր ինքնություն, համբավ, սքանչելի անուն, օրհնություն, մեծ ազգ դառնալու հեռանկար: Աբրահամը մի քանի սխալներ արեց այդ ճանապարհին, բայց «հավատով հնազանդվեց, երբ կանչվեց գնալու այն տեղը, որն իբրև ժառանգություն էր ստանալու: Նա ելավ, գնաց՝ առանց իմանալու, թե ուր է գնում» (Եբ.11.8):

Այս գիտակցումը հանդարտեցրեց ընկերոջս սիրտը: «Ես չպետք է անհանգստանամ աշխատանքս հաջողելու համար, - մտածեց նա, - այլ պետք է կենտրոնանամ Աստծո վրա, վստահեմ Նրան, որպեսզի կարողանամ կատարել պարտականություններս»:

Քանի որ Աստված մեզ տալիս է անհրաժեշտ հավատքը, ուրեմն վստահենք Նրան մեր ամբողջ կյանքում:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, ուզում եմ Քեզ հանձնել վախերս ու կասկածներս, որպեսզի հաջողություն ունենամ իմ գործերում ու պարտականություններում: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ կատարել իմ բաժինը, ինչպես Դու ես կատարում Քո բաժինը: Ամեն:

Մտահոգություններ, վախեր ու կասկածներ մեր գործունեության ընթացքում մի՞տ էլ կլինեն: Պե՛տ է վստահել ու աղավիհնել Աստծուն:

Որովհետև հազար տարին քեզ համար մեկ օրվա պես է, որ երեկ անցավ: (Սաղմ. 90.4)

ԿՅԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1 990թ. Ֆրանսիացի հետազոտողները համակարգչային խնդիր ունեցան: Պատճառը Ջին Գալմենտի տարիքն էր: Նա 115 տարեկան էր, իսկ համակարգչային ծրագրում այդ տվյալը չկար: Ծրագրավորողները ենթադրել էին, որ ոչ մեկն այդքան երկար չի ապրի, մինչդեռ իրականում այդ մարզն ապրեց 122 տարի:

Սաղմոսերգուն գրում է. «Մեր կյանքի տարիները յոթանասուն են, և եթե զորությամբ ութսուն տարի էլ լինեն» (Սաղմ. 90.10): Սա փոխաբերական մի ձև է՝ ասելու, թե որքան էլ երկար ապրենք, նույնիսկ եթե Ջին Գալմենտի տարիքին էլ հասնենք, մեր կյանքն այս աշխարհում այնուամենայնիվ սահմանափակ է: Այն գերիշխան Աստծո ձեռքերում է (Հմ.5): Սաղմոսերգուն հիշեցնում է, թե իրականում ինչ է «Աստծո ժամանակը»՝ ասելով. «Հազար տարին քեզ համար մեկ օրվա պես է, որ երեկ անցավ» (Հմ.4):

Հիսուս Քրիստոսի անձի մեջ «կյանքի տևողությունը» բոլորովին նոր իմաստ է ստացել. «Որդուն հավատացողը հավիտենական կյանք ունի» (Հովհ. 3.36): «Ունի» բառը ներկա ժամանակով է դրված, այսինքն՝ վերաբերում է այս պահին: Ասել է, թե մեր ֆիզիկական արցունքների ու դժվարությունների ժամանակ մեր ապագան օրհնված է ու կյանքի տևողությունն անսահման է:

Դրանով էլ մենք ուրախանում և սաղմոսերգուի հետ աղոթում ենք. «Քո ողորմությամբ կշտացրու՝ մեզ առավոտից» (Սաղմ. 90.14):

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, երբեմն այս կյանքը դժվար է թվում, բայց ես ուրախանում եմ ինձ համար Քո նախատեսության առիթով:

Բավարարի՛ր ինձ այսօր Քո անվրեպ սիրով: Ամեն:

Եթե մտառոգ ես կյանքիդ և նրա սևողության համար, թող Հիսուսի ներկայությունը մխիթարի քեզ և հավիտենության հույսով լցնի:

Երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: (Չռոմ. 5.8)

ԴՈՒ ԴԱՐՁՅԱԼ ՍԻՐԵԼՈՒ՞ ԵՍ ԻՆՁ

Տասնամյա Լի-Լին վերջապես որդեգրվեց, բայց դեռ մտավախություններ ուներ: Որբանոցում, որտեղ նա հասակ էր առել, մի փոքր սխալի համար պատժվել էր: Իրեն որդեգրող կնոջը, որն իմ ընկերուհին է, նա հարցրեց.«Մայրի՛կ, սիրու՞մ ես ինձ»: Երբ ընկերուհիս պատասխանեց, որ սիրում է, նա շարունակեց.«Եթե սխալ բան անեմ, դու դարձյալ սիրելու՞ ես ինձ»:

Գուցեև առանց արտահայտվելու, բայց մեզանից շատերը կարող են նույն հարցը տալ, երբ զգան, որ հուսախաբ են արել Աստծուն: Որովհետև ձախողումներ, նույնիսկ մեղանշումներ երբեմն լինում են մեր կյանքում: Եվ ուզում ենք իմանալ, թե արդյո՞ք մեր սխալներն ազդում են մեր հանդեպ Աստծո սիրո վրա:

Հովհաննու 3.16-ը վստահեցում է Աստծո անվախճան սիրո մասին: Նա իր Որդուն տվեց, որ մեռնի մեր փոխարեն, որպեսզի մենք հավատանք ու հավիտենական կյանք ստանանք: Իսկ ի՞նչ կարող է պատահել, եթե հուսախաբ անենք Նրան: Պատասխանն արդեն ունենք. «Երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հռոմ. 5.8): Եթե նա մեզ սիրում է մեր ամենավատ վիճակում, ինչպե՞ս կարող ենք կասկածել այդ սիրոն, երբ մենք Նրա զավակներն ենք:

Երբ մենք ինչ-որ բան ենք անում, մեր հայրն ուղղում ու սիրով խրատում է: Դա մերժում չէ (8.1), դա սեր է (Եբ. 12.6): Եկե՛ք ապրենք որպես Աստծո սիրո զավակներ՝ հանգիստ ու վստահ լինելով, որ Նրա սերը մեր հանդեպ հաստատուն է ու հավիտենական:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ Քո հաստատուն ու անփոփոխ սիրո համար: Ամեն:

Հասկանալով Ասծո սերը՝ զորանում եմք ու հնազանդվում Նրան: Իսկ մեղքի մասին մեր Տեսակետը փոխվում է:

Նա պաշտպանում է որբի ու որբեայրու իրավունքը, սիրում է պանդուխտին և նրան տալիս է հաց ու հագուստ: (Բ.Օր. 10.18)

ՏՂԱ ԵՐԵՆԱԼՆ

Մեկ տարուց ավելի մանկանը կոչում էին Տղա երեխա: Նրան հիվանդանոցի բակում, պայուսակի մեջ փաթաթած, գտել էր անվտանգության աշխատակիցը: Սոցիալական ծառայություններն անմիջապես հրավիրել էին մարդկանց, որոնք կարող էին երեխայի համար ընտանիք դառնալ: Մի զույգ որդեգրեց տղային ու անվանեց Գրեյսըն: Այժմ նա մի հիասաքանչ երեխա է, որի հետ հարաբերվելով՝ երբեք չեք մտածի, որ իսկական ծնողները նրան թողել են:

Կյանքի վերջում Մոլսեսը տվեց Աստծո նկարագիրը և այն, ինչ նա արել է Իսրայելի ժողովրդի համար: «Տերը միայն քո հայրերին հավանեց, որ սիրի նրանց» (Բ. Օր. 10.15): Այդ սերը լայն շրջանակ ուներ.«Նա պաշտպանում է որբի ու որբեայրու իրավունքը, սիրում է պանդուխտին և նրան տալիս է հաց ու հագուստ» (Հմ.18): «Նա է քո պարծանքը և նա է քո Աստվածը» (Հմ.21):

Լինի դա որդեգրության թե ծառայության ու սիրո մեկ այլ ձևով, մենք բոլորս կոչված ենք արտացոլելու Աստծո սերը: Տղային որդեգրող սիրալիր զույգը դարձավ այն ձեռքերն ու ոտքերը, որոնք Աստված օգտագործեց իր սերը աննկատ մնացած մեկին փոխանցելու համար: Մենք էլ կարող ենք ծառայել որպես նրա ձեռքեր ու ոտքեր:

Աղոթք - Երկնավոր Հայր, ողորմի՛ր որբերին և օգնի՛ր ինձ, որ այսօր լինեմ Քո ձեռքերն ու ոտքերը: Ամեն:

Ասված իր սերը մեզ հայտնում է մեծ ու փոքր սարքեր ձևերով: Մենք էլ այդ սերը փոխանցենք ուրիշներին:

Ես կայցելեմ ձեզ և կկատարեմ ձեզ համար իմ բարի խոսքը: (Եր. 29.10)

ԿՅԱՆՔԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Աղջիկս մի զույգ ընտանի խեցեգետին էր նվեր ստացել և մի ապակե տարայի մեջ ավազ լցնելով՝ նրանց տեղավորեց այդտեղ: Տարայի մեջ լցրեց նաև ջուր, սպիտակուց ու բանջարեղենի մնացորդներ, որպեսզի սնվեն: Ամեն ինչ լավ էր թվում մինչև այն պահը, երբ մի օր նրանք անհետացան: Ամենուր փնտրելուց հետո իմացանք, որ այդ կենդանիները հավանաբար ավազի տակ են մտել, որտեղ կմնան երկու ամիս և կփոխեն իրենց արտաքին կմախքը:

Երկու ամիս անց ես արդեն անհանգստանում էի, թե խեցեգետիններն այլևս դուրս չեն գա, ու փնտրում էի կենդանության նշաններ: Վերջապես նրանք դուրս եկան:

Իմ այդ ապրումները հարց են առաջացնում. արդյո՞ք Իսրայելը կասկածում էր, որ Աստծո մարգարեությունն իրենց համար պիտի կատարվի, երբ աքսորված ապրեն Բաբելոնում: Արդյոք նրանք հուսահատվե՞լ են, մտածել, որ հավիտյան այդտեղ կմնան: Երեմիայի միջոցով Աստված ասաց. «Ես կայցելեմ ձեզ և կկատարեմ ձեզ համար իմ բարի խոսքը, որպեսզի ձեզ վերադարձնեմ այստեղ» (Եր. 29.10): Իհարկե, յոթանասուն տարի անց Աստված Պարսից Կյուրոս թագավորին ստիպեց թույլ տալ հրեա ժողովրդին վերադառնալ ու վերականգնել իրենց տաճարը Երուսաղեմում (Եզր.1.1-4):

Սպասումի մեջ, երբ թվում է՝ շարժ չկա, Աստված մեզ չի մոռանում: Քանի որ Սուրբ Հոգին օգնում է մեզ զարգացնելու համբերություն, մենք կարող ենք վստահ լինել, որ Նա հույս տվողն է, խոստում պահողն ու ապագան վերահսկողը:

Աղոթք - Աստված, օգնի՛ր ինձ, որ հավատամ Քեզ, երբ սպասում եմ: Հավատում եմ, որ ներգրավված ես իմ կյանքում և հոգում ես իմ վիճակի մասին: Ամեն:

Մղասման մեջ ինչդե՞ս կարող է մեզ օգնել Ասծո նկարագիրը հասկանալը: Ի՞նչ կադ կա կասկածի ու հավաստի միջև:

Այն օրը դուք կիմանաք, որ ես իմ Դոր մեջ եմ, և դուք՝ իմ մեջ, իսկ ես՝ ձեր մեջ: (Դովի. 14.20)

ՄԵՐ ՄԵՋ ԲՆԱԿՎՈՂ ՔՐԻՍՏՈՍԸ

Անգլիացի քարոզիչ Ֆ. Մեյերը ձվի օրինակով է նկարագրում «Հիսուսի բնակության խորը փրկիստփայությունը»: Բեղմնավորված դեղնուցը, իբրև մի կյանքի փոքր մանրէ, օրեցօր աճում է ու մեծանում, մինչև ճուտիկի ձևավորվելը: Այդպես էլ Հիսուսը Սբ. Հոգու միջոցով զալիս է մեզ հետ ապրելու և մեզ փոխելու: Մեյերն ասում է.«Այսուհետև Քրիստոսը կաճի, կմեծանա, կներառի Իր մեջ մնացած ամեն ինչ ու կձևավորվի ձեր մեջ»:

Իմանալով, որ իր խոսքերը չեն կարող ամբողջությամբ փոխանցել հավատացյալների մեջ Սուրբ Հոգու միջոցով ապրող Քրիստոսի հրաշալի իրականությունը, նա ներողություն է խնդրում Հիսուսի ճշմարտությունները անկատար ձևով ասելու համար և հորդորում իր ունկնդիրներին՝ թեկուզ անկատար ձևով, բայց ուրիշներին հայտնել Հիսուսի ասածը. «Այն օրը դուք կիմանաք, որ ես իմ Հոր մեջ եմ, և դուք՝ իմ մեջ, իսկ ես՝ ձեր մեջ» (Հովհ. 14.20): Հիսուսն այս խոսքերն ասաց, երբ վերջին անգամ ընթրում էր իր բարեկամների հետ և ուզում էր նրանք իմանան, որ ինքն ու իր Հայրը կսիրեն նրանց, կգան ու բնակություն կհաստատեն նրանց մոտ (Հմ.23): Դա հնարավոր է, որովհետև Հոգու միջոցով Հիսուսն ապրում է իրեն հավատացողների մեջ՝ ներսից դուրս փոխելով նրանց:

Անկախ նրանից, թե ինչպես ենք պատկերացնում, մենք ունենք Քրիստոս, որ ապրում է մեր մեջ, առաջնորդում մեզ և օգնում՝ ավելի շատ նմանվելու Իրեն:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, Դու և՛ Աստված ես, և՛ մարդ: Շնորհակալ եմ, որ Քո անձը՝ զոհաբերում ես, որպեսզի ես կարողանամ կոչվել Քո զավակը: Ամեն:

Երբ Դիսուսը բնակվի մեր մեջ, մե՞ծ փոփոխություն կլինի, և մեն՞դ կդառնանք Իր մարմնի անդամները:

Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ: (ԾՆ. 1.3)

ԱՍՏՎԱԾ ԽՈՍԵՑ

1 876թ. գյուտարար Ալեքսանդր Գրահամ Բելը առաջին անգամ հեռախոսով խոսեց: Նա զանգահարեց իր օգնական Թոմաս Վալթսոնին և ասաց. «Ե՛կ այստեղ: Ուզում եմ տեսնել քեզ»: Թեև խզխզոցով ու ոչ այնքան հստակ, սակայն օգնականը լսեց Բելի ասածը: Այդ բառերը փաստորեն մարդկության հաղորդակցության մի նոր էջ էին նշանավորում:

«Անձև ու դատարկ» (ԾՆ.1. 2) երկրի վրա հաստատելով առաջին օրվա լուսաբացը՝ Աստված ասաց Սբ. Բքում գրված Իր առաջին խոսքը. «Թող լույս լինի» (Հմ.3): Այս խոսքը ստեղծագործական մեծ ուժ ունի: Նա խոսեց, և այն, ինչ Նա ասաց, եղավ (Սաղմ. 33. 6,9): Աստված ասաց. «Թող լույս լինի», և այդպես էլ եղավ: Նրա խոսքերը անմիջապես հաղթանակ բերին, երբ խավարն ու քաոսը իրենց տեղը գիջեցին լույսին և կարգուկանոնին: Լույսը Աստծո պատասխանն է խավարի գերակայությանը: Եվ երբ Նա ստեղծեց լույսը, տեսավ, որ «բարի է» (ԾՆ. 1.4):

Աստծո առաջին խոսքերը շարունակում են ազդեցիկ լինել հավատացյալների կյանքում: Ամեն նոր օրվա բացվելու հետ Աստված մեր կյանքում վերահաստատում է իր ասած խոսքերը: Երբ խավարը ուղղակի և անուղղակի կերպով տեղը գիջում է Նրա պայծառ լույսին, մենք էլ գովաբանենք Նրան, և ընդունենք, որ Նա կանչել և իսկապես տեսնում է մեզ:

Աղոթք - Լույսի արարիչ, գովաբանում եմ քեզ, որ իմ կյանքում Քո ներկայությամբ բացում ես աչքերս և ցրում այս աշխարհի խավարը: Ամեն:

Խավարից հետ եկող ամեն բացվող օր ժեսնելու ենք Ասծո սերն ու հավասարությունը: Թող Ասծո լույսը բացի մեր աչքերը՝ Իրեն ժեսնելու համար:

Գիտեն նաև այնպիսի մարդու..., անպատմելի բաներ լսեց, որ մարդը չպետք է խոսի դրանց մասին: (Բ.Կորնթ. 12. 3-4)

ԽՈՍՔԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Ի տալացի աստվածաբան Թոմաս Աքվինացին (1225-1274) եկեղեցու հայտնի պաշտոնյաներից էր: Սակայն մահից ընդամենը երեք ամիս առաջ մի բան ստիպեց նրան անավարտ թողնել իր կյանքի ամենամեծ աշխատանքը, որ հայտնի է «Աստվածաբանությունից ամփոփում» անունով: Մտածելով իր Փրկչի կոտորված մարմնի ու թափված արյան մասին՝ Աքվինացին պնդում էր, որ իրեն մի տեսիլք է երևացել, որից հետո անիմաստ է թվում խոսելը: «Ես այլևս չեմ կարող գրել: Ես տեսա բաներ, որոնք իմ գրածները դարձնում են ծղոտի նման»:

Աքվինացուց առաջ Պողոսն էր տեսել այդպիսի տեսիլք: Կորնթացիներին ուղղված երկրորդ նամակում նա նկարագրում է իր այդ փորձառությունը՝ գրելով. «Գիտեմ նաև այնպիսի մարդու, չգիտեմ՝ մարմնով, թե առանց մարմնի, Աստված գիտի, հափշտակվեց դրախտի մեջ ու անպատմելի բաներ լսեց» (Բ.Կորնթ. 12. 3-4): Պողոսն ու Աքվինացին մեզ են թողնում խորհելու բարություն օվկիանոսի մասին, որը ոչ բառերով, ոչ էլ բանականությամբ կարելի է արտահայտել: Աքվինացու տեսիլքը նրան ստիպեց հուսահատվել ու կիսատ թողնել իր աշխատանքը, որպեսզի արդար լիներ Աստծո հանդեպ, որը իր Որդուն ուղարկել էր մեզ համար խաչվելու: Ի հակադրություն նրա՝ Պողոսը շարունակեց գրել, բայց գիտակցելով, որ դա չի կարող ավարտել միայն սեփական ուժով: Բոլոր դժվարությունների ժամանակ, որ հանդիպում էր Պողոսը՝ ծառայելով Քրիստոսին (Բ.Կորնթ. 11. 16-33, 12. 8-9), նա կարող էր հետ նայել ու տեսնել, թե իր տկարության մեջ կար չնորհք ու բարություն, որոնք գերազանցում էին իր խոսքերն ու զարմանքը:

Աղոթք - Երկնքում բնակվող Հայր, խնդրում եմ ինձ այսօր քաջություն տուր, փնտրելու Քո ներկայության անբացատրելի ուժը իմ տկարության մեջ: Ամեն:

Հարցեր ենմ ունենում, որոնք անեծքի են մտնում, բայց Աստված ցույց է տալիս Իր բարությունը այնպիսի ձևերով, որ մենք չենք կարող նկարագրել:

Արդարն ուրախ պիտի լինի Տիրոջով և իր հույսը դնի նրա վրա, և ուղիղ սրտով բոլոր մարդիկ պիտի պարծենան: (Մաղմ. 64.10)

ՈՒՐԱԽԱՆԱԼՈՒ ԱՌԻԹՆԵՐ

Երբ տիկին Գլենդան մտավ եկեղեցու տարածք, բոլորն ուրախացան: Նա նոր էր ապաքինվել բարդ վիրահատությունից հետո: Պաշտամունքից հետո նա մոտեցավ ինձ՝ մեր սովորական բարեողջունի համար: Ես շնորհակալություն հայտնեցի Աստծուն այն տարիների համար, երբ տիկին Գլենդան ինձ քաջալերել է, ուղղել, հետս վշտացել: Նա նույնիսկ մի անգամ ներողություն խնդրեց, որ ակամա վիրավորել է ինձ: Հաճախ հրավիրում է ինձ իր մոտ, լսում իմ դժվարությունների մասին և հիշեցնում, որ մենք Աստծուն փառաբանելու շատ առիթներ ունենք: Գլենդա մայրիկը, ինչպես թույլ է տալիս դիմել իրեն, գրկեց ինձ ու ասաց. «Բարև, ձագուկ»: Մենք կարճ զրույց ունեցանք, միասին աղոթեցինք, որից հետո նա զնաց՝ ինչպես միշտ մրմնջալով, քթի տակ երգելով ու փնտրելով օրհնության կարոտ մեկ ուրիշին:

64-րդ սաղմոսում Դավիթն իր բողոքներով ու մտահոգություններով համարձակորեն դիմեց Աստծուն (Հմ.1), բարձրաձայնեց իր վրդովմունքը ամենուր տիրող չարություն ու անօրինություն համար (Հմ. 2-6): Բայց նա չկորցրեց վստահությունը Աստծո զորության կամ Նրա տված խոստումների հավաստիություն հանդեպ (Հմ.7-9): Նա գիտեր, որ մի օր «արդարն ուրախ պիտի լինի Տիրոջով և իր հույսը դնի նրա վրա, և ուղիղ սրտով բոլոր մարդիկ պիտի պարծենան» (Հմ.10):

Հիսուսի վերադարձին սպասելիս դժվարություններ լինում են: Բայց մենք առիթ ունենք ուրախանալու Աստծո ստեղծած ամեն օրով:

Աղոթք - Ամենակարող Աստված, շնորհակալ եմ, որ ինձ համար ուրախանալու առիթներ են Քո մասին մտքերը, Քո արածների ու խոստումների վերաբերյալ հիշեցումները: Ամեն:

Անկեղծ լինենք ու յեսենք, թե Աստված ուրախանալու ինչ առիթներ է սվել և խրախուսենք ուրիշներին, որ իրենք էլ ուրախանան:

Շամբերի մեջ տեսավ տապանակը....,բացեց և տեսավ երեխային: (Ել. 5-6)

ԱՍՏՎԱԾ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ Է

Քեյվինի ու Քիմբերլեյի համար սարսափելի շաբաթ էր: Քեյվինի նուպաներն էին սաստկացել: Նրան հիվանդանոց տեղափոխեցին: Խնամատար մի հաստատությունից նրանց որդեգրած չորս փոքր երեխաները համաճարակի պատճառով մնացել էին տանը, իսկ Քիմբերլեյը չէր կարողանում տանը եղածով կերակուր պատրաստել: Տարօրինակ կերպով այդ պահին սիրտն էլ գազար էր ուզում:

Մեկ ժամ անց դուռը թակեցին, ու նրանց ընկերները ճաշ բերեցին, որի մեջ գազար կար: Ասում են՝ սատանան մանրամասնությունների մեջ է: Ո՛չ: Հրեաների պատմության մի դրվագը ցույց է տալիս, որ Աստված է մանրամասնությունների մեջ: Փարավոնը հրամայել էր. «Մնված ամեն տղայի գե՛տը նետեք, իսկ ամեն աղջկա ո՛ղջ թողեք» (Ել. 1.22): Այդ ցեղասպան գործողությունը հետաքրքիր մի մանրամասն ունի: Մովսեսի մայրը իսկապես Նեղոսը «նետեց» իր երեխային, բայց այնպիսի հնարքներով, որ փարավոնի աղջիկը գտավ նրան, փրկեց և նույնիսկ կերակրելու տվեց իսկական մորը՝ դրա համար վճարելով (Հմ.9): Այդ երեխային Աստված օգտագործեց իր ժողովրդին փրկելու համար:

Մի օր այս նորաստեղծ հրեական ազգից գալիս է խոստացված տղան, որի պատմությունը լի էր սքանչելի մանրամասնեքով ու աստվածային հեզնանքներով: Բայց այդ ամենի մեջ կարևորն այն էր, որ Հիսուսը մեզ հանելու էր մեր մեղքի ստրկությունից:

Նույնիսկ մոլթ ժամանակներում Աստված մանրամասնությունների մեջ է:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Դու երևում ես ինչպես փոքր, այնպես էլ մեծ բաների մեջ: Ամեն:

Կարելի է թվել կյանքի շատ մանրամասնություններ, որոնցում տեսնելով Աստուծո՛ւ ամրադնդվում է մեր հավասը:

Քո եղբոր օրը, նրա դժբախտության օրը չպիտի չարախնդայիր: (Աբ.1.12)

ԸՆՏՐԵԼ ԿԱՐԵԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հեռուստատեսային մի հաղորդման հիմնական կազմերը նվիրված էին ձյան պատճառով եղած պատահարներին: Տեսանյութում երևում էր, թե մարդիկ ինչպես են դահուկներով սահում տանիքներից ու ընկնում սառույցներին՝ երբեմն առաջացնելով մարդկանց ծիծաղը: Հատկապես երբ այդ քայլն արվում էր ցուցադրելու նպատակով:

Այդպիսի զվարճալի տեսանյութերը վատ բան չեն, բայց նաև կարող են բացահայտել որոշ բաներ մեր մասին: Օրինակ այն, թե մենք ուրիշների դժբախտության ժամանակ ծիծաղում ենք, կամ օգտվում ենք դրանից: Նման մի պատմություն երկու հակառակորդ ազգերի՝ Իսրայելի ու Եդովմի մասին կա Աբդիայի մարգարեության մեջ: Երբ Աստված որոշեց պատժել Իսրայելի ժողովրդին՝ իր մեղքերի համար, Եդովմն ուրախացավ: Նրանք օգտվեցին իսրայելցիների ունեցվածքից, կողոպտեցին քաղաքները, աջակցեցին նրանց թշնամիներին (Աբ. 1.13-14): Աբդիա մարգարեի միջոցով Եդովմին հասավ հետևյալ զգուշացումը. «Քո եղբոր օրը, նրա դժբախտության օրը չպիտի չարախնդայիր: Որովհետև բոլոր ազգերի վրա մոտիկ է Տիրոջ օրը» (Հմ.12,15):

Երբ տեսնում ենք ուրիշների դժվարություններն ու տառապանքները, նույնիսկ եթե դրանց մեղավորներն իրենք են, պետք է գոռոզության փոխարեն ընտրենք կարեկցանքը: Որովհետև այս աշխարհի թագավորությունը Իրենը պետք է լինի (Հմ.21): Արգարության ու ողորմության գորություն միայն ինքը ունի:

Աղոթք - Ողորմած Աստված, ների՛ր ինձ իմ ինքնահավան զգացումների համար: Շնորհակալ եմ Քո արդարության ու կարեկցանքի համար: Ամեն:

Ուրիշների դժվարության ժամանակ դե՛ս է սիրալիք ու կարեկցից վերաբերմունք ցուցաբերել:

Ամեն ոք, ով զուր տեղն իր եղբոր վրա բարկանա, դատաստանի կենթարկվի: (Մատթ. 5.22)

ԲԱՐԿԱՑԱԾ ՍԻՐՏ

Պաբլո Պիկասոյի «Գերնիկա» կտավը, որ ստեղծվել է 1937 թվականին, նրա գլուխգործոցներից է: Դրա ստեղծման առիթը իսպանական հեղափոխության և այդ երկրում քաղաքացիական կռիվների հետևանքով Գերնիկա քաղաքի ուժեղացած ուժն էր, որի հետևանքով այն ավերվեց, իսկ հազարավոր բնակիչներ զոհվեցին: Պիկասոյի այս աշխատանքը համաշխարհային հանրության ուշադրությունն էր հրավիրում պատերազմների, խաղաղ բնակավայրերի ուժեղացումների, մեկը մյուսին ոչնչացնելու անբարոյական մրցավազքի վրա: Այդ իսկ պատճառով այն դարձել էր ժամանակի բուռն քննարկումների նյութ:

Նրանք, ովքեր վստահ են, որ երբեք դիտավորյալ արյուն չեն թափի, պետք է հիշեն Հիսուսի այս խոսքերը.«Լսել եք, թե ինչ սավեց նախնիներին.«Մի՛ սպանիր», իսկ ով սպանի, դատաստանի կենթարկվի: Բայց ես ասում եմ ձեզ.«Ամեն ոք, ով զուր տեղն իր եղբոր վրա բարկանա, դատաստանի կենթարկվի» (Մատթ. 5. 21-22): Սիրտը կարող է մարդասպան լինել՝ առանց իրականում սպանություն կատարելու:

Երբ մեզ սպառնում է ուրիշների հանդեպ անզուսպ բարկությունը, մենք անպայման կարիք ենք ունենում, որ Հոգին լցնի ու վերահսկի մեր սրտերը, որպեսզի մեր մարդկային հակումները փոխարինվեն իր պտուղներով (Փաղ. 5. 19-23): Այդ դեպքում մեր հարաբերությունները կնշանավորվեն սիրով, ուրախությունով ու խաղաղությամբ:

Աղոթք - Հայր, երբ ուզում եմ ինձ վիրավորողներին հարվածելով պատասխանել, օգնի՛ր ինձ, որ կարողանամ սիրով պատասխանել: Ամեն:

Առողջ հարաբերություն մշակելու համար թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգին իր տղուդը քա:

Լրանով սովորեցիք...նոր մարդուն հագնել: (Եփ. 4. 21-24)

ՆՇԱՐԻՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Մեծացած լինելով Հարավային Լոնդոնի խռովահույզ մի ընտանիքում, Գլոդը 15 տարեկանում արդեն սկսել էր մարիխուանա, իսկ 25-ում՝ հերոին վաճառել: Իր գործունեությունը համար ծածկի կարիք ունենալով՝ նա դարձավ երիտասարդների խորհրդատու: Այստեղ շուտով հրապուրվեց իր տնօրենով, որը հավատում էր Հիսուսին, և ուզեց Նրա մասին իմանալ ավելին: Քրիստոնեական մի դասընթացի մասնակցելուց հետո նա «համարձակվեց» Քրիստոսին հրավիրել իր կյանք: «Ձգացի մի ողջունելի ներկայություն: Անմիջապես մարդիկ իմ մեջ փոփոխություն տեսան: Ես աշխարհի ամենաերջանիկ թմրանյութ վաճառողն էի»: Բայց Հիսուսը այդքանով չբավարարվեց: Երբ լողը հաջորդ օրը կշռում էր կոկաինի հերթական քանակը, որ վաճառի, հանկարծ մտածեց.«Սա խելագարություն է: Ես թունավորում եմ մարդկանց»: Եվ հասկացավ, որ պետք է դադարեցնի այդ գործունեությունը և այլ աշխատանք գտնի: Սուրբ Հոգու գործությամբ նա անջատեց հեռախոսները և այլևս այդ կյանքին չվերադարձավ: Այսպիսի փոփոխությունը նկատի ունեւր Պողոսը, երբ եփեսացիներին կոչ էր անում չապրել Աստուծոց անջատ, հորդորում էր.«հանել իրենց վրայից հին ընթացքն ունեցող մարդուն, որ ապականված է խաբուսիկ ցանկություններով և հագնել նոր մարդուն, որ Աստծո պատկերի համաձայն է ստեղծված՝ ճշմարտությամբ և սրբությամբ, որ արդարությունից է» (Եփ. 4. 22,24): Պողոսի գործածած բայածևը ենթադրում է, որ մենք կանոնավոր կերպով պետք է հագնենք նոր մարդուն: Ինչպես Գլոդի պարագայում, Սուրբ Հոգին հաճուքով օգնում է մեզ ապրել «մեր նոր անձով» և ավելի նմանվել Հիսուսին:

Աղոթք - Սիրող Գայր, շնորհակալ եմ, որ չես անտեսում մարդկանց: Ցույց տուր ինձ, թե ինչպես կարող եմ ավելի նմանվել Քեզ: Ամեն:

Ասված փոխում է մեզ ու մարդկանց, նույնիսկ եթե դա անհնար է թվում: Ինքը մեր մեջ կատարում է ծամարիտ փոփոխությունը:

Դավիթն էլ արագ վազեց պատերազմի ասպարեզը՝ փղշտացուն դիմավորելու: (Ա. Թագ. 17.48)

ՓԱԽՉԵԼ ՀՆԴԿԱՀԱՎԵՐԻՑ

Երկու վայրի հնդկահավեր կանգնած էին գյուղական ճանապարհի կենտրոնում: «Որքա՞ն կարող եմ մոտենալ», - մտածեցի ու վազքս քայլի փոխեցի, հետո կանգնեցի: Հաջողվեց: Հնդկահավերը սկսեցին գալ դեպի ինձ ու շարունակել քայլը: Շուտով նրանց գլուխները սկսեցին դիպչել թիկունքիս: Ես սկսեցի վազել:

Որքա՞ն արագ փոխվեցին դերերը, որսերը դարձան որսորդներ: Իսկ ես հիմարաբար մտածում էի, որ այդ թռչուններից պետք չէ վախենալ: Հասկանալով, սակայն, որ կարող եմ վնասվել, ես փախա հնդկահավերից:

Դավիթն էլ վտանգավոր չէր թվում, ուստի Գողիաթը ծագրեց նրան ու կանչեց. «Ե՛կ ինձ մոտ, և ես քո մարմինը կտամ երկնքի թռչուններին ու դաշտի գազաններին» (Ա.Թագ. 17.44): Դավիթը փոխեց իրավիճակը, երբ ինքը դարձավ նախաձեռնողը: Նա գնաց Գողիաթի մոտ ոչ թե այն պատճառով, որ հիմար էր, այլ որովհետև վստահում էր Աստծուն: Նա բացական էր. «Այսօր... ամբողջ երկիրը կիմանա, որ Իսրայելն Աստված ունի» (Հմ.46): Գողիաթը զարմացած էր այս համարձակ պահվածքից: Հետո մահացու հարվածը հասավ ճակատին, ու նա տապալվեց:

Փոքր կենդանիների համար բնական է մարդկանցից ու հովիվներից թաքնվելը: Մեզ համար բնական է մեր խնդիրներից խուսափելը: Իսկ ինչու՞ բավարարվել այդ բնական վիճակով: Կա՞ Աստված Իսրայելում: Եթե հավատում ես, որ կա, ուրեմն նրա գորուծյամբ վազի՛ր դեպի կռիվը:

Աղոթք - Հայր, երբ ես վախենամ, հիշեցրու՛ ինձ, որ Քո Հոգին իմ մեջ է: Օգնի՛ր ինձ, որ կարողանամ Քո զորությանը վազել: Ամեն:

Խնդիրներ ու հարցեր կունենանք, որոնցից կուզենանք փախչել: Սակայն վստահենք Ասծուն ու Նրա զորությանը:

Ուրիշ ճանապարհով գնացին իրենց երկիրը: (Մատթ. 2.12)

ՎՍՏԱՅԵԼ ԱՍՏՈՆ ԶԵՌԱՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Անձանոթ տեղ էինք գնում, և ամուսնուս թվաց, թե GPS-ի ցույց տված ճանապարհը սխալ է: Չորս գծանոց մայրուղի մտնելուց հետո համակարգը հուշեց դուրս գալ ու երթևեկությունը շարունակել զուգահեռ միակողմանի ճանապարհով: «Ես վստահում եմ GPS-ին», -ասաց Դենը: Մոտ տասը կմ գնալուց հետո նկատեցինք, որ զուգահեռ մայրուղու երթևեկը աստիճանաբար դանդաղեց ու կանգ առավ: Պատճառը մեծ շինարարությունն էր: Իսկ մեզ առաջարկված ուղին մեզ անարգել տանում էր դեպի նպատակակետ: «Մենք չենք տեսնում, բայց GPS-ը տեսնում է», -հաստատեց ամուսինս, կամ ինչպես համաձայնեցինք երկուսով՝ «Այնպես, ինչպես տեսնում է Աստված»:

Իմանալով, թե ինչ է սպասվում, Աստված ուղղությունների փոփոխություն մասին հայտնեց իմաստուն մոզերի երազում, որոնք Արևելքից եկել էին երկրպագելու մանուկ Հիսուսին՝ «հրեաների նոր ծնված թագավորին» (Մատթ.2.2): Հերովդես թագավորը, անհանգստացած «մրցակից» թագավոր ունենալու լուրից, խաբեց մոզերին և ուղարկեց Բեթղեհեմ՝ ասելով. «Գնացե՛ք, ստույգ տեղեկացե՛ք երեխայի մասին և երբ գտնեք, հայտնե՛ք ինձ, որպեսզի ես էլ գամ, երկրպագեմ նրան» (Հմ.8): Մոզերը, երազում Հերովդեսի մոտ չվերադառնալու հրաման ստանալով, ուրիշ ճանապարհով գնացին իրենց երկիրը» (Հմ.12): Աստված կառաջնորդի նաև մեր քայլերը: Անցնելով կյանքի մայրուղիներով՝ մենք կարող ենք վստահ լինել, որ Նա տեսնում է առաջիկան և «կուղղի քո ճանապարհները» (Առ. 3.6):

Աղոթք - Զայր, Քեզ նման չեմ կարող տեսնել առջևում եղած ճանապարհները: Խնդրում եմ՝ տու՛ր ինձ կարողություն՝ իմանալու, թե երբ է ուղղությունը փոխելու առաջարկը գալիս Քեզմից: Ամեն:

Չիտենք, որ եթե վստահում ենք Աստուծու, Նա ներկայացնում է մեզ կյանքի ուղղության փոփոխությունները:

Իմ բերանից դուրս եկած խոսքը... ապարդյուն չի վերադառնա ինձ մոտ, այլ կկատարի իմ փափագը և հաջողություն կունենա այն բանում, ինչի համար ես ուղարկել եմ նրան: (Ես. 55.11)

ՇԱՐՈՒՆԱԿԻՐ ՔԱՅԼԵԼ

«Քայլելը» Բեն Մալքոլմսոնի կյանքի հետաքրքիր պատմությունն է: Նա ֆուտբոլի փորձառություն չունեցող մի ուսանող էր, բայց դարձավ 2007թ. Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի «Վարդերի շքերթ» առաջնության «քայլող»՝ ոչ հավաքագրված մասնակից: Հետո քոլեջի լրագրող Մալքոլմսոնը որոշեց առաջին դեմքով պատմություն գրել այդ փորձառության դժվարին ընթացքի մասին: Ու չնայած չէր հավատում՝ խմբում գրադեցրեց առաջնային դիրք: Խմբին միանալուց հետո Մալքոլմսոնն այդ անսպասելի հնարավորության մեջ գտավ Աստծո նպատակն իր համար: Բայց նրան հուսահատեցնում էր խմբի անդամների անտարբերությունը հավատի վերաբերյալ քննարկումներին: Երբ նա աղոթում էր ուղղություն ստանալու համար, կարդաց Եսայի մարգարեի հիշեցումը, որում Աստված ասում է. «Իմ բերանից դուրս եկած խոսքը... ապարդյուն չի վերադառնա ինձ մոտ, այլ կկատարի իմ փափագը և հաջողություն կունենա այն բանում, ինչի համար ես ուղարկել եմ նրան» (Ես. 55.11): Ոգեշնչված այս խոսքերից՝ Մալքոլմսոնը խմբի անդամներին Աստվածաշունչ տվեց: Սակայն կրկին մերժվեց: Տարիներ անց նա իմացավ, որ նրանցից մեկը, այնուամենայնիվ, կարդացել էր իր տված դիրքը, և իր ողբերգական մահից առաջ ցուցաբերել Աստծո հետ փոխհարաբերության օրինակներ, որ երևում էին Սբ. Գրքի էջերում: Հավանական է, որ մեզանից շատերն են Հիսուսի մասին պատմել իրենց ընկերոջը կամ ընտանիքի անդամին և հանդիպել անտարբերության կամ բացահայտ մերժումի: Բայց նույնիսկ այդ պարագայում, եթե անմիջապես արդյունք չենք տեսնում, Աստծո ճշմարտությունն այնքան զորեղ է, որ կիրակա-նացնի Իր ժամանակի մեջ:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալություն, որ Քո խոսքը հասնում է նպատակին: Ամեն:

Աստու խոսքի ուժը վաղ թե ուժ գործում և օրհնություն է ցալիս այն կարդացողին ու սովորողին:

Երիտասարդներից՝ ինչպես եղբայրների, պառավներից՝ ինչպես մայրերի, դեռատի կանանց՝ ինչպես քույրերի: (Ա.Տիմ. 5.1-2)

ՔՈՒՅՐԸ՝ ԵՂԲՈՐԸ

Կարմենը հանդիպում էր խնդրել և ինձ էր սպասում հուզված ու լացակուճած: 42 տարեկան կինը երազում էր ամուսնանալու մասին, և այժմ մի տղամարդ հետաքրքրություն էր ցուցաբերել իր հանդեպ: Բայց խնդիրն այն էր, որ այդ մարդն իր ղեկավարն էր և ամուսնացած էր:

Կարմենը, ապրելով իրեն մշտապես ծաղրող եղբոր ու ջերմությունից զուրկ հոր հետ, տեսել էր, որ տղամարդիկ իրեն թերազնահատում են: Հավատի վերանորոգումը նրան ապրելու նոր սահմաններ էր տվել, բայց այդ կարոտը մնացել էր, և սիրո այս նոր արտահայտությունը, որ շարունակություն էր կարող ունենալ, տանջանք էր նրա համար: Այս ամենի մասին խոսելուց հետո մենք գլխահակ աղոթեցինք: Կարմենը խոստովանեց իր գայթակղությունները, դատապարտեց իր ղեկավարի քայլը, իր ցանկությունները հայտնեց Աստծուն, և սենյակից դուրս եկավ թեթևացած սրտով:

Այդ օրը ես հասկացա միմյանց հետ իբրև հավատակից քույր ու եղբայր վերաբերվելու մասին Պողոսի խորհուրդների խորությունը (Ա.Տիմ. 5.1-2): Այն փաստը, թե ինչպես ենք մենք տեսնում մարդկանց, բնորոշում է, թե ինչպես ենք շփվում նրանց հետ: Այս հարափոփոխ աշխարհում հակառակ սեռի մարդկանց որպես ընտանիք տեսնելը մեզ կօգնի նրանց հետ խնամատարություններ ու պատշաճորեն վարվելու: Առողջ եղբայրներն ու քույրերը բռնություն ու գայթակղության չեն ենթարկի իրար: Ավետարանի գեղեցկությունն այն է, որ հենց այդ բանն է ապահովում՝ մեզ տալով նոր եղբայրներ ու քույրեր, որոնք օգնում են մեզ դիմազրավելու կյանքի խնդիրները:

Աղոթք - Միրելի՛ Հայր, օգնի՛ր, որ հարգանքով ու մաքրությունով վերաբերվեմ ուրիշներին հանդեպ: Ամեն:

Չավասացյալներից տղասվում է բացարձակ մաքուր վարմունք, որդեսգի միմյանց հետ վարվեն որդես փույրեր ու եղբայրներ:

Զգողանան, այլ կատարյալ բարիք ու հավատարմություն ցուցաբերեն, որպեսզի մեր Փրկիչ Աստծո վարդապետությունը ամեն ինչով զարդարեն: (Տիտ. 2.10)

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՍԻՐՈՒՆ

1 916 թ. Նելսոնը նոր էր ավարտել Վիրջինիա նահանգի բժշկական դպրոցը: Ավելի ուշ նա իր հարսնացուի հետ մեկնեց Չինաստան: Քսաներկու տարեկանում նա արդեն վիրաբույժ էր «Սեր և ողորմություն» հիվանդանոցում, որը առնվազն երկու միլիոն չինացի բնակիչ ունեցող տարածքի միակ բուժհաստատությունն էր: Նելսոնն իր ընտանիքի հետ այստեղ ապրեց 24 տարի՝ ղեկավարելով հիվանդանոցը, կատարելով վիրահատություններ և բաժնեկցելով Ավետարանը հազարավար մարդկանց հետ: Ժամանակին նրան անվստահություն էին ընդունում ու նույնիսկ «օտար սատանա» անվանում, բայց Նելսոն Բելը հետագայում հայտնի դարձավ որպես «Չինացի ժողովրդի սիրահար զանգակ»: Նրա ղուևտրն ամուսնացավ ավետարանիչ Բիլլի Գրահամի հետ: Թեև Նելսոնը փայլուն վիրաբույժ էր և Աստվածաշնչի ուսուցիչ, բայց ոչ թե նրա հմտություններն էին շատերին մոտեցնում Հիսուսին, այլ բնավորությունն ու ավետարանի համաձայն ապրելու վարքը: Պողոսը Տիտոսին ուղղված նամակում ասում է, որ շատ կարևոր է Քրիստոսի նման ապրելը, որովհետև զբանով կարող է «զբավիչ» դարձնել ավետարանը (Տիտ. 2.10): Մենք դեռ միայն մեր ուժերով չենք կարող դա անել: Աստծո շնորհքն է մեզ օգնում ապրել «խոհեմությամբ, արդարությունով ու աստվածապաշտությամբ» (Հմ.12)՝ արտացոլելով մեր հավատքի ճշմարտությունները (Հմ.1):

Թող Քրիստոսն օգնի մեզ՝ զբավիչ ձևով արտացոլելու և բացահայտելու իր ավետարանը:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, օգնի՛ր ինձ, որ Ավետարանը լավ ներկայացնեմ և ուրիշներին դեպի Քեզ բերեմ:

Ընթանեկան Աստծո խոսքը սովորենք նրանցից, որոնք բարի օրինակ լինելով՝ առաջնորդում են մարդկանց, նաև ավեսարանը գրավիչ դարձնենք մեր իսկ կյանքով:

Ինչու՞ ես դուրս եկա մորս արգանդից, որ տաժանք ու վիշտ տեսնեմ, և իմ օրերն ամոթով սպառվեն: (Եր. 20. 18)

ԵՐԲ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ Է ԴՎՈՆՈՒՄ

Դրյուն երկու տարի բանտարկված էր Հիսուսին ծառայելու համար: Նա կարգում էր միսիոներների պատմությունները, որոնք ուրախություն են ապրել իրենց բանտարկության ընթացքում, բայց խոստովանում էր, որ իր փորձառությունն այլ է: Նա նույնիսկ կնոջն ասաց, թե Աստված, հանձին իրեն, սխալ մարդ է ընտրել: Սակայն կինը քաջալերեց ամուսնուն՝ ասելով.«Ո՛հ, կարծում եմ՝ Նա ճիշտ մարդու է ընտրել: Սա պատահականությունն է»: Դրյուն նման է Երեմիա մարգարեին, որը հավատարմորեն ծառայել էր Աստծուն՝ զգուշացնելով Հուդային, որ Աստված կարող է պատժել իրենց գործած մեղքերի համար: Բայց, Աստծո դատաստանը դեռ չեկած, Հուդայի առաջնորդները ձեռնեցին Երեմիային ու դրեցին կոճղի մեջ: Երեմիան մեղադրեց Աստծուն.«Ո՛վ Տեր, Դու ինձ հրապուրեցիր» (Հմ.7): Նա մտածում էր, որ Աստված չկարողացավ ազատել իրեն, որ Տիրոջ խոսքն ամեն օր իր համար «նախատինք ու կշտամբանք է դարձել» (Հմ.8): Ի վերջո նա բացականչում է. «Անիծյալ լինի իմ ծնված օրը: Ինչու՞ ես դուրս եկա մորս արգանդից, որ տաժանք ու վիշտ տեսնեմ, և իմ օրերն ամոթով սպառվեն» (Հմ.14,18): Ի վերջո Դրյուն ազատ արձակվեց, և իր փորձառությունից սկսեց հասկանալ, որ գուցե, իրոք, Աստված ընտրել էր իրեն, ինչպես Երեմիային, քանի որ ինքը ևս թույլ էր: Եթե ինքն ու Երեմիան ուժեղ լինեին, գուցե գովասանքի արժանանային իրենց հաջողությունների համար: Սակայն երբ բնականից թույլ են ու տկար, նրանց հավատարմության ամբողջ փառքը գնում է Հիսուսին (Ա. Կորնթ. 1. 26-31): Նրա տկարությունը իրեն դարձրեց կատարյալ անձնավորություն, որին կարող էր Հիսուսն օգտագործել:

Աղոթք -Տե՛ր Հիսուս, Քո գորությունը տեսանելի է դառնում իմ տկարության մեջ: Խոստովանում եմ իմ ծախորդությունները, որպեսզի կարողանամ պարծենալ Քեզանով: Ամեն:

Կարող եմ թույլ ու անկարող զգալ, բայց կարելի է այդ սկարությունները վերածել զգալի հոգևոր առավելության:

«Տերն է իմ բաժինը,- ասաց իմ հոգին,- ուստի ես նրան եմ հուսալու»:
(Ողբ Եր. 3.24)

ԱՍՏԾՈ ՀՈՒՅՈՎ

Տոնական օրերը մոտենում էին, բայց ծրարների առաքումը դանդաղում էր առցանց պատվերների աննախադեպ չափի պատճառով: Ես հիշում եմ մի ժամանակ ընտանիքս նախընտրում էր գնալ խանութ և ապրանքներ գնել: Բայց երբ մայրս բացեց մի հաշիվ, որը ներառում էր նաև առաքում, մեր վերաբերմունքն ու գործողությունները փոխվեցին: Այժմ արդեն երաշխավորված առաքումով ստանում էինք մեր պատվերները՝ առանց ուշացման:

Մենք ապրում ենք մի աշխարհում, երբ սովորել ենք ակնթարթային հաճույք ստանալ և սպասելն արդեն դժվարություն է դիտվում: Բայց հոգևոր ոլորտում համբերությունը դեռ գնահատվում է: Երբ գրվում էր «Երեմիայի ողբը», իսրայելցիները սգում էին Բաբելոնի բանակի կողմից Երուսաղեմի կործանումը և դիմագրավում մի շարք մարտահրավերներ: Այդ քառասյին վիճակում հեղինակը համարձակորեն հաստատում է. «Տերն է իմ բաժինը,- ասաց իմ հոգին,- ուստի ես նրան եմ հուսալու»:

Աստված գիտի, որ մենք անհանգստանում ենք, երբ մեր աղոթքների պատասխաններն ուշանում են: Սակայն Աստվածաշունչը քաջալերում է մեզ, որ սպասենք Աստծուն: Մեր համբերությունը չպիտի սպառվի, քանի որ «Տիրոջ գթությունը վերջ չունի» (Հմ.22): Փոխարենը Աստծո օգնությամբ կարող ենք «Համբերել և սպասել Տիրոջը» (Սաղմ. 37.7): Թող որ սպասենք Աստծոն՝ վստահելով Նրա սիրուն ու հավատարմությունը, նույնիսկ եթե անհանգստանում ենք բաղձանքների և անպատասխան մնացած աղոթքների համար:

Աղոթք - Երկնավոր Հայր, երբեմն դժվար է լինում Քեզ սպասելը: Խնդրում եմ՝ ինձ ուժ տուր, որ կարողանամ հույսս Քեզ վրա դնել: Ամեն:

Մեծ հույսով սղասե՛նք Աստծո՛ն՝ վստահելով, որ ժամանակին դիժի՛ս ևս մեր խնդրածո՛ւնքը:

Այդպես էլ թող ձեր լույսը մարդկանց առաջ փայլի, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Դորը, որ երկնքում է: (Մատթ. 5.16)

ՓԱՅԼԵԼՈՒ ԱՌԻԹՆԵՐ

2020 թ. Նյու Յորքի կենտրոնական զբոսայգում իր շան հետ զբոսանող վաստակաշատ տնտեսագետ, թոշակառու Ուիթնին տեսավ, որ մոտակայքում տեղադրվում են սպիտակ վրաններ, որոնց վրա խաչ էր ու բարեգործական մի անձանոթ կազմակերպության անուն: Երբ իմացավ, որ խումբը թագավարակով հիվանդ նյուլյորքցիների համար պատրաստում է դաշտային հիվանդանոց, առաջարկեց իր օգնությունը: Շաբաթներ շարունակ, անկախ հավատքից ու քաղաքական հայացքներից, ինքն ու իր ընտանիքը գնում էին այնտեղ, որտեղ կար իրենց կարիքը: «Ում որ ես հանդիպել եմ, իսկապես լավ մարդիկ էին», - հետո արտահայտվեց Ուիթնին և ողջունեց այն փաստը, որ ոչ ոք իրենց չի վճարել այդ օգնության համար:

Ի պատասխան թագավարակի հետևանքով առաջացած կարիքների՝ մեկտեղվեցին անհավանական գործընկերների ծառայությունները, և հավատացյալներին տրվեցին նոր հնարավորություններ՝ Քրիստոսի լույսը բաժանելու ուրիշներին: Ինչպես սովորեցնում է Հիսուսն իր լեռան քարոզում. «Այդպես էլ թող ձեր լույսը մարդկանց առաջ փայլի, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Դորը, որ երկնքում է» (Մատթ. 5.16): Մենք արտացոլում ենք Քրիստոսի լույսը՝ թույլ տալով, որ հոգին մեզ առաջնորդի սիրալիք, բարի, լավ խոսքերով ու արարքներով (Գաղ. 5.22-23): Երբ թույլ տանք, որ Հիսուսից ստացած լույսը հստակորեն փայլի մեր առօրյա կյանքում, մենք նաև «կփառավորենք մեր երկնավոր Դորը» (Մատթ. 5.16):

Աղոթք - Տե՛ր Դիսուս, օգնի՛ր ինձ, որ իմ խոսքերով ու գործերով շողացնեմ Քո լույսը ամենքի վրա: Ամեն:

Եթե հավատում եմք Տե՛ր Դիսուսին, մեր դարձականությունն է լուսավորել աշխարհը, որդեսզի մարդիկ տեսնեն մեր բարի գործերը և փառավորեն մեր Երկնավոր Դորը:

Բոլոր հավատացյալները նույն տեղում էին համախմբվում, և նրանց ողջ ունեցածն ընդհանուր էր: (Գործք 2. 44)

ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՄԻԱՍԻՆ

Մարին, որ միայնակ աշխատող բազմազավակ մայր էր, հազվագեպ էր բացակայում եկեղեցու պաշտամունքից կամ Աստվածաշնչի սերտողությունից: Ավելին, ամեն կիրակի նա իր հինգ երեխաների հետ ավտոբուսով գնում էր եկեղեցի և օգնում տեղի պատրաստությանն ու մաքրությանը:

Մի կիրակի հովիվը Մարին հայտնեց, որ եկեղեցու անդամներից մի քանիսն իր ընտանիքի համար նվերներ են պատրաստել: Մի գույգ Մարիի ընտանիքին էփան վարձավճարով տուն տրամադրեց, մեկ ուրիշը աշխատանք առաջարկեց իր սեփական սրճարանում: Մի երիտասարդ նրանց նվիրեց իր հին ավտոմեքենան և խոստացավ հարկ եղած դեպքում նորոգել այն: Մարին շնորհակալություն հայտնեց Աստծուն, որ պատկանում է մի համայնքի, որի անդամները նվիրված են Աստծուն և ծառայում են միմյանց: Մենք բոլորս չենք կարող նույն առատաձեռնությամբ տալ, բայց Աստծո ժողովուրդը ստեղծված է իրար օգնելու համար: Ղուկաս ավետարանիչը հավատացյալներին նկարագրում է որպես «առաքյալների հաղորդությանն ու ուսուցմանը ջերմեռանդորեն հետևողներ» (Գործք 2.42): Մեր հնարավորությունները մեկտեղելով՝ կկարողանանք աշխատել միասին և օգնել կարիքավորներին, ինչպես արեցին Հիսուսին առաջին հավատացողները (Հմ. 44-45): Իսկ Աստծուն ավելի մոտենալով՝ մենք էլ կկարողանանք հոգ տանել միմյանց մասին: Ականատես լինելով Աստծո սիրուն, որը դրսևորվում է Նրա ժողովրդի գործերում, կարող ենք ուրիշներին առաջնորդել դեպի Հիսուսի հետ փրկարար հարաբերություններ (Հմ. 46-47): Մենք էլ ժպիտով ու բարի գործերով կարող ենք ծառայել ուրիշներին՝ քանի որ Աստված աշխատում է մեր մեջ ու մեր միջոցով:

Աղոթք - Սիրող Չայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ տեսնեմ կարիքավորներին ու ծառայելով ուրիշներին՝ ծառայեմ Քեզ: Ամեն:

Շահ կարևոր է ամրել մի համայնքում, որտեղ Աստուն ծառայում են ուրիշներին ծառայելով: Ծառայե՛նք անձնուրաց մեծահոգությամբ

Տիրոջ օրենքը կատարյալ է: (Մաղմ. 19.7)

ԸՄԲՈՆԵԼ ԱՍԾՈՆ ԽՈՍՔԸ

Մեծ հորեղբորս ազարակատան դռան շրջանակին երկաթյա մի օղակ էր ամրացված, որից հարյուր ոտնաչափ հեռու մեկ ուրիշ օղակ էլ ամրացված էր գոմի դռանը: Դա արված էր Մինեսոտայի դաժան ձմռանը դիմազրավելու համար: Երբ ձյունամրրիկ էր լինում, հորեղբայրս պարան էր կապում այդ երկու օղակներին, որպեսզի կարողանար կուրացնող ձյան մեջ գտնել տնից գոմ տանող ճանապարհը:

Հորեղբորս այս հնարամիտ քայլն ինձ հիշեցնում է Դավթի բանաստեղծական տողերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Աստծո իմաստնությունը առաջնորդում մեզ մեր կյանքի ընթացքում և պաշտպանում մեզ մեղքից ու սխալից: «Տիրոջ վախը սուրբ է, մնում է հավիտյան: Տիրոջ դատաստանները ճշմարիտ են և լիովին արդար: Դրանք ավելի ցանկալի են, քան ոսկին, քան թե մեծաքանակ զտված ոսկին, էլ ավելի քաղցր են, քան մեղրը և մեղրախորիսխը: Քո ծառան էլ խրատվում է դրանցով, և շատ հատուցում կա դրանց պահպանություն մեջ» (Մաղմ. 19. 9-11):

Աստվածաշնչյան ճշմարտություններն ըմբռնելը պահպանում է մեզ ճանապարհը կորցնելուց, օգնում Աստծուն և ուրիշներին պատվող որոշումներ կայացնել: Աստվածաշունչը նաև զգուշացնում է մեզ Աստծուց շեղվելու մասին և ցույց է տալիս տուն տանող ճանապարհը: Պատմում է մեր Փրկչի անգին սիրո և օրհնությունների մասին, որոնք սպասում են բոլոր Նրան հավատացողներին: Սուրբ Գիրքը փրկողակ է: Թող աստված օգնի մեզ, որ միշտ կառչենք դրանից:

Աղոթք - Երկնավոր Զայր, օգնիր ինձ, որ գնահատեմ Քո սովորեցրածները: Շնորհակալ եմ Աստվածաշնչի հարուստ ու խորը օրհնությունների համար: Ամեն:

Աստվածաշնչի խոսույթները մեզ հույս են ներժնում: Կառչենք դրա ճշմարտություններից:

Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են: (ՅԻՍ. 10.27)

ՔՐԻՍՏՈՍԻՆ ԼՍԵԼ, ԵՎ ՈՉ ՔԱՈՍԻՆ

Ամեն օր հեռուստատեսությամբ լուրերը լսելուց հետո տարեց տղամարդը հուզվում էր ու անհանգստանում: Մտահոգվում էր, որ աշխարհը քանդվում է, և իրեն էլ հետը տանում: Նրա դուստրը խնդրում էր չլսել, ուղղակի անջատել հեռուստացույցը: Սակայն մարդը շարունակում էր ոչ միայն լուրերին հետևել, այլև սոցիալական ցանցերին:

Այն, ինչ մենք լսում ենք, իրոք կարևոր է: Դա տեսնում ենք նաև պոնտացի Պիղատոսի հետ Հիսուսի հանդիպման ժամանակ: Պատասխանելով Հիսուսի դեմ հարուցված մեղադրանքի մասին կրոնական առաջնորդների հարցին՝ Պիղատոսը կանչում է Նրան ու հարցնում. «Դո՞ւ ես հրեաների թագավորը» (Հովհ. 18.33): Ի պատասխան Հիսուսը ապշեցուցիչ մի հարց է տալիս. «Դու այդ ի՞նքզ էս հարցնում, թե՞ քեզ ուրիշներն են իմ մասին ասել» (Հմ.34):

Նույնը մեզ էլ է վերաբերում: Խուճապային այս աշխարհում մենք ո՞ւմ ենք լսում. Քրիստոսի՞ն, թե քառսին: Իսկապես. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են», - ասում է Նա: -Ես էլ նրանց եմ ճանաչում, և նրանք գալիս են իմ հետևից» (10.27): Հիսուսն այս առակով (Հմ.6) ուզում է բացահայտել իրեն: Ինչպես բարի հովիտի պարագայում, Նա ասում է. «...Ոչխարները հետևում են նրան, որովհետև ճանաչում են նրա ձայնը: Բայց օտարի հետևից չեն գնա, այլ նրանից կփախչեն, որովհետև օտարների ձայնը չեն ճանաչում» (Հմ. 4-5):

Որպես մեր Բարի հովիտ՝ Հիսուսը մեզ պատվիրում է ամենից առաջ իրեն լսել: Լա՛վ լսենք և գտնենք Նրա խղճալուծությունը:

Աղոթք -Սիրո՛ղ Հայր, աղմկոտ աշխարհում երբ Դու Աստվածաշնչի միջոցով խոսում ես մեր սրտի, մտքի ու հոգու հետ, թող ես ամենից առաջ Քեզ լսեմ: Ամեն:

Լրացվական աղբյուրներից ու սոցիալական ցանցերից մեր լսածները անհամգոսացնում են մեզ: Հե՛տևաբար ավելի աս ժամանակ սրամաղրենք Աստժ ձայնը լսելուն:

Նա օրհնյալ լինի Տիրոջից,....Այդ մարդը մոտիկ ազգական է մեզ: (Յո. 2.20)

ԱՍՏՎԱԾ ՎԵՐՑՆՈՒՄ Է ՄԵՐ ՑԱՎՐ

Օլիվյայի ընկերուհին նրա ատամնաբուժարանի սարքավորումները բարձուժ էր իր մեքենան: Սեփական ատամնաբուժարան ունենալը Օլիվյայի տարիների երազանքն էր, սակայն երբ նրա որդին ծնվեց ուղեղային կաթվածով, նա հասկացավ, որ պետք է թողնի իր սիրած աշխատանքը, որպեսզի հոգ տանի երեխայի մասին:

«Եթե միլիոն կյանք էլ ունենայի, դարձյալ նույն ընտրությունն էի անելու,- ինձ ասաց Օլիվյան, -չնայած ատամնաբուժությունից հրաժարվելը դժվար է: Դա երազանքի մահ է նշանակում»: Մենք հաճախ ենք անցնում անհասկանալի դժվարությունների միջով, որոնք մեզ մեծ ցավ են պատճառում: Օլիվյայի համար դա իր երեխայի անսպասելի հիվանդությունն էր: Նոյեմբի համար սրտի ցավ էր իր ամբողջ ընտանիքի կորուստը: Հոութ 1. 21-ում նա ողբում է.«Ամենակարողը վշտացրել է ինձ»: Բայց Նոյեմբի պատմության մեջ ավելին կար, քան նրա տեսածը: Աստված չլքեց նրան, այլ վերականգնեց՝ տալով մի թոռնիկ՝ Ուլբեդ անունով (Հո. 4.17): Ուլբեդը ոչ միայն կրելու էր Նոյեմբի ամուսնու և որդու անունը, այլև նրա միջոցով՝ Նոյեմին լինելու էր Հիսուսի ազգականը (Մատթ. 1.5,16):

Աստված վերցրեց Նոյեմբի, ինչպես նաև Օլիվյայի ցավը՝ օգնելով նրանց սկսելու հոգևոր ծառայությունն նյարդային խնդիրներ ունեցող երեխաների համար: Մենք կարող ենք վիշտ կամ սրտի ցավ ունենալ, բայց կարող ենք նաև վստահ լինել, որ եթե հնազանդվենք ու հետևենք Աստծուն, Նա կվերցնի մեր ցավը և իր սիրով ու իմաստնությունամբ կկարողանա բարիք բերել:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ վերցնում ես իմ կյանքի ցավալի պատմությունները: Ամեն:

Աստված վերցնում է մեր անցյալի ցավերն ու խրախուսում մեզ մեր ներկա ցավերի մեջ:

Եվ ամեն ոք, ով մրցում է, ամեն ինչում ժուժկալ է լինում: Արդ նրանք մրցում են, որ մի ապականելի պսակ ստանան, իսկ մենք՝ անապական: (Ա.Կորնթ. 9.25)

ԱՆՑՆԵԼ ՄՐՑԱՇԱՐԸ

Տ ուտբոլի Ազգային լիգայի խաղացողների մրցելու տարիները զգալիորեն կարճ են, միջին հաշվով՝ 33 տարի: Բայց պաշտպան Թոմ Բրեդին 2021-ին իր 22-րդ խաղաշրջանն սկսեց, երբ արդեն 44 տարեկան էր: Հավանաբար Ֆուտբոլիստը կարողացել է իր լավ մարզավիճակը պահպանել խիստ սննդակարգի ու կանոնավոր մարզումների շնորհիվ: Բրեդին շահել է ամերիկյան Ֆուտբոլի բոլոր ժամանակների սուպերգավաթը: Դա մի նվաճում է, որին նա չէր հասնի, եթե չլինեիր կատարելության հասնելու իր ձգտումը:

Պողոս առաքյալը ծանոթ էր մարզիկների, որոնք այդպիսի կարգապահություն էին ցուցաբերում (Ա.Կորնթ. 9.24): Բայց նա տեսնում էր նաև, որ նրանք որքան էլ պարապեն, ի վերջո նրանց փառքը խամրում է: Ի հակադրություն դրա՝ մենք հնարավորություն ունենք ապրելու Հիսուսի համար այնպես, որ նա ազդի հավիտենականության վրա, - ասում է Պողոսն ու ակնարկում. եթե ակնթարթային փառքի ձգտող մարզիկներին հարկավոր է այդքան ջանասիրաբար աշխատել, ապա որքան ջանքեր են պետք նրանց, ովքեր «անապական պսակ են ստանում» (Հմ.25):

Փրկություն վաստակելու համար մենք չենք մարզվում: Ուղղակի, գիտակցելով այդ փրկության հիասքանչ լինելը, մենք վերափոխում ենք մեր նախապատրաստությունները, հեռանկարն ու այն նպատակը, ինչի համար ապրում ենք, երբ հավատարմորեն անցնում ենք Աստծո զորության հանդեպ հավատի մեր մրցաշարը:

Աղոթք - Հայր, օգնիր ինձ աճել կարգապահության մեջ՝ որպես պատասխան Քո սիրո և ոչ թե որպես փորձ վաստակելու այն, ինչը Դու արդեն տվել ես ինձ: Ամեն:

Մեր հավասք մեզ մղում է սալ լավագույնը և աճել հոգևորապես:

Ահա՛, ես չարիք եմ բերելու այս տեղի վրա: (Եր. 19.3)

ՅՈՒՅՍ ԳԵՂԵՆԻՑ

1 979-ին Հնագետ Գաբրիել Բարքայը հայտնաբերեց երկու փոքրիկ արծաթյա թիթեղ: Տարիներ պահանջվեցին, որ նա զգուշորեն բացի ու վերծանի դրանցում ամփոփված աստվածաշնչյան ամենահին արձանագրությունը, որն արտացոլված է թվոց 6. 24-26-ում.«Տերը օրհնի քեզ ու պահպանի քեզ: Տերը պայծառացնի իր երեսը քեզ վրա ու ողորմի քեզ: Տերը բարեհաճ լինի քո հանդեպ և խաղաղություն տա քեզ»:

Գիտնականներն այս մատյանները համարում են Ք.Ա. 7-րդ դարի նմուշներ:

Հետաքրքիր է նաև դրանց հայտնաբերման վայրը: Բարքայը մի քարայր էր պեղում Հինոմի հովտում, ճիշտ այնտեղ, որտեղ Երեմիա մարգարեն Հուդայի ժողովրդին ասաց, թե Աստված կոտորելու է նրանց, որովհետև իրենց որդիներին այրեցին Բահաղի համար (Եր. 19. 4-6): Այդ հովիտն այնպիսի ամբարշտություն վայր էր, որ Հիսուսն այն անվանեց գեհնե («Հինոմի հովիտ» եբրայերեն անվանման հունարեն ձևը)՝ որպես դժոխքի պատկեր (Մատթ. 23. 33): Այստեղ մոտավորապես նույն ժամանակ, երբ Երեմիան հայտարարում էր Աստծո դատաստանը իր ազգի վրա, ինչ-որ մեկը արծաթե մատյանների վրա փորագրում էր Նրա ապագա օրհնությունը: Այդ բանը չպիտի լիներ նրանց կյանքում, բայց մի օր Աստված բարեհաճորեն կնայի դեպի իր ժողովուրդը և խաղաղություն կպարգևի նրանց:

Դասը պարզ է մեզ համար: Նույնիսկ եթե արժանի ենք մեզ պատուհասած դժվարություններին, մենք դարձյալ կարող ենք կառչել Աստծո խոստումներին: Նրա սիրտը միշտ կարոտում է իր ժողովրդին:

Աղոթք - Հայր, խոստովանում եմ մեղքս ու հաստատում եմ, որ արժանի եմ դատաստանի, սակայն ապավինում եմ Քո ներելու ու վերականգնելու խոստմանը: Ամեն:

Ասված խրատում է մեզ: Ընդունենք Նրա խրատը և կառչենք Նրա փրկության խոսմանը:

Ավելի լավ բան չկա մարդու համար,.... որ իր աշխատանքով զվարթացնի իր սիրտը: (ժող. 2.24)

ՇՆՈՐՅԱԿԱԼ ԼԻՆԵԼ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԿԱ ՅԱՄԱՐ

Վախենում եմ երկուշաբթի օրերից: Երբեմն աշխատավայր գնալիս իջնում եմ գնացքից, որոշ ժամանակ նստում կայարանում՝ փորձելով թեկուզ մի քանի բույսեր հապաղել: Բայց սիրտս արագ է խփում, որովհետև նաև անհանգստանում եմ, թե ուշացումս ինչպես կընդունի գործատուն:

Ոմանց համար կարող է առանձնահատուկ դժվար լինել աշխատանքային շաբաթվա սկիզբը ծանրաբեռնվածությամբ պատճառով: Սողոմոն թագավորը նկարագրում է աշխատանքի տանջանքը՝ գրելով. «Ի՞նչ է մնում մարդուն իր ամբողջ տաժանքից և իր մտատանջությունից, որ նա կատարեց արեգակի տակ: Որովհետև նրա բոլոր օրերը ցավալի են և նրա բոլոր գործերը՝ տաղտկալի» (ժող. 2.22-23): Իմաստուն թագավորը մեզ դեղամիջոց չի տալիս աշխատանքը պակաս ճնշող կամ ավելի պարզեցնելու դարձնելու համար, այլ առաջարկում է փոխել մեր տեսակետը: Անկախ մեր աշխատանքի դժվարությունից՝ նա առաջարկում է Աստծո օգնությամբ «աշխատանքով զվարթացնել սիրտը» (Հմ.24): Գուցե դա հաջողվի, երբ Սուրբ Հոգին մեզ հնարավորություն տա դրսևորելու քրիստոնեական բնավորություն: Դա կարող է լինել՝ լսելով մեկի մասին, որ օրհնություն է ստացել մեր ծառայություն միջոցով: Կամ հիշելով այն իմաստությունը, որ Աստված տվել է դժվար իրավիճակում: Թեև մեր աշխատանքը կարող է դժվար լինել, բայց մեր հավատարիմ Աստվածը մեզ հետ է: Նրա ներկայությունն ու զորությունը կարող են լուսավորել նույնիսկ մեր մուսյլ օրերը: Նրա օգնությամբ մենք կարող ենք շնորհակալ լինել շաբաթն սկսելու համար:

Աղոթք - Հավատարիմ Հայր, օգնիր ինձ՝ տեսնելու այն լավը, որով ինձ հնարավորություն ես տալիս կատարելու իմ այսօրվա աշխատանքը: Ամեն:

Թեև վախենում եմ երկուշաբթի օրերից, բայց եկե՛ք աղավիհներ՝ Աստծո օգնությանը, որդեսօգի բավարարում զգանք մեր կատարած աշխատանքից:

Վրեժխնդիր չլինես և քո ժողովրդի զավակների դեմ ոխ չպահես, այլ քո մերձավորն սիրի՛ր քո անձի պես: (Ղև. 19.18)

ՍԻՐԵԼ ՄԵՐ ԸՆԿԵՐՈՋԸ

Թագավարակի համաճարակի ինքնամեկուսացման ու արգելափակման օրերին արգելական էին հնչում Մարտին Լյութեր Քինգ Կրտսերի խոսքերը՝ «Նամակ Բիրմինգհեմի բանտից» գրքից: Խոսելով անարդարության մասին՝ նա նկատում է, որ անհնար է ձեռքերը ծալած նստել մի քաղաքում և չմտահոգվել մյուս քաղաքում կատարվող դեպքերով: «Մենք փոխադարձաբար անտեսանելի մի ցանցի մեջ ենք՝ կապված ճակատագրի մեկ հագուստով: Այն, ինչն ուղղակիորեն ազդում է մեկի վրա, անուղղակիորեն ազդում է բոլորիս վրա»:

Թագավարակը բացահայտեց նաև մեր կապերը միմյանց հետ, քանի որ ողջ աշխարհի երկրներն ու քաղաքները փակվել էին վարակը չտարածելու նպատակով:

Շատ դարեր առաջ Աստված հրահանգեց Իր ժողովրդին, թե ինչպես պետք է հոգ տանել ուրիշ ժողովուրդներին: Մովսեսի միջոցով Նա Իսրայելի ժողովրդին ավելի օրենքներ, որոնցով նա պիտի առաջնորդեր և օգներ միասին ապրել: Տերը ասաց նրան. «Բո ժողովրդի մեջ չարախոսություն անելով ման չգաս: Բո մերձավորի արյան վրա մի՛ հարձակվիր» (Ղև. 19.16), ինչպես նաև «Վրեժխնդիր չլինես և քո ժողովրդի զավակների դեմ ոխ չպահես, այլ քո մերձավորին սիրի՛ր քո անձի պես» (Հմ.18): Աստված գիտեր, որ համայնքները կսկսեն քանդվել, եթե մարդիկ ուշադրություն չդարձնեն ուրիշներին և նրանց կյանքը չզնահատեն իրենցի նման:

Անցնելով մեր ամենօրյա գործունեությունը՝ հիշենք, թե որքան կապված ենք ուրիշների հետ:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, օգնի՛ր, որ Քո սերն ու շնորհը բաժանեն ուրիշներին: Ամեն:

Հիսուսը կրոնական առաջնորդների համար կրկնեց ընկերոջը սիրելու դասվիրանը՝ հիշեցնելու նրանց, որ դա Աստծո դասվերն ու հրահանգն է:

Իմացե՛ք, թե որն է Տիրոջ կամքը: (Եփ. 5.17)

ԻՄԱՍՏՈ՞ՒՆ, ԹԵ ԱՆԽՈՐՅԵՍ

Տաւր տարեկանում երիտասարդաց խմբի իմ ընկերոջից վերջրի ժամանակակից քրիստոնեական խմբերից մեկի մի ձայներիզ և տուն բերեցի: Հայրս, որ հասակ էր առել հինդու-իզմ դավանող ընտանիքում, բայց փրկվել էր Հիսուսով, չհավանեց այդ երգերը: Նա ուզում էր, որ մեր տանը միայն ավանդական պաշտամունքի երաժշտությունն հնչեր: Բացատրեցի, որ դրանք էլ են քրիստոնեական երգեր, բայց նա չփոխեց իր կարծիքը: Հետո առաջարկեց, որ ես մեկ շաբաթ լսեմ այդ երգերը, որից հետո ինքս որոշեմ՝ դրանք ինձ մոտեցնու՞ն են Աստծուն, թե՞ ընդհակառակը: Հորս խորհրդի մեջ օգտակար իմաստնություն կար: Կյանքում կան բաներ, որոնց ճիշտ կամ սխալ լինելը անհայտ է, և մենք հաճախ պայքարում ենք վիճելի հարցերի շուրջ (Հռոմ. 14. 1-19): Ճիշտն ու սխալը որոշելու համար պետք է փնտրել Սուրբ Գրքում ամփոփված իմաստնությունը: Պողոսը Եփեսոսի հավատացյալներին հորդորում է. «Ուշադրություն դարձրեք ձեր վարքին. վարվե՛ք ոչ թե անխելքների պես, այլ իմաստունների» (Եփ. 5.15): Լավ ծնողի նման Պողոսը գիտեր, որ ինքը չէր կարող բոլոր իրավիճակներում հավատացյալների կողքին լինել և խորհուրդներ տալ: Ուստի նրանք պետք է «ճիշտ օգտագործեն ժամանակը, որովհետև օրերը չար են» (Հմ.16), և կարողանան ինքնուրույն տարբերել ու իմանալ, «թե որն է Տիրոջ կամքը» (Հմ.17): Իմաստուն կյանքը խորաթափանցության և ճիշտ որոշումներ կայացնելու հրավեր է, քանի որ Աստված մեզ առաջնորդում է, նույնիսկ այն դեպքում, երբ մենք վիճելի հարցեր ունենք:

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, զարգացրու՛ իմ մեջ իմաստուն սիրտ: Թո՛ւյլ տուր կյանքս այնպես ապրել, որ ավելի մոտենամ Քեզ: Ամեն:

**Աստծո առաջնորդությունը փնտրելով՝ դեժ է կարողանանալ
սարբերել իմաստունն ու անխոհեմը:**

Բարեկամն ամեն ժամանակ սիրում է: (Առ. 17.17)

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1 970-ականներին, երբ միջնակարգ դպրոցում անգլերենի ուսուցիչ էի և միաժամանակ բասկետբոլի մարզիչ, հանդիպեցի ցածր դասարանցի մի բարձրահասակ տղայի և նրան բերեցի իմ խումբ: Մեր միջև տևական բարեկամություն ձևավորվեց: Եվ երբ ինձ վաստակած հանգստի էին ուղարկում, հավաքույթի ժամանակ այդ տղան, որ հետո դարձել էր նաև գործընկեր, բոլորին պատմեց մեր տարիների բարեկամության ու ժառանգության մասին:

Աստծո սիրով կապված բարեկամների մեջ ի՞նչն է, որ քաջալերում է մեզ և ավելի մոտեցնում Հիսուսին: Առակները գրողը հասկացել էր, որ բարեկամությունն ունի երկու կարևոր բաղադրիչ: Առաջինն այն է, որ իսկական ընկերները պիտանի խորհուրդներ են տալիս.«Բարեկամի պատճառած վերքերն անկեղծ են» (27.6): Երկրորդ՝ բարեկամը, որ մոտ է ու հասանելի, կարևոր է նեղություն ժամանակ. «Մոտիկ հարևանը հեռու եղբորից լավ է» (Հմ.10):

Միայնակ լինելը լավ չէ: Ինչպես նշում է Սողոմոնը.«Երկուսը մեկից լավ է, որովհետև իրենց աշխատանքը լավ կվարձատրվի» (Ժող. 4.9): Կյանքում հարկավոր է բարեկամներ ունենալ և բարեկամ լինել: Թող Աստված օգնի մեզ, որ «Եղբայրասիրության մեջ միմյանց նկատմամբ զթասիրտ լինենք» (Հռոմ. 12.10) և «միմյանց բեռը կրենք» (աղ. 6.2)՝ դառնալով այնպիսի բարեկամ, որ կարող է քաջալերել ուրիշներին և նրանց ավելի մոտեցնել Հիսուսին:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, քննի՛ր վերաբերմունքս բարեկամներիս հանդեպ: Օգնի՛ր ինձ՝ նրանց քրիստոսակենտրոն խորհուրդ տալ և նրանցից աստվածային իմաստություն ստանալ: Ամեն:

Մեկուսանալով կթուլանամ: Ուստի հարկավոր է միմյանց ֆաջալերելու համար բարեկամական կապեր ստեղծել հավասակից եղբայրների ու փոյրերի միջև:

Մաքուր սիրտ ստեղծիր իմ մեջ, ո՛վ Աստված: (Մաղմ. 51. 10)

ԳՏՆԵԼ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԸ

1 854 թվականին Լոնդոնում անհասկանալի պատճառով հագարավոր մարդիկ էին մեռնում: Շատերը մտածում էին, որ աղտոտված օդն է պատճառը: Եվ իսկապես, երբ սաստիկ շոգից տաքացավ կոյուղու ջրերով լցված թեմզա գետը, գարշահոտն այնքան ավելացավ, որ հայտնի դարձավ որպես «Մեծ գարշահոտ»: Սակայն դա ամենավատը չէր: Դոկտոր Ջոն Մնոուլի հետազոտությունները ցույց տվեցին, որ աղտոտված ջուրն է խոլերայի համաճարակի պատճառը: Մենք՝ մարդ արարածներս, վաղուց գիտենք մեկ այլ ճգնաժամի մասին, որի հոտը հասնում է մինչև երկիրք: Մենք ապրում ենք կոտրված աշխարհում և փոխանակ գտնելու այդ խնդրի պատճառը՝ փորձում ենք բուժել ախտանիշները: Իմաստուն ծրագրերն ու քաղաքականությունը որոշ բարելավում ապահովում են, բայց անզոր են կասեցնելու հասարակություն հիվանդությունների իսկական պատճառը՝ մեր մեղավոր սրտերը: Երբ Հիսուսն ասում էր. «Դրսից մարդու մեջ մտնող ոչ մի բան չի կարող նրան պղծել» (Մարկ. 7.15), նկատի ուներ Ֆիզիկական հիվանդությունները: Այլ բան է մեզանից յուրաքանչյուրի հոգեվիճակի ախտորոշումը, որ Նա տալիս է. «Նրանից դուրս եկող բաներն են, որ պղծում են մարդուն» (Հմ.15)՝ թվարկելով մեր ներսում պահված չարիքների շարքը (Հմ. 21-22): «Ես ծնվեցի անօրենությունքով և իմ մայրն ինձ մեղքով հղացավ», - գրել է Դավիթը (Մաղմ. 51.5): Նրա ողբը բոլորիս ձայնն է: Մենք կոտրված ենք ի սկզբանե: Ահա ինչու Դավիթն աղոթեց ու ասաց. «Մաքուր սիրտ ստեղծիր իմ մեջ, ո՛վ Աստված» (Հմ. 10): Ամեն օր մեզ անհրաժեշտ է Իր Հոգու միջոցով Հիսուսի ստեղծած այդ նոր սիրտը: Ախտանիշները բուժելու փոխարեն թույլ տանք, որ Հիսուսը մաքրի մեր մեղքի աղբյուրը:

Աղոթք - Երկնավոր Հայր, պահպանիր իմ սիրտը և օգնիր ինձ, որ ուշադիր լինեմ իմ ներսում ապրող Քո Հոգու հանդեպ: Ամեն:

Թույլ տու՛ր, որ Հիսուսը մաքրի ու բուժի սիրտդ, որ բոլոր չարիքների աղբյուրն է:

Աստված ինձ ուղարկեց ձեր առջևից՝ ձեր կյանքը պահպանելու համար: (ԾՆ. 45.5)

ԵՐԿՈՒՄՆ ԷԼ ՃՇՄԱՐԻՏ ԵՆ

Կանանց համաչինական դաշնության ջանքերով երեք տասնամյակ անց Յրենկ Լուլուն, որին մանուկ հասակում առևանգել էին, միացավ իր հարազատ ընտանիքին: Լինելով շատ փոքր՝ նա չէր հիշում իր առևանգումը և հավատացած էր, որ ծնողներն իրեն վաճառել են, քանի որ չեն կարողացել հոգ տանել: Ուստի հիմա բացահատված ճշմարտությունը բազում հարցեր ու զգացողություններ էր առաջացրել:

Երբ Հովսեփը վերամիավորվեց իր եղբայրների հետ, նա էլ հավանաբար բարդ զգացողություններ էր ունեցել: Նրա եղբայրներն իրեն ստրկություն էին վաճառել Եգիպտոսում: Չնայած մի շարք ցավալի շրջադարձերի՝ Աստված Հովսեփին հեղինակավոր դիրքի հասցրեց: Եվ երբ նրա եղբայրները սովի ժամանակ Եգիպտոս եկան ուտելիք գնելու, հենց իրեն՝ դիմեցին:

Հովսեփն ընդունեց, որ Աստված հատուցեց իր եղբայրների սխալմունքի համար, երբ ասաց. «որպեսզի երկրի վրա պահպանի ձեր սերունդը և ձեզ ապրեցնի մեծ ազատությամբ» (ԾՆ. 45.7): Նա իր հանդեպ եղբայրների վերաբերմունքը զնահատեց այնպես, ինչպես եղել էր, նրանց նկարագրեց, որպես «իրեն վաճառողներ» (Հմ. 5):

Մենք երբեմն փորձում ենք չափազանց դրական շրջադարձ տալ դժվար իրավիճակներին՝ կենտրոնանալով այն բարու վրա, որ Աստված է բերում և չընդունելով մեր զգացական ներքին պայքարը: Իրականում կարող ենք դիմել իրեն՝ որ բարիք բերելու հետ մեկտեղ նաև օգնի գիտակցել սխալ արարքի պատճառած ցավը: Երկուսն էլ ճշմարիտ են:

Աղոթք - Հայր Աստված, շնորհակալ եմ, որ սիրով խնամում ես վերքերս: Ամեն:

Ուրիշների սխալների հետևանքով դժվարություններ կարող ենք ունենալ, բայց հավասան, որ Աստված դրանցից նույնպես կարող է բարիք բերել:

Չազեք գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն: (Կող. 3.12)

ՓՈՔՐ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամանդան շրջիկ հիվանդապահ հուհի էր, որն այցելում էր ծե-րանոցներ և հաճախ իր հետ տանում էր նաև տասնմեկ տարեկան դստերը՝ Ռուբիին: Իբրև զբաղմունք՝ աղջնակը մի օր հարցրեց այդտեղի բնակիչներին.«Եթե հնարավորություն ունենայիք ընտրել երեք բան, ի՞նչ կցանկանայիք»: Եվ գրանցե-լով նրանց պատասխանները՝ զարմացավ. այդ մարդիկ շատ փոքր ու պարզ բաներ էին ուզել՝ վիեճական երջիկ, շոկոլա-դով կարկանդակ, պանիր, ավոկադո և այլն: Ուստի Ռուբին հա-մացանցային մի էջ ստեղծեց «Օժանդակի՛ր ինձ» անունով, որ-պեսզի միջոցներ հավաքի և կատարի այդ մարդկանց փոքրիկ ցանկությունները: Իսկ երբ մատուցում էր նրանց ուզածները, մարդիկ գրկում էին նրան, ինչը աղջկա համար շատ կարևոր էր.«Այդ ջերմ զգացումը իսկապես բարձրացնում է քեզ», -ասում է նա: Ռուբիի նման կարեկցանք ու գուլթ ցուցաբերելով՝ մենք արտացոլում ենք Աստծուն, որը «ողորմած ու գլխած է, համբերատար ու բազումողորմ» (Սաղմ. 145. 8): Այդ պատճա-ռով Պողոսը մեզ, որպես Աստծո ժողովուրդ, հորդորում է. «Հա-զե՛ք գուլթ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հե-զություն, համբերատարություն» (Կող. 3.12): Քանի որ Աստ-ված մեծ ողորմություն է դրսևորել մեր հանդեպ, բնականաբար, մենք էլ պիտի ցանկանանք կիսել Նրա ողորմությունն ուրիշնե-րի հետ: Պողոսը շարունակում է հորդորել. «Եվ այս ամենի վրա սե՛րը հազեք, որ կատարելության կապն է» (Հմ.14) ու հիշեց-նել մեզ, որ «ամեն բան Տեր Հիսուսի անունով» անենք (Հմ.17), որովհետև բոլոր բարիքները Աստծուց են գալիս: Երբ կարեկից ենք ուրիշների հանդեպ, մեր տրամադրությունը բարձրանում է:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, շնորհակալ եմ, որ ինձ առատ ու անսահ-ման կարեկցություն ցույց տվիր: Օգնի՛ր, որ ուրախություն գտնեմ ուրիշների համար բարի գործեր անելով: Ամեն:

Աստ՛ո առաս բարիքները վայելելով՝ դասրաս լինեն մեր կարեկցանքը ցուցաբերել ուրիշների հանդեպ:

Որովհետև քո ողորմությունը մեծ է մինչև երկինք, և քո ճշմարտությունը՝ մինչև ամպերը: (Մաղմ. 57.10)

ԱՍՏՈՆ ՍԵՐԸ

Կալիֆոռնիացի գործարար Ֆրեդերիկ Լիմանը, որ տնտեսական անհաջողությունների մեջ էր, 1917-ին գրեց « Աստծո սերը» հոգևոր երգը: Ոգեչնչումը օգնեց նրան առաջին երկու տները արագ գրել, սակայն շարունակությունը դժվար էր ծնվում: Նա հիշեց տարիներ առաջ բանտի պատի վրա փորագրված մի բանաստեղծություն, որը աստվածային սիրո խորը գիտացման մասին էր: Այն համընկնում էր Լիմանի երգի չափին և դարձավ երգի երրորդ քառատողը:

Լինում են ժամանակներ, երբ մենք էլ Լիմանի կամ բանտացում գտնվողի նման անհաջողություններ ենք դիմազբափում: Հուսահատության պահերին լավ կլինի կրկնել սաղմոսերգու Դավթի խոսքերը.«Ես պիտի քո թևերի հովանուն հուսամ» (Մաղմ. 57.1): Լավ է դժվարությունների մեջ «Աստծուն կանչել»(Հմ.2), Նրա հետ խոսել մեր փորձությունների ու վախերի մասին, երբ մեզ զգում ենք «առյուծների մեջ»(Հմ.4): Այդպիսով կկարողանանք հիշել անցյալում Աստծո նախատեսությունները և միանալ Դավթին, որն ասում է.«Պիտի օրհնեմ երգով և սաղմոս ասեմ...ես պիտի զարթնեմ վաղ առավոտյան» (Հմ.7-8):

«Աստծո սերն ավելի մեծ է», - հայտարարում է այս երգը և ճշգրտում, որ այն անցնում է «ամենամեծ աստղից անգամ»: Այդպես էլ մեր ամենամեծ կարիքի ժամանակ պետք է ընդունենք, թե իրականում որքա՛ն մեծ է Աստծո սերը, որ բարձրանում է «մինչև երկինք» (Հմ.10):

Աղոթք - Սիրո՞ղ Աստված, դժվարություններ եմ դիմագրավում, բայց հիշում եմ իմ հանդեպ քո սիրո և տրամադրության մասին: Ամեն:

Դժվարություններ ու մարտահրավերներ միշտ էլ կունենանք, բայց հիշե՛նք, որ Աստված Իր մեծ սիրով մոտենում է մեզ օգնելու:

Ես քո բերանի հետ կլիճեմ և քեզ կսովորեցնեմ, ինչ որ պետք է խոսես: (Ել. 4.12)

ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՉԱՅՆԸ

Լիզան ութ տարեկանից կակազում էր և վախենում էր այն իրավիճակներից, որոնք պահանջում էին խոսել մարդկանց հետ: Հետագայում, սակայն, երբ կարողացավ հաղթահարել հիվանդությունը, Լիզան որոշեց օգտագործել իր ձայնը ուրիշներին օգնելու համար: Նա սկսեց որպես կամավոր աշխատել որպես հուզական անհանգստություն ունեցողների հեռախոսային խորհրդատու:

Մովսեսը պետք է խոսեր փարավոնի հետ իսրայելցիներին գերությունից ազատելու համար և մտավախություններ ուներ: Աստված պատվիրել էր հաղորդակցվել փարավոնի հետ, բայց նա բողոքեց, որովհետև վստահ չէր իր ճարտարախոսությունից (Ել. 4.10): Աստված հակադարձեց. «Ո՞վ է մարդուն բերան տվել» և հանգստացրեց Մովսեսին՝ ասելով. «Ես քո բերանի հետ կլիճեմ և քեզ կսովորեցնեմ, ինչ որ պետք է խոսես» (Հմ. 11-12):

Աստծո պատասխանը մեզ հիշեցնում է, որ Նա իր զորությունները կարող է մեր միջոցով գործել, նույնիսկ եթե մենք սահմանափակումներ ունենք: Այդուամենայնիվ, դժվար է ընդունել դա. ուստի և Մովսեսը շարունակում էր ընդդիմանալ և խնդրել Աստծուն, որ մեկ ուրիշին ուղարկի (Հմ.13): Եվ Աստված թույլ տվեց, որ Մովսեսի եղբայր Ահարոնն ընկերակցի նրան (Հմ.14):

Աստված գիտե՞ մենք ինչ ենք զգում: Նա կարող է տրամադրել և՛ խոսքեր, և՛ այլ անհրաժեշտ ամեն ինչը ուրիշներին ծառայելու և իր գործը կատարելու համար:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ ցույց տու՛ր, թե ինչպես կարող եմ այսօր իմ ձայնով ծառայել Քեզ: Ամեն:

Ասված խրատներում է մեզ ու վստահեցնում, որ Ինքը կարող է մեր միջոցով գործել նույնիսկ մեր վախի ու թուլության դառնիքին:

Սիայն զգոյշ եղիր և մեծ ուշադրութիւն դարձրու քո հոգուն: (Ք. Օր. 4. 9)

ԶԳՈՒՅՑ ԵՂԻՐ

Մի քանի ընկերներ որոշել էին Հանգիստն անցկացնել դահուկային կենտրոնում: Տեղ հասնելով՝ նրանք նկատեցին, որ դռան վրա փակցված են վտանգի մասին նախազգուշացնող նշաններ, ու սկսեցին սահնակներով սահել: Երկրորդ անգամ սահուղի մտնելիս նրանցից մեկը գոռաց՝ ձնահոսքը: Բայց դա նրա վերջին խոսքը եղավ. չհասցրեց փախչել ու զոհվեց ձնահոսքի մեջ: Ոմանք այդ մարդու զոհվելը բացատրեցին նրա անփորձությամբ: Բայց նա սկսնակ չէր, ժամանակին առաջնորդել էր վտանգավոր դահուկավազքեր: Մասնագետներից մեկն այդ առիթով գրեց, թե դահուկ ու սահնակ վարողները, որոնք ամենից ավելի են մարզված, ձնահոսքերի պարագայում սխալվելու ավելի մեծ հավանականություն ունեն. «Մարդը մահացավ, որովհետև շատ ոգևորված էր և տեղի տվեց իր զգուշությանը»:

Երբ Իսրայելը պատրաստվում էր գնալ դեպի խոստացված երկիր, Աստված կամեցավ, որ իր ժողովուրդը զգուշ և ուշադիր լինի: Ուստի պատվիրեց հնազանդվել իր բոլոր «կանոններին ու օրենքներին» (Ք. Օր. 4.1-2) և հիշել իր դատաստանը նրանց հանդեպ, ովքեր չհնազանդվեցին (Հմ. 3-4): Նրանք պետք է «զգուշ լինեն»՝ քննելու իրենք իրենց և «ուշադրություն դարձնելու իրենց հոգուն» (Հմ.9): Դա կօգնի, որ զգոն լինեն ինչպես դրսից եկող վտանգների, այնպես էլ ներսի հոգևոր անտարբերություն հանդեպ: Մենք կարող ենք թուլացնել մեր զգոնությունն ու ընկնել անտարբերության կամ ինքնախաբեության գիրկը: Բայց Աստված կարող է մեզ զորություն տալ՝ խուսափելու կյանքի ճախողումներից, եթե զգուշ լինենք: Հետևելով Իրեն և Հանգստանալով իր իմաստնություն ու ապահովության մեջ՝ մենք կարող ենք ուշադիր լինել և լավ որոշումներ կայացնել:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ մնալ զգոն և սիրալի՛ր հնազանդությամբ հետևել քեզ: Ամեն:

Յնարավոր է, որ թուլանա մեր հոգևոր զգոնությունը: Ուսի Աստծո սված իմաստությամբ զգոն լինենք մեր հավաստի տղառնացող վսանգների հանդիման:

Հորդորում և մխիթարում էինք ու աղաչում, որ ընթանաք, ինչպես որ վայել է Աստծուն, որ ձեզ կանչեց իր արքայությանն ու փառքին: (Ա. Թես. 2.12)

ԱՆՍԱՍԱՆ ԱՌԱՋ ԸՆԹԱՆԱԼ

«Հանգիստ» բանաստեղծության մեջ հեղինակը հակադրվում է հանգստի ժամանակը աշխատանքից առանձնացնելու միտումին՝ հարցնելով. «Մի՞թե իսկական ժամանց է տքնանքով ստեղծագործելը»: Նա հորդորում է իսկական ժամանցի համար կյանքի պարտականություններից խուսափելու փոխարեն օգտագործել ժամանակը, ոչ թե վատնել: Այլապես դա հանգիստ չի լինի: «Տեսնու՞մ ես գեղեցկությունը քեզ մոտ, քո շուրջը: Միայն նման գործերով հնարավոր կլինի գեղեցիկ տեսարան գտնել»: Բանաստեղծը եզրակացնում է, որ իսկական հանգիստն ու ուրախությունը սիրո և ծառայության միջոցով են գալիս:

Մի գաղափար, որ հիշեցնում է Պողոս առաքյալի հորդորը թեսաղոնիկեցիներին: Նա հավատացյալներին քաջալերում է «ընթանալ, ինչպես որ վայել է Աստծուն» (Ա. Թես. 2.12) և հայտնում է այլ մանրամասներ: Իսկ այդ նկարագրությունը ազնվություն, սիրո և ծառայության պատկերն է: Պողոսն աղոթում է, որ Աստված «աճեցնի և առատացնի սերը միմյանց և բոլորի հանդեպ» (3.12): Հիսուսին հավատացողներին հորդորում է, որ «ջանաք խաղաղ լինել: Եվ ամեն մեկն իր գործն անի, ու ձեր իսկ ձեռքով աշխատեք» (4.11): Դա կյանքի այն տեսակն է, երբ Աստված մեզ հնարավորություն է տվել պարկեշտություն մեզ վարվելով՝ բացահայտել ուրիշներին, հավատավոր կյանքի գեղեցկությունը (հմ.12):

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, շնորհակալ եմ, որ Քո գեղեցկությունն զգալու համար կարիք չունեն խուսափելու առօրյա կյանքի պարտականություններից ու եղանակից: Օգնի՛ր ինձ՝ իմանալ Քեզ հետ ապրած հանգիստ կյանքի ուրախությունը: Ամեն:

Տիրոջ ներկայությունը կօգնի մեզ ունենալ իսկական ուրախություն, երբ դաստիարակվենք հանգիստը համատեղել ծառայության հետ:

Պետրոսը պահվում էր բանտում, բայց եկեղեցին նրա համար անդադար աղոթում էր Աստծուն: (Գործք.12.5)

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐ

«**Ռուք կլինեք իմ խորհուրդների ու աղոթքների մեջ**», - խոստանում էր փոքրիկ քաղաքի բնակչուհի էդնա Դեխար և աղոթում ուրիշների համար: Բոլորը գիտեին տիկին էդնայի՝ դեղին կազմով մեծ տետրի մասին, որտեղ գրված էին մարդկանց անունները, որոնց համար տարեց կինը ամեն առավոտ բարձրաձայն աղոթում էր: Ճիշտ է, ոչ բոլորն են ստացել այդ աղոթքների պատասխանները, բայց կնոջ հուղարկավորության ժամանակ շատերն էլ վկայում էին, որ իրենց կյանքում Աստված արել է որոշակի բաներ, և իրենք դա վերագրում են այդ տիկնոջ ջերմեռանդ աղոթքների գորուծյանը: Աղոթքի գորուծյունը Աստված ցույց է տվել Պետրոսի բանտային փորձառության մեջ: Հերովդեսի մարդկանց կողմից առաքյալի ձերբակալվելուց, բանտարկվելուց և ապա «քառակազմ գինվորների չորս հերթափոխի հսկողությանը» հանձնվելուց հետո (Գործք 12.4) նրա ազատվելու հույսը շատ աղոտ էր: «Բայց եկեղեցին նրա համար անդադար աղոթում էր Աստծուն» (Հմ.5), նրանց աղոթքներում միշտ Պետրոսի անունը կար: Եվ Աստված հրաշք գործեց: Տիրոջ հրեշտակը հայտնվեց բանտախցում, արձակեց Պետրոսի շղթաները և տարավ ապահով տեղ՝ բանտի դռներից հեռու (Հմ. 7-10):

Հնարավոր է, որ ոմանք «խորհուրդներ և աղոթքներ» տերմիններն օգտագործեն առանց դրանք իսկապես կատարելու: Բայց մեր Հայրը գիտի մեր խորհուրդները, լսում է մեր աղոթքները և գործում է մեր անունով՝ իր կատարյալ կամքի համաձայն: Ուրիշների համար աղոթելը մեզ համար փոքր բան չէ, երբ ծառայում ենք մեծ ու հզոր Աստծուն:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ կարող եմ բոլոր հոգսերը բերել Քեզ և Դու կլսես: Ամեն:

Ինչդեռ ուրիշներն են մեզ համար աղոթում, եկե՛ք այսօր էլ մենք աղոթենք նրանց համար, ովքեր մեր աղոթքի կարիքն ունեն:

Տեր, դու ինձ քննեցիր և ճանաչեցիր: (Սաղմ. 139. 1)

ԱՍՏՎԱԾ ԾԱՆԱԶՈՒՄ Է ՔԵՉ

ԹՎում է, թե մայրս կարող է զգալ դժվարությունը հեռավորությունից վրա: Մի անգամ դպրոցական ծանր օրվանից հետո փորձեցի թաքցնել իմ մտահոգությունը՝ հուսալով, որ ոչ մեկը չի նկատի: Բայց մայրս անմիջապես հարցրեց, թե ինչ է պատահել և ավելացրեց. «Նախքան ժխտելի՞ հիշի՛ր, որ ես քո մայրն եմ: Ես եմ ծնել քեզ և ավելի լավ եմ ճանաչում քեզ, քան դու ինքդ»: Մայրս անընդհատ հիշեցնում է, թե ով եմ ես, լինում է իմ կողքին այն պահերին, երբ ես ամենաշատն եմ զգում դրա կարիքը:

Որպես Հիսուսին հավատացողներ՝ Աստված էլ հոգում է մեր մասին և լավ ճանաչում մեզ: Սաղմոսերգու Դավիթը գովաբանում է Աստծուն՝ Իր զավակների կյանքի հանդեպ ցուցաբերած ուշադրությունից համար՝ ասելով. «Տե՛ր, դու ինձ քննեցիր և ճանաչեցիր: Դու գիտես իմ նստելն ու վեր կենալը, հեռվից իմանում ես իմ մտածումները» (Սաղմ. 139. 1-2): Քանի որ Աստված ճանաչում է մեզ ու մեր յուրաքանչյուր մտածումը, ցանկությունն ու գործողությունը, ուրեմն չկա մեր գնացած մի տեղը, որը դուրս լինի Իր առատ սիրո և հոգատարությունից սահմաններից (Հմ. 7-12): Ինչպես գրել է Դավիթը. «Եթե արշալույսի թևերն առնեմ և բնակվեմ ծովի վերջին ծայրերին, այնտեղ էլ քո ձեռքն է առաջնորդելու ինձ, և քո աջն է բռնելու ինձ» (Հմ. 9-10): Մենք կարող ենք մխիթարվել՝ իմանալով, որ անկախ նրանից, թե որտեղ ենք, երբ աղոթում ենք Աստծուն, Նա մեզ առաջարկում է պետք եղած սերը, իմաստնությունն ու առաջնորդությունը:

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, հաճախ եմ լինում միայնակ ու սխալ հասկացված: Շնորհակալ եմ, որ հիշեցնում ես Քո ներկայության մասին իմ կյանքում: Գիտեմ, որ Դու տեսնում ես, լսում և սիրում ինձ, երբ թվում է, թե ոչ ոք չի տեսնում ինձ: Ամեն:

Հաճախ մտածում եմ, թե ոչ ոք չի հասկանում մեզ: Բայց Աստծո ներկայությունը միշտ փառալուրով է մեզ:

Միշտ պատրաստ եղեք պատասխան տալու ամեն մեկին, ով ձեր մեջ եղած հույսի մասին հարցնի: (Ա.Պետ. 3.15)

ՍՈԿՐԱՏՅԱՆ ԱԿՈՒՄԲԸ

1 941թվականին անգլիական Օքսֆորդի համալսարանում հիմնվեց Սոկրատյան ակումբը՝ գլխավորապես Հիսուսին հավատացողների և մերժողների կամ անաստվածների միջև բանավեճը խորսոսելու համար:

Աշխարհիկ համալսարանում կրոնական բանավեճը արտասովոր բան չէր: Զարմանալին այն էր, որ ակումբը տասնհինգ տարի ղեկավարում էր բրիտանացի հայտնի արձակագիր ու աստվածաբան Քլայվ Լյուիսը: Նա գիտեր, որ Հիսուսին հավատալու վստահելի ու լուրջ ապացույցներ կան, բայց նաև ընդունում էր, որ Քրիստոսին հավատալը կարող է դիմակայության հանդիպել:

Լյուիսը կիրառում է Պետրոս առաքյալի խորհուրդը, որ նա տալիս է հալածանքներից ցրված հավատացյալներին, երբ ասում է. «Տիրոջը՝ Քրիստոսին ձեր սրտերում սուրբ պահեք ու միշտ պատրաստ եղեք պատասխան տալու ամեն մեկին, ով ձեր մեջ եղած հույսի մասին հարցնի» (Ա.Պետ. 3.15): Պետրոսը երկու հիմնական կետ է նշում. մենք հիմնավոր պատճառներ ունենք Քրիստոսի հանդեպ մեր հույսի համար և պետք է մեր դատողությունը ներկայացնենք հեղուկյամբ ու երկյուղածորեն:

Քրիստոսին վստահելը կրոնական փախուստ կամ ցանկություն չէ: Մեր հավատքը հիմնված է պատմական փաստերի վրա՝ ներառյալ Հիսուսի հարություն ու արարչության վկայությունը: Երբ մենք վստահում ենք Աստծո իմաստնությունն ու Հոգու զորությունը, պատրաստ լինենք այդ մասին հայտնելու նաև ուրիշներին:

Աղոթք - Ամենակարող Աստված, շնորհակալ եմ քեզ՝ ինձ վստահելի ապացույցներ տալուդ համար, որոնք հաստատում են իմ հավատը քո հանդեպ: Ամեն:

Եթե հավատում ու վստահում ես Տեր Հիսուսին, դասրա՛ս եղիր այդ մասին հայտնելու ուրիշներին:

Երբ նա մեռելներից հարուբյուն առավ, նրա աշակերտները հիշեցին, որ սրա մասին էր խոսում: (ՅՈՒՆ. 2.22)

ՅԵՏԱԴԱՐՁ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Հետաքրքիր վեպի վերջին գլուխը սկզբում կարդալը ճիշտ է են համարում այն մարդիկ, ովքեր սիրում են պատմության անսպասելի ու անհայտ վերջաբանը: Բայց ոմանց համար էլ գիրք կարդալն ավելի հաճելի է, եթե արդեն գիտեն վերջաբանը:

«Հետադարձ ընթերցում» գրքի հեղինակ Ռիչարդ Հեյսը ցույց է տալիս, թե Աստվածաշունչը ըմբռնելու համար որքան կարևոր է գործնականացումը: Պատկերացնելով, թե ինչպես են բառերն ու իրադարձությունները կանխատեսում, արձագանքում և լույս սփռում միմյանց վրա, Հեյսը խորհուրդ է տալիս Սուրբ Գիրքը կարդալ հետադարձ:

Որպես հիմնավորում՝ նա ընթերցողներին հիշեցնում է, որ Հիսուսի աշակերտները Նրա հարությունից հետո միայն հասկացան քանդված տաճարը երեք օր անց վերականգնելու մասին հայտարարության իմաստը: Հովհաննես առաքյալն ասում է. «Նա իր մարմնի տաճարի մասին էր խոսում» (Հովհ. 2.21): Միայն այդ ժամանակ նրանք կհասկանային Զատիկի տոնակատարության իմաստը, որ նախապես երեք չէին հասկացել (Մատթ. 26. 178-29): Միայն հետադարձ հայացքով կարող էին մտածել, թե ինչպես Հիսուսը լիարժեք իմաստ տվեց Աստծո տան հանգեպ իրենց ունեցած խոր զգացումների մասին (Սաղմ. 69.9, Հովհ. 2. 16-17):

Եվ հիմա, Սուրբ գրությունները սկզբում ու վերջում կարդալով, մենք կկարողանանք Հիսուսի մեջ տեսնել այն ամենը, ինչի կարիքը մեզանից որևէ մեկը երբևէ ունեցել է:

Աղոթք - Երկնքում բնակվող Հայր, շնորհակալ եմ, որ թույլ տվիր տեսնելու Քո կարողությունը, հայտնեցիր ու բացահայտեցիր Քո ներկայության հրաշքը այնպիսի ձևերով, որոնք չէի կարող կանխատեսել: Ամեն:

Կյանքի դժվարությունները անհանգստացնում են մեզ, բայց հավասարով Ասծուն ու կարդալով Խոսքը՝ կկարողանանք հավիտենականության ճեղքականով հասկանալ կյանքը:

Գաղատի մեռած է առանց գործերի: (Գաղ. 2.26)

ՀԱՎԱՏՔԸ՝ ԳՈՐԾԵՐՈՎ

2021 թ. հունիսյան մի երեկո մոլեզված քամին ավերեց մի ընտանիքի գոմը: Փաստը տխուր էր, որովհետև գոմը 1800-ականներից ընտանիքի սեփականություն համարվող տարածքում էր: Հաջորդ օրը Ջոնն ու Բարբը եկեղեցի գնալու համար անցնում էին այդ վայրով, տեսան կատարվածը և մտածեցին, թե ինչով կարող են օգնել ընտանիքին: Իմանալով, որ օգնություն կարիք կա ավերածությունները մաքրելու գործում, նրանք անմիջապես վերադարձան տուն, փոխեցին հագուստներն ու գալով՝ մինչև երեկո աշխատեցին: Ծառայելով այդ ընտանիքին՝ նրանք գործի զրեցին իրենց հավատքը:

Հակոբոսն ասում է.«Հավատը մեռած է առանց գործերի» (Հաղ. 2.26): Որպես օրինակ՝ նա հիշում է Աբրահամին, որը հնազանդվելով հետևեց Աստծուն, երբ չգիտեր՝ ուր է գնում (Հմ.23, տե՛ս Ծնն. 12. 1-4, 15.6, Եբր. 11.8), Ռախաբին, որը ցույց տվեց իր հավատը Իսրայելի Աստծո նկատմամբ, երբ պահեց լրտեսներին, որոնք եկել էին ստուգելու Երիզով քաղաքը (Հաղ. 2.25, տե՛ս Հես. 2. 6, 17):

«Եթե մեկն ասի, թե հավատ ունի, բայց արված գործեր չունենա» (Հաղ. 2.14), դա նրան ոչ մի օգուտ չի բերի: «Հավատը արմատն է, իսկ բարի գործերը՝ պտուղները,- գրում է Աստվածաշնչի մեկնաբան Մեթյու Հենրին,- և մենք պետք է հոգ տանենք, որ երկուսն էլ ունենանք»: Աստված մեր բարի գործերի կարիքը չունի, բայց մեր հավատը ապացուցվում է մեր գործերով:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, թող որ ծառայեմ Քեզ՝ Քո հանդեպ իմ ունեցած հավատի ու սիրո պատճառով: Ամեն:

Եթե իսկապես հավատում ու սիրում ես Աստծուն, ցույց տու դա քո կատարած գործերով:

Մարդը չգիտի, թե ինչ է լինելու: (Ժող. 10.14)

ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ՎՍԱՐՅԵՆՔ ԱՍՏՕՈՒՆ

2010 թ. Լասլո Հանյեգն իր առաջին գնումը կատարեց այդ ժամանակ շատ փոքր արժեք ունեցող բիթքոինով՝ երկու պիցցայի համար վճարելով 10 հազար բիթքոին (25 դոլար): 2021-ին այդ նույն դրամանիշն արդեն 500 միլիոն արժեք: Մինչ այդ Լասլոն շարունակում էր պիցցայի համար վճարել այդ էժան միջոցով՝ ընդհանուր առմամբ վճարելով 100 հազար բիթքոին: Եթե նա պահեր այդ դրամանիշները, ապա հիմա դարձած կլիներ միլիարդատեր, կընդգրկվեր Ֆորբսի «աշխարհի հարուստների» ցանկում: Եթե՝ միայն իմանար, թե ինչ է սպասվում: Իհարկե, Հանյեգը և մեզանից ոչ մեկը չէր կարող իմանալ դա: Չնայած ապագան հասկանալու և վերահսկելու մադկանց փորձերին՝ Ժողովողի ասածը ճիշտ է.«Մարդը չգիտի, թե ինչ է լինելու» (Հմ.10.14): Ոմանք, իհարկե, ինքնախաբեություն մտածում են, թե իրենք գիտեն ավելին, կամ որ ավելի վատ է, իբր որոշակի պատկերացում ունեն ուրիշի կյանքի կամ ապագայի մասին: Բայց ինչպես Ժողովողն է ընդգծված հարցնում.«Թե իրենից հետո ինչ է լինելու, ո՞վ կարող է հայտնել նրան» (Հմ.14): Ոչ մեկը: Աստվածաշունչը հակադրում է իմաստունին և հիմարին ու նրանց բազում տարբերություններից մեկն է համարում ապագայի հանդեպ խոնարհությունը (Առ. 27. 1): Իմաստուն մարդը գիտակցում է, որ որոշումներ կայացնելու ժամանակ միայն Աստված գիտի, թե ինչ կա հորիզոնում: Իսկ հիմարները ենթադրում են ունենալ այն գիտելիքը, որ իրենցը չէ: Թող որ մենք ունենանք իմաստունություն՝ վստահելով մեր ապագան Միակին, Նրան, որ իրականում գիտի ամեն բան:

Աղոթք - Սիրելի Աստված, օգնի՛ր ինձ այսօր, որ ուղղակի վստահեմ Քեզ: Ամեն:

Փորձում եմ աղագան վերահսկել: Բայց ավելի լավ է գալի՛ք օրերի համար վստահել Աստուհ:

Ուշացած ակնկալիքը սիրտը կհիվանդացնի, բայց կատարված իղձը կյանքի ծառ է: (Առ. 13.12)

ՅՈՒՅՍԵՐ ԵՎ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ տեղափոխվեցի Անգլիա, ամերիկյան Գոհաբանություն օրը դարձավ նոյեմբերյան սովորական մի օր, թեև ես հաջորդ շաբաթավերջին խնջույք կազմակերպեցի ու հավաքեցի ընկերներին: Մենք բոլորս նման ենք իրար. հատուկ առիթներով ու տոն օրերին ուզում ենք լինել մեզ համար թանկ մարդկանց հետ: Իսկ եթե մեկը բացակայում է, աղոթում ենք, որ մեր բաժանված ընտանիքը խաղաղ լինի:

Այս օրերին աղոթե՛լն ու աստվածաշնչյան իմաստնությունների մասին մտածելը օգնել են ինձ: Հատկապես Սողոմոն թագավորի առակներից մեկը. «Ուշացած ակնկալիքը սիրտը կհիվանդացնի, բայց կատարված իղձը կյանքի ծառ է» (Առ. 13.12): Այս առակում Սողոմոնը հայտնում է, թե «հետաձգված հույսը», շատ ցանկալի մի բանի սպասումը ինչպիսի բարկություն ու ցավի կարող է հասցնել: Իսկ երբ այն իրականանում է, կենաց ծառի նման մեզ դարձնում է թարմ ու առողջ:

Մեր որոշ ցանկություններ ու հույսեր կարող են անմիջապես չկատարվել: Մի մասն էլ կարող են իրականություն դառնալ միայն Աստծո միջոցով, նույնիսկ մեր մահից հետո: Բոլոր դեպքերում կարող ենք վստահել Նրան՝ իմանալով, որ Նա մեզ անդադար սիրում է: Եվ մի օր մենք կմիանանք մեր սիրելիների հետ, երբ խնջույք անենք Իր հետ և շնորհակալություն հայտնենք Իրեն (տե՛ս Հայտ. 19. 6-9):

Աղոթք - Մեր Արարի՛չ, Դու իրագործում ես իմ խորագույն ցանկությունները: Քեզ եմ հանձնում հույսերս ու իղձերս՝ խնդրելով տալ այն, ինչ Դու ես կամենում: Ամեն:

Մեր ցավերի, կարիքների ու նեղությունների ժամանակ Ասված մեզ հետ է՝ մեզ հույս ներժնչելու և մեր ցանկությունները Իր կամով իրականացնելու համար:

Եվ նրանց աչքերից պիտի սրբի ամեն արտասուք. այլևս մահ չի լինելու, չի լինելու նաև ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ: (Հայտն. 21.4)

ՀԱՐԱՏԵՎՈՂ ՀՈՒՅՍ

Բ Ժիշկները չորս տարեկան Սողոմոնի մոտ ախտորոշեցին Դյուշենի մկանային դիստրոֆիա: Մեկ տարի անց մասնագետները, հետևելով երեխայի մկանների աճին, խորհուրդ տվեցին անվասայլակ օգտագործել: Բայց Սողոմոնը ընդվզեց ու հրաժարվեց դրանից: Այդ ժամանակ ընտանիքն ու բարեկամները աղոթեցին երեխայի համար և դրամահավաք կազմակերպեցին, որպեսզի նրա համար ապահովեին վարժեցրած մի շուն, որը հնարավորինս երկար նրան հեռու կպահեր սայլակից: «Պատմություններ կյանքի համար» կազմակերպությունը, որ մարզել էր իմ շանը, այժմ մեկ այլ շան է մարզում Սողոմոնին ծառայելու համար:

Թեև երեխան իր բուժումն ընդունում է հաճախ երգելով ու Աստծուն փառաբանելով, բայց դժվար օրեր էլ են լինում: Այդպիսի մի օր Սողոմոնը գրկեց մորն ու ասաց. «Ի՛նչ լավ է, որ դրախտում Դյուշենի հիվանդություն չկա»:

Հիվանդության հետևանքներն ազդում են հավիտենությունյան այս կողմում գտնվողների վրա: Սողոմոնի նման, սակայն, մենք բոլորս մշտական հույս ունենք, որն ամրապնդում է մեր վճռականությունը այդ անխուսափելի դժվար օրերին: Աստված մեզ տալիս է «նոր երկնքի ու նոր երկրի» խոստումը (Հայտն. 21.1): Մեր Արարիչն ու Պահապանը «բնակվում է մեզ հետ» (Հմ.3): Նա «պիտի սրբի ամեն արտասուք. այլևս մահ չի լինելու, չի լինելու նաև ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ» (Հմ.4): Երբ սպասելը լինում է «չափազանց երկար» կամ «չափազանց դժվար», կարող ենք խաղաղվել, որովհետև Աստծո խոստումն է կատարվելու:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմ, որ իմ վճռականությունն ավելացնում ես հարատև հույսի երաշխավորությամբ: Ամեն:

Եթե նոր երկնքի ու նոր երկրի խոսումը մխիթարում է մեզ, քաջալերենք ցավի մեջ եղող մեր ընկերներին՝ Ասծո խոսումների հարսն հույսով:

Ների՛ր ամեն անօրենություն և ընդունի՛ր, ինչ որ բարի է: (Ովս. 14.2)

ՕՐՅՆՅԱԼ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Գրեղիի մեքենայի համարանիշի փոխարեն դրոշմված էր **ՍՆԱՆԿ (BROKE)** բառը: Այն լիովին համապատասխանում էր միջին տարիքի խաղամուկին, շնացողին ու խաբեբային: Նա կործանված էր, սնանկացած և Աստծուց հեռացած: Բայց այդ ամենը փոխվեց մի երեկո, երբ նա հյուրանոցի իր սենյակում զգաց Աստծո շոգու ներկայութունը: Նա խոստովանեց իր մեղքերն ու եկավ Հիսուսի մոտ՝ ներում ստանալու: Եվ այդ կործանված մարդը, որ կարծում էր, թե մինչև 40 տարի էլ չի ապրելու, հաջորդ երեսուն տարիներին ապրեց Աստծուն ծառայելով՝ որպես փոխված մարդ ու Հիսուսին հավատացող: Եվ նրա մեքենայի «համարանիշն» էլ փոխվեց՝ «ՍՆԱՆԿ»-ից դառնալով «ՓՐԿՎԱԾ»:

Գրեղին ապաշխարեց: Նույնը, ինչ Աստված կոչ արեց կատարել Իսրայելին.«Ո՛վ Իսրայել, Տիրոջը՝ քո Աստծուն դարձի՛ր,.....Ձեզ հետ խոսքեր վերցրե՛ք և վերադարձե՛ք Տիրոջը. ասացե՛ք նրան.«Ների՛ր ամեն անօրենություն և ընդունի՛ր, ինչ որ բարի է» (Ովս. 14.1-2): Մեղքերը՝ մեծ թե փոքր, շատ թե քիչ, բաժանում են մեզ Աստծուց: Այդ բացը կարելի է լրացնել մեղքից դեպի Աստված դառնալով ու ներում ստանալով, որը Նա տվել է փրկվածներին՝ Հիսուսի մահվան միջոցով: Անկախ նրանից, դու Քրիստոսի համար պայքարող հավատացյալ ես, թե Գրեղիի նման մեկը, քո ներումը ընդամենը մի աղոթքի կարիք ունի:

Աղոթք - Հայր, քննի՛ր իմ սիրտն ու գտի՛ր անկմանս և Քեզանից հեռու մնալուս պատճառը: Մաքրի՛ր ինձ և օգտագործի՛ր Քո փառքի համար: Ամեն:

Մեղեքը մեզ բաժանում են Աստուց: Խոստովանենք դրանք, որողեսպի Իր Որդու՝ Հիսուսի միջոցով վայելենք Նրա ներումը:

Մենք նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Չիսուսով հաստատված բարի գործերի համար: (Եփ. 2. 10)

ՇԱՏ ԳԵՂԵՑԻԿ

Ես շատ փոքր էի, երբ առաջին անգամ նորածին տեսա: Սարսափել էի, որովհետև հիվանդանոցի պատուհանից իմ տեսածը փոքրիկ, կնճռոտ, առանց մազի, կոնաձև գլխով մի երեխա էր: Իսկ մեր կողքին կանգնած էր նորածնի մայրը, որը հիացած բոլորին հարցնում էր. «Նա գեղեցիկ է, չէ՞»: Այս դիպվածը հիշեցի, երբ մի տեսաերիզ էի նայում, որում երիտասարդ հայրն իր փոքրիկ աղջնակի համար երգում էր. «Դու այնքա՛ն գեղեցիկ ես» երգը: Հոր համար իր դստրիկը ամենագեղեցիկ էակն էր:

Աստված է՞լ է մեզ այդպես նայում: Եփեսացիներին ուղղված նամակի 2. 10-ում ասվում է, որ մենք «Նրա ստեղծագործությունն ենք», Նրա գլուխգործոցը: Նկատի ունենալով մեր դժվարություններն ու ճախողումները՝ կարող ենք կասկածել, որ Նա շատ է սիրում մեզ, կամ մենք կարևոր ենք Իր համար: Բայց Աստված մեզ չի սիրում, որովհետև արժանի ենք սիրո (Հմ.3-4): Նա մեզ սիրում է, որովհետև Ինքը սեր է (Ա. Հովհ. 4.8): Նրա սերը Իր շնորհքի արդյունքն է: Իր սիրո մեծությունը Նա ցույց տվեց, երբ Հիսուսի զոհաբերության միջոցով կյանք տվեց նաև մեզ, երբ մենք մեռած էինք մեր մեղքերի հետևանքով (Եփ. 2. 5,8):

Աստծո սերը անկայուն չէ: Այն մշտական է: Նա սիրում է անկատարներին, թուլերին, շփոթվածներին: Երբ մենք ընկնում ենք, Նա այդտեղ է, որ բարձրացնի մեզ: Մենք Նրա գանձն ենք և այնքա՛ն գեղեցիկ ենք Իր համար:

Աղոթք - Թանկագին Չայր, շնորհակալ եմ իմ հանդեպ Քո սիրո համար: Ամեն:

«Ասված սեր է»: Ընդունե՛մ Նրա անսահման սերը մեր հանդեպ՝ հակառակ մեր գործած բոլոր հանցանքների ու մեղքերի:

Աստծո փրկարար շնորհը հայտնվեց բոլոր մարդկանց: (Տիտ. 2.11)

ՔԱՅԼԻՐ ԻՆՁ ՅԵՏ

Մի քանի տարի առաջ հանրահայտ դարձավ «Հիսուսն ինձ հետ է քայլում» երգը՝ ավետարանական մի երգչախմբի կատարմամբ: Երգի բառերի ներքո հետաքրքիր պատմություն է թաքնված: Երգչախումբը կազմել էր ջազ երաժիշտ Քերթիս Լանդին, երբ ընդգրկվեց թմրամոլությունից ազատվելու ծրագրում: Համախմբելով թմրամոլներին, որոնք ներշնչվել էին մի հին օրհներգով, նա այդ մարդկանց համար գրեց այս երգը՝ որպես հույսի ու ապաքինման միջոց: Երգչախմբի անդամներից մեկն ասել է. «Մենք երգում էինք մեր կյանքերի համար: Խնդրում էինք Հիսուսին, որ փրկի մեզ և օգնի՝ ազատվել այդ մոլուցքից»: Մեկ ուրիշը խոստովանել է, թե ցավն սկսել է պակասել, երբ ինքն սկսել է երգել: Խմբի անդամները ոչ միայն թղթի վրա գրված բառերն էին երգում, այլև աղոթք էին մատուցում՝ փրկություն ստանալու համար: Այդ մարդկանց փորձառությունը լավագույնս նկարագրում է Աստվածաշնչի ընթերցումը: «Աստծո փրկարար շնորհը հայտնվեց բոլոր մարդկանց» (Տիտ. 2.11): Թեև հավիտենական կյանքը այդ պարզևի մի մասն է (Հմ.12), Աստված այժմ աշխատում է մեզ վրա՝ զորացնելով մեզ, որպեսզի կարողանանք վերագտնել մեր ինքնատիրապետումը, մերժել աշխարհիկ ցանկությունները, «որպեսզի մեզ ամեն անօրենությունից փրկի և իր սեփական ժողովուրդը դարձնի» (Հմ. 12,14): Ինչպես պարզեցին երգչախմբի անդամները, Հիսուսը ոչ միայն ներում է մեր մեղքերը, այլև փրկում է կործանարար ապրելակերպից: Հիսուսը քայլում է ինձ հետ, քեզ հետ և յուրաքանչյուրի հետ, ով դիմում է Իր օգնությունը: Նա մեզ հետ է և մեզ հիմա առաջարկում է փրկություն, իսկ ապագայում՝ հույս:

Աղոթք - Տե՛ր Յիսուս, Քո կարիքն ունեն: Ների՛ր իմ մեղքերը, փրկի՛ր ինձ կործանարար սովորություններից և փոխի՛ր ինձ ներսից: Ամեն:

Ինչի՞ կարիք ունես, որ Յիսուսը դիմի փոխի: Մի՛ հուսահատվիր, որովհետև նա քայլում է քեզ հետ:

Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք: (Մատթ. 25. 40)

ՄԻ ՏԱՔ ՃԱՇ

Նոկտեմբերյան մի օր 54 անտուն մարդիկ բավական հարուստ կերակրացանկով հյուրասիրվեցին մի կնոջ կողմից, որն իր ծննդյան 54-ամյակի առիթով որոշել էր Չիկագոյի փողոցներից հավաքել անօթևաններին ու կերակրել: Հետո կինը սոցիալական ցանցում էլ խորհուրդ տվեց մարդկանց՝ հետևել իր օրինակին՝ բարու թյուն անել որպես տարեգարձի նվեր:

Այս պատմությունն ինձ հիշեցնում է Տեր Հիսուսի խոսքերը Մատթեոս 25-ում. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. «Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, ի՛նձ արեցիք» (Հմ. 40): Այս խոսքերը Նա ասաց, երբ հայտարարում էր, որ Իր ոչխարները կհրավիրվեն Իր հավիտենական թագավորություն՝ ստանալու իրենց ժառանգությունը (Հմ.33): Այդ ժամանակ Հիսուսը կրնդունի, որ դրանք այն մարդիկ են, որոնց կերակրել ու հագցրել են Իր հանդեպ ունեցած հավատից դրդված՝ ի տարբերություն այն նենգ կրոնականների, որոնք Իրեն չէին հավատում (տե՛ս 26. 3-5): «Արդարները» Հիսուսին կհարցնեն, թե երբ են կերակրել ու հագցրել նրան (25. 37), «Եվ թագավորը կպատասխանի ու նրանց կասի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք» (Հմ.40):

Քաղցածներին կերակրելը միջոցներից մեկն է, որով Աստված մեզ օգնում է, որ հոգ տանենք Իր ժողովրդի հանդեպ՝ ցույց տալով մեր սերն ու հարաբերությունն Իր հետ: Թող Նա օգնի մեզ այսօր, որ բավարարենք ուրիշների կարիքները:

Աղոթք - Ողորմած Աստված, խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ այսօրվա կատարած գործերով կարողանամ ցույց տալ Քո սերը: Ամեն:

Ասծո սերը ցույց տալու համար կարելի է բարի գործեր անել ու հոգալ կարիքավորների մասին:

Սեղմ պատասխանը ցատունը հանգստացնում է, իսկ նախատական խոսքը գրգռում է բարկությունը: (Առ. 15.1)

ԱԶԴԱՐԱՐՈՂ ԶԱՅՆԵՐ

Երբևէ մոտիկից տեսե՞լ եք բոժոժավոր օձ: Եթե՛ այո, ուրեմն նկատած կլինեք, որ ինչքան մոտենում ես, այնքան ավելի է ուժեղանում նրանց յուրահատուկ շառաչյունը: Մասնագետների հետազոտությունները ցույց են տվել, որ վտանգի մոտենալուն զուգահեռ՝ ավելանում է այդ օձերի բոժոժների տատանումների արագությունը: Եվ նրանց արձակած ձայնը երբեմն կարող է սխալ պատկերացում տալ սողունի գտնվելու մասին: Ինչպես գրել է հետազոտողներից մեկը. «Լսողը, սխալ ընկալելով այդ ձայնը, ...կարող է մտածել, որ վտանգը դեռ հեռու է»: Մարդիկ երբեմն բախումների ժամանակ կարող են ձայնը բարձրացնել, կոպիտ բառերով ու զայրույթով խոսել: Առականների հեղինակը այդպիսի պահերի համար իմաստուն խորհուրդներ է տալիս, ասելով. «Ամոքիչ լեզուն կյանքի ծառ է» և «Իմաստունների շրթունքները գիտություն են տարածում» (Հմ. 15. 4,7):

Հիսուսը այսպես է հիմնավորում հակառակորդների հետ մեղմորեն խոսելու անհրաժեշտությունը. «Սիրե՛ք ձեր թշնամիներին, օրհնե՛ք ձեզ անիծողներին, բարի՛ք արեք ձեզ ատողներին և աղոթե՛ք ձեզ չարչարողների ու հալածողների համար, որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է» (Մատթ. 5. 44-45) և հաշտություն փնտրել «սիրաշահելով նրանց» (18.15): Վեճերի ժամանակ ձայնը բարձրացնելու կամ անբարյացակամ բառեր ասելու փոխարեն՝ քաղաքավարի լինենք, ցուցաբերենք իմաստնություն ու սեր ուրիշների հանդեպ, քանի որ Աստված մեզ առաջնորդում է Իր Հոգով:

Աղոթք - Երկնավոր Դայր, օգնի՛ր ինձ սիրով լուծելու խնդիրները հակառակորդներիս հետ: Ամեն:

Բախումների ժամանակ դժվար է ազնվորեն ու սիրով վարվել: Բայց Սուրբ Դոգին օգնում է մեզ, որ ուժաղբությանք ընճրեմք մեր բառերն ու գործողությունները:

Ամեն օր միմյանց հորդորեք, քանի որ այսօրը դեռ կա (Եբ. 3. 13)

ՓՈՒՆԱԴԱՐՁ ՔԱՋԱԼԵՐԱՆՔ

Եվս մեկ շաբաթ անօգուտ բուժումների պատճառով հուսահատված էի և ուժասպառ: Ձէի ուզում խոսել մեկի հետ, մտածել որևէ բանի մասին, նույնիսկ՝ աղոթել: Ճարահատված միացրի հեռուստացույցը, որն այդ պահին գովազդ էր ցուցադրում: Աղջնակը խոսում էր իր կրտսեր եղբոր հետ և ասաց. «Դու չեմպիոն ես»: Երբ նա հաստատում էր իր ասածը, եղբայրը ժպտաց, ես՝ նույնպես:

Աստծո ժողովուրդը միշտ պայքարել է հուսահատության ու կասկածի դեմ: Մեջբերելով 95-րդ սաղմոսը, որը հաստատում է, թե Սուրբ Հոգու միջոցով կարելի է լսել Աստծո ձայնը, երբայեցիններին ուղղված նամակի հեղինակը Հիսուսին հավատացողներին զգուշացնում է խուսափել իսրայելցիների՝ անցյալում կատարած սխալներից (Եբ. 3.7-11): Նա գրում է.«Տեսե՛ք, եղբայրներ, թող երբեք ձեզանից մեկի մեջ անհավատ, չար սիրտ չլինի և հեռանա կենդանի Աստծուց: Այլ ամեն օր միմյանց հորդորե՛ք» (Հմ.12-13):

Քրիստոսով ապահովված հույսի փրկարար շղթայի շնորհիվ մենք կարող ենք ստանալ այն հզոր շարժիչ ուժը, որն անհրաժեշտ է մեզ հարատևելու համար: Երբ հավատացյալներից մեկը կկասկածի, մյուսները կարող են հաստատել ու սիրով օրինակներ ներկայացնել: Երբ Աստված զորացնում է մեզ, մենք կարող ենք փոխադարձ քաջալերանք առաջարկել միմյանց:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, օգնի՛ր, որ ապրեմ Քեզ համար և իմ խոսքերով ու գործերով սիրով բարձրացնեմ ուրիշներին: Ամեն:

Մեր դժվարությունների մեջ Աստված մխիթարում ու փառալերում է մեզ՝ օգտագործելով որևէ մեկի հաստատող խոսքերը: Ուսի մեմֆ էլ փառալերեմ ուրիշներին:

Հավատացյալներին օրինակ եղի՜ր խոսքով, վարքով, սիրով, հավատով, անարատությամբ: (Ա. Տիմ. 4.12)

Ո՞Վ ԵՍ ԴՈՒ

Տասը տարի մնալով անզավակ՝ ես ու կինս որոշեցինք տեղափոխվել մեկ այլ երկիր: Մեր այդ որոշումը ինձանից պահանջում էր թողնել սիրածս աշխատանքը: Վհատված դիմեցի ընկերոջս՝ Լիամին:

-Ես չգիտեմ՝ թե ով եմ, և որն է իմ կոչումը:

-Ռազիոյում այլևս չե՞ս աշխատում: Իսկ ինչպե՞ս է ձեր ամուսնական կյանքը:

Զարմացած այդպիսի կտրուկ անցումից՝ ասացի, որ ես ու Մերին լավ ենք: Ծիշտ է, մենք ունենք լուրջ մտահոգություն, բայց այդ դժվարության մեջ ավելի ենք մտերմացել:

«Նվիրումը ավետարանի առանցքն է,- ժպտալով ասաց ընկերս: -Գիտե՞ք, թե աշխարհը որքան կարիք ունի ձեզ նման նվիրված գույգերի: Դուք կարող եք նույնիսկ չիմանալ, թե ինչ ազդեցություն եք ունենում պարզապես ձեր գոյությունից, լինելով այն, ինչ որ եք»:

Երբ ծանր աշխատանքը հուսահատեցրեց Տիմոթեոսին, Պողոս առաքյալը նրան նոր աշխատանքային ասպարեզ հնուհեց, այլ խրախուսեց ապրել աստվածապաշտ կյանքով, օրինակ լինել «խոսքով, վարքով, սիրով, հավատով, անարատությամբ» (Ա.Տիմ. 4.12): Հավատարմորեն ապրելով՝ նա լավագույնս կարող էր ազդել ուրիշների վրա:

Դյուրին է գնահատել մեր կյանքը՝ հիմնվելով մեր ասպարեզի հաջողությունների վրա; Բայց ճշմարիտ խոսքը, շնորհալի արարքը, նույնիսկ հավատարիմ ամուսնությունը կարող են մեծ փոփոխություններ բերել, քանի որ դրանց միջոցով Աստծո բարությունն է հասնում աշխարհին:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնի՜ր ինձ հիշել, որ կարևորը ոչ թե իմ կատարած աշխատանքն է, այլ այն, թե ով եմ ես դառնում: Խնդրում եմ ինձ ավելի նմանեցրու Քեզ: Ամեն:

Մեր Երջադասում ԵՍ ԵՄ օրինակելի մարդիկ: Կարևոր է, որ մենք դառնանք հավասարմության օրինակներ:

Ես տեսա Եգիպտոսում գտնվող իմ ժողովրդի չարչարանքը,....և իջա, որ ցրանց ազատեմ: (Ել. 3.7-8)

ՃՆՈՒՆԴԻ ԼՈՒՅՍ

Ընտանիքով հրավիրված էինք մեր ընկերներից մեկի կազմակերպած գերմանական ավանդական Ամանորի տոնակատարություն: Սեղաններին համեղ քաղցրավենիքներ էին, իսկ տոնածառին իրական վառվող մոմեր: Այնպես, որ ծառն ասես բոցավառված լիներ: (Ապահովություն համար ծառի մոմերը վառվում են միայն մեկ գիշեր):

Տեսնելով բոցավառ ծառը՝ մտաբերեցի Մովսեսի և Աստծո հանդիպման ժամանակ այրվող մացառը: Անապատում ոչխար արածեցնող Մովսեսը զարմացավ, որ մորենին կրակով վառվում էր, բայց չէր սպառվում: Երբ նա մոտեցավ հասկանալու կատարվածը, Աստված մորենու միջից կանչեց նրան: Այրվող մացառը ոչ թե դատաստանի, այլ Իսրայելի ժողովրդի փրկության ուղերձն էր: Աստված տեսել էր Եգիպտոսում ստրկացած իր ժողովրդի դժբախտությունն ու թշվառությունը և «Իջավ, որ նրանց ազատի» (Ել. 3.8):

Աստված Իսրայելցիներին փրկեց եգիպտացիներից, բայց ողջ մարդկությունը դեռ կարիք ունի փրկության ոչ միայն ֆիզիկական տառապանքից, այլև դրա հետևանքներից, որոնք չարիքն ու մահը բերեցին մեր աշխարհ: Հարյուրավոր տարիներ անց Աստված արձագանքեց՝ ուղարկելով Լույսը, Իր Որդուն՝ Հիսուսին (Հովհ.1. 9-10)՝ ոչ թե «դատելու աշխարհը, այլ որպեսզի նրա միջոցով աշխարհը փրկվի» (3.17):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ Հիսուսին, որպես Լույս, աշխարհ ուղարկեցիր: Ամեն:

Ավանդական սովորույթները լավ են, բայց եկե՛ք այսօր տոնենք Հիսուսի միջոցով եղած Ասծո փրկությունը:

Ինչ էլ որ անեք, սրտանց արեք, ինչպես կանեիք Տիրոջ և ոչ թե մարդկանց համար: (Կող. 3.23)

ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՍԻՐՈՎ

Ռ եբեկա լի Քրամապները առաջին աֆրոամերիկացի կինն է, որ բժշկություն ասպարեզում արժանացել է դոկտորական աստիճանի: Իր կյանքի ընթացքում (1831-1895) նա անտեսված էր ու չգնահատված: Սակայն նա հավատարիմ մնաց իր կոչմանը՝ մարդկանց բուժելուն: Թեև սեռի ու ցեղի պատճառով ոմանք իրեն չէին ընդունում, բայց ինքը խիզախորեն շարունակեց աշխատել, գնալ, ուր կանչում էր մասնագիտական ու մարդկային խղճմտանքը: Նա հավատում էր, որ կանանց, երեխաներին ու ազատ արձակված ստրուկներին բուժելը Աստծոն ծառայելու միջոց էր: Դժբախտաբար, նրա ծառայությունները պատշաճ գնահատում ստացան միայն մեկ դար անց:

Լինում են պահեր, երբ անտեսվում ենք, չենք գնահատվում մեր շրջապատում: Բայց աստվածաշնչային իմաստությունները հիշեցնում են. երբ Աստված մեզ կոչել է մի գործի, մենք չպետք է կենտրոնանանք աշխարհի հավանությունն ու ճանաչումը ձեռք բերելու վրա, այլ «սրտանց արեք, ինչպես կանեիք Տիրոջ և ոչ թե մարդկանց համար (Կող. 3.23): Կենտրոնանալով Աստծուն ծառայելու վրա՝ մենք ի վիճակի կլինենք նույնիսկ ամենադժվարին առաջադրանքները Տիրոջ զորությունքով ուրախություն կատարելու: Հետևաբար հարկավոր է ավելի քիչ մտահոգվել երկրային ճանաչում ստանալով և ավելի շատ ձգտել այն պարգևին, որ միայն Ինքը կարող է ապահովել (Հմ.24):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ ինձ կանչեցիր Քեզ համար բարի գործեր անելու: Օգնի՛ր ինձ, որ կենտրոնանամ այն բաների վրա, որ Դու ես ինձ հանձնարարում: Ամեն:

Մարդիկ կանեսեն ու կարհամարհեն մեզ, բայց կարևոր է, որ առաջնահերթությունը սաճի Աստծուն ու Նրա սված կոչմանը:

Տո՛ւր մեզ այսօր մեր հանապազօրյա հացը: (Մատթ. 6.11)

ԱՄԵՆՕՐՅԱ ԿԱԽՅԱԼՈՒԹՅՈՒՆ

Մի առավոտ ես ու կինս, ծանր աշխատանքային շաբաթից հետո հոգնած, որոշել էինք մի քիչ երկար քնել: Մեր երեխաներն էլ որոշել էին ինքնուրույն նախաճաշ պատրաստել իրենց համար և վաղ առավոտյան արդեն խոհանոցում էին: Հանկարծ լավեց մի շրթկոց, և ես, անկողնուց վեր թռչելով, վազեցի խոհանոց: Տեսա, որ մեր հինգ տարեկան տղան՝ Զոնասը, ջարդել էր ափսեն ու այժմ ավելը ձեռքին փորձում էր հավաքել թափված վարսակի ալյուրը: Երեխաները քաղցած էին, փորձում էին ինքնուրույն սնվել, և արդյունքը հաստատ նախանձելի չէր:

Մարդկային առումով ճիշտ է, որ երեխաները պետք է աճեն ու կախված վիճակից անցնեն անկախություն: Իսկ Աստծո հետ մեր հարաբերությունների հասունությունը նշանակում է անկախությունից անցնել Իրենից կախում ունենալու: Աղոթքն այն միջոցն է, որում մենք կիրառում ենք կախվածության այդպիսի եղանակներ: Երբ Հիսուսը Իր աշակերտներին և հավատացյալներին սովորեցնում էր աղոթել. «Տո՛ւր մեզ այսօր մեր հանապազօրյա հացը» (Մատթ. 6.11), հենց այդ կախյալ լինելու աղոթքն էր սովորեցնում: Հացը սննդի, փրկության և առաջնորդության խորհրդանիշն է (Հմ. 11-13): Այդ ամենին և ավելիին հասնելու համար մենք կախված ենք Աստծուց:

Չկան Հիսուսի ինքնագործ հավատացյալներ, և մենք երբեք չպիտի ավարտենք Իր շնորհքից օգտվելը: Ամբողջ կյանքի ընթացքում թող որ միշտ մեր օրն սկսենք Իրենից կախվածության կեցվածքն ընդունելով՝ երբ աղոթում ենք. «Հա՛յր մեր, որ երկնքում ես» (Հմ.9):

Աղոթք - Սիրելի՛ Հիսուս, Դու ես Իմ Արարիչն ու պահապանը: Խնդրում եմ օգնի՛ր ինձ, որ վստահեմ Քեզ: Ամեն:

Ասծո հանդեպ մեր վստահությունը բացահայտենք Նրան կանչելով և մեր «ամենօրյա հացը» խնդրելով:

Սա...մանկան (Հիսուսի) մասին էր խոսում բոլոր նրանց հետ, ովքեր Երուսաղեմի փրկությանն էին սպասում: (Դուկ. 2.38)

ՄԵԾ ԱՎԿԿԱԼԻՔՆԵՐ՝ ՄԵԾ ՏԱՐԻՔՈՒՄ

Մենդյան տոներին նախօրեին մի տարեց կին մոտենում էր փոստատան վաճառասեղանին: Նայելով նրա դանդաղ քայլերին՝ փոստատան պաշտոնյան ողջունեց՝ ասելով. «Բարև, երիտասարդ օրիորդ»: Նրա խոսքերը բարեկամական էին, բայց և կարելի էր ընկալել որպես հեզմանք տարիքի մասին:

Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ մեծ տարիքը նույնպես կարող է առաջացնել հույսեր: Երբ Հովսեփին ու Մարիամը մանուկ Հիսուսին բերեցին տաճար՝ նվիրելու (Դուկ. 2. 23, տե՛ս Ել. 13.2, 12), բեմում հայտնվեցին երկու տարեց հավատացյալներ: Նախ Սիմեոնը, որ տարիներ շարունակ սպասում էր Մեսիային, «գիրկն առավ նրան, օրհնեց Աստծուն և ասաց. «Հիմա, ո՛վ Տեր, արձակի՛ր քո ծառային քո խոստման համաձայն՝ խաղաղությամբ: Որովհետև իմ աչքերը տեսան Քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ՝ լույս հեթանոսներին լուսավորելու» (Դուկ. 2. 28-32):

Այն պահին, երբ Սիմեոնը խոսում էր Մարիամի ու Հովսեփի հետ, գալիս է «տարիքն առած» (Հմ.36) Աննա մարգարեուհին, որն ամուսնացած էր եղել ընդամենը յոթ տարի, և տաճարում էր ապրում մինչև 84 տարեկանը, «ծոմապահությամբ ու աղոթքով գիշեր-ցերեկ Աստծուն էր ծառայում» (Հմ.37): Տեսնելով Հիսուսին՝ նա սկսեց փառաբանել Աստծուն. «Սա...մանկան (Հիսուսի) մասին էր խոսում բոլոր նրանց հետ, ովքեր Երուսաղեմի փրկությանն էին սպասում» (Դուկ. 2.38):

Այս երկու հուսադրող օրինակները մեզ հիշեցնում են, որ երբեք չգաղարենք Աստծուն սպասել, որ տարիքում էլ լինենք:

Աղոթք - Սիրելի՛ ու հավատարիմ Հայր, երբ մենք հուսահատվում ենք, հիշեցրու, որ սպասենք Քեզ: Ամեն:

Կարելի է արեց հավասացյալներից դասեր առնել, որոնք լույս կներճնչեն մեզ:

Այսպես բարիքը և ողորմությունը կգան իմ հետևից իմ կյանքի բոլոր օրերին: (Սաղմ. 23.6)

ԱՍՏՈՆ ՎՍԱԿ ԶԵՏԱՊՆԴՈՒՄԸ

Մի քանի տարի առաջվա դեպք է: Ինձնից բավական առաջ մի մարդ էր գնում, որի ձեռքին ծրարներ էին: Հանկարծ նա սահեց, ընկավ, ու ձեռքից ամեն ինչ թափվեց: Մի քանի հոգի մոտեցան, օգնեցին ոտքի կանգնել և հավաքեցին ծրարները: Բայց դրամապանակը չնկատեցին: Ես, վերցնելով այն, վազեցի անձանոթի հետևից: «Պարո՛ն, պարո՛ն», - կանչում էի և վերջապես գրավեցի նրա ուշադրությունը: Նա շրջվեց այն պահին, երբ արդեն հասել էի իրեն ու տեսնելով դրամապանակն իմ ձեռքին՝ զարմացավ: Ես երբեք չեմ մոռանա երախտագիտությունն արտահայտող նրա դեմքը:

23-րդ սաղմոսի անգլերեն թարգմանությունների մեջ վերջին տողում օգտագործում են հետևել բառը. «Այսպես բարիքը և ողորմությունը կգան իմ հետևից իմ կյանքի բոլոր օրերին» (Հմ.6): Գուցե այդ բառը հարմար է այդ համատեքստում, սակայն եբրայերեն բառն ավելի ազդեցիկ է, նույնիսկ հարձակողական բան ունի իր մեջ: Այն բառացի նշանակում է հետապնդել կամ հալածել, ճիշտ այնպես, ինչպես գիշատիչն է հետապնդում իր որսին:

Աստծո բարությունն ու սերը մեզ ոչ թե հետևում են սովորական անշտապ քայլերով, ինչպես կենդանին կարող է հանգիստ գալ քո հետևից, այլ «հետապնդում են»՝ նույնիսկ հատուկ նպատակով: Այնպես, ինչպես ես էի հետապնդում անձանոթին, որ վերադարձնեի դրամապանակը: Մեզ հետապնդում է Բարի Հովիվը, որ սիրում է մեզ հավիտենական սիրով:

Աղոթք - Բարի՛ Հովիվ, շնորհակալ եմ, որ Քո բարությունն ու սերը միշտ հետապնդում են ինձ: Ամեն:

Աստծո բարությունը հետադառնում է մեզ, ինչդեպ Իր խոսքում է ասվում:

Թող Տերը քեզ հատուցի քո գործերի փոխարեն, և թող առատորեն քեզ տրվի քո վարձն Իսրայելի Աստծո կողմից, որովհետև դու եկար, որ ապաստան գտնես նրա թևերի տակ: (ԳՌ. 2.12)

ԱՐԱԳ ՍՆՆԴԻ ԽՐԱԽՈՒՄՈՒՄ

Մարիան իր արագ սնունդը վերցնելով՝ նստեց սեղանի մոտ: Դեռ չէր սկսել ճաշել, երբ հայացքն ընկավ մի քանի սեղան այն կողմ նստած մի երիտասարդի: Նա կեղտոտ շորերով էր, մազերը՝ խոխիվ, ձեռքին էլ մի դատարկ բաժակ: Պարզ էր, որ քաղցած է: Ինչպե՞ս կարող էր օգնել,- մտածեց Մարիան: Գու՛մար տալը անխոհեմ քայլ թվաց: Եթե ուտելիք գնի ու տա, գուցե ամաչի:

Այդ ժամանակ աղջիկը հիշեց Հռուբի պատմությունը, երբ հարուստ կալվածատեր Բոոսը աղքատ գաղթական այրուն առաջարկեց աշխատել իր արտերում: «Թողե՛ք՝ խրճերի միջից էլ հավաքի, և մի՛ ամաչեցրեք նրան: Եվ խրճերից էլ նրա համար գետ՛ին գցեք և թողե՛ք, որ հավաքի, և մի՛ հանդիմանեք նրան» (ՀՌ. 2. 15-16),-պատվիրեց նա իր մարդկանց: Մի հասարակություն մեջ, որտեղ կանայք լիովին կախված էին տղամարդկանցից, Բոոսը ցուցաբերեց Աստծո սիրալիր տրամադրությունը: Ի վերջո նա ամուսնացավ Հռուբի հետ՝ փրկելով կնոջը վերջնական կործանումից (4. 9-10):

Մարիան վեր կացավ, որ գնա և գետնախնձորի փակ տոպրակը դրեց կողքի սեղանին՝ միաժամանակ նայելով երիտասարդի աչքերին: Եթե քաղցած էր, կհավաքեր «իր արագ սննդի դաշտից»:

Աստծո սիրտը բացահայտվում է Սուրբ Գրքի պատմությունների մեջ, որովհետև դրանք ցույց են տալիս խրախուսիչ ստեղծագործական լուծումներ:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, ցո՛ւյց տուր, թե ով կարիք ունի, որ Քո սերը ցուցաբերեն իրեն: Ամեն:

Ասված առասրեն սալիս է մեզ ամեն ինչ: Մեզ մնում է ճեսնել մեր շուրջը եղող կարիքավորներին ու Իր սիրով սալ մեր կարողության սահմաններում:

Միմյանց բեռը կրե՛ք և այսպես Քրիստոսի օրենքը կատարե՛ք: (Գաղ. 6.2)

ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԵԹԵՎԱՑՆԵԼ

Աստվածաշնչյան ընթերցողմաների կանանց մեր նորաստեղծ խումբը բազում դժբախտություններ ու վշտեր ունեցավ: Մեկի հայրը մահացավ, մյուսն ամուսնալուծվեց, մեկին հաշմանդամ երեխա ծնվեց և այլն: Շատ ծանր էր դրանք միայնակ կրելը, և խմբում որոշվեց միասին լացել ու աղոթել: Շուտով անծանոթների խումբը դարձավ մտերիմ ընկերների խումբ:

Որպես եկեղեցու մարմնի մեկ մաս՝ Հիսուսին հավատացողները կարող են իրենց անձնական տառապանքներով լինել մարդկանց կողքին: Քրիստոսով հաստատված կապերը կախված չեն այն բանից, թե որքան ժամանակ ենք մենք ճանաչում իրար: Փոխարենը մենք կանենք Պողոսի ասածը. «Միմյանց բեռը կրե՛ք և այսպես Քրիստոսի օրենքը կատարե՛ք» (Գաղ. 6.2): Հենվելով Աստծո գորություն վրա՝ մենք կարող ենք միջոցներ գտնել, որ «բարիք անենք բոլորին, մանավանդ հավատի ընտանիքի անդամներին (Հմ.10) Պողոսն ասում է, որ այդպես գործելով՝ մենք կկատարենք Քրիստոսի օրենքը (Հմ.2)՝ սիրել Աստծուն ու մեր դրացուն, ինչպես մեր անձն ենք սիրում: Կյանքի ծանրությունները կարող են տաժանակիր լինել, բայց Տերը մեր բեռը թեթևացնելու համար մեզ տվել է եկեղեցու ընտանիք:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ, որ քայլում ես իմ կողքին՝ անկախ նրանից, թե ինչ դժվարության մեջ եմ: Օգնի՛ր, որ ես էլ այդպես սիրեմ ուրիշներին: Ամեն:

Մեր Երջադասում քառադրոներ կլինեն:
Պատրաստվե՛ք ինձնից նրանց բեռը թեթևացնելու:

Տերն իմ վեմը, իմ բերդն ու իմ ազատարարն է... իմ վահանն է և իմ փրկության եղջյուրը: (Բ. Թագ. 22.2-3)

ՎԱԶԵԼ ԴԵՊԻ ԱՊԱՍՏԱՐԱՆ

Վեցերորդ դասարանի բասկետբոլի խաղի ժամանակ ծնողներն ու տատիկ-պապիկները ոգևորում էին խաղացողներին, իսկ նրանց կրտսեր եղբայրներն ու քույրերը զվարճանում էին դպրոցի միջանցքում: Հանկարծ ազդանշաններ հնչեցին ու մարզասրահի լույսերը թարթեցին: Հրդեհի ահազանգ էր: Փոքրիկները խուճապահար մտան մարզասրահ՝ փնտրելով իրենց ծնողներին:

Պարզվեց, որ ահազանգը կեղծ էր: Բայց այդ մի քանի վայրկյանում ես ապշել էի երեխաների վարքագծից, թե ինչպես զգալով վտանգը՝ վազեցին ծնողներին գտնելու: Նրանց այդ արարքում ինչպիսի՜ վստահություն ու ապահովություն ենք տեսնում:

Դավիթն էլ շատ վախեցավ, երբ Սավուղն ու այլ բազում թշնամիներ հետապնդում էին իրեն (Բ.Թագ. 22.1): Երբ Աստված ազատել էր նրան, երախտագետ մարդը այս խոսքերով դիմեց Նրան. «Տերն իմ վեմը, իմ բերդն ու իմ ազատարարն է» (Հմ.2): Երբ «գժոխքի լարերը պատեցին նրան և մահվան որոգայթները առաջն առան», Դավիթը «կանչեց Աստծուն և նրա աղաղակը հասավ Աստծո ականջին (Հմ.7): Ի վերջո Դավիթը հայտարարեց, որ Նա «ազատեց» իրեն (Հմ. 18, 20, 49):

Վախի և անորոշությունից ժամանակ մենք կարող ենք վազել դեպի «վեմը» (Հմ.32): Երբ Աստծո անունը կանչենք, Նա մեզ կապահովի անհրաժեշտ ապաստանով (Հմ.2-3):

Աղոթք - Սիրելի՛ Աստված, երբ վախենում եմ, հիշեցրո՛ւ ինձ վստահել ու ապավինել Քեզ ու փառաբանել Քո անունը: Ամեն:

Վախեր մի՞տ է կունենանք, բայց վստահենք Ասծուն, որովհետև Նա կարող է օգնել մեզ՝ դիմակայելու և հաղթահարելու մեր վախերը:

Թող սերը առանց կեղծիքի լինի. չարն ատէք և բարուն հետևեք: (Դոմ. 12. 9)

ՅԵՏԵՎԵԼ ԲԱՐՈՒՄ

Երբ կանգնեցնում ենք մեքենան և բաց դաշտի միջով գնում ենք տուն, գրեթե միշտ մեր հագուստին հայտնվում են մոլախոտի կպչուն հատիկներ: Իրենց համար «ձրի փոխադրամիջոց փնտրող» այդ նյութերը, կպչելով հագուստին, կոշիկին և իրենց կողքով անցնող ամեն բանի, հասնում են իրենց հաջորդ նպատակակետը: Դա որոմի սերմերը տարածելու բնության ձևն է:

Ձգուչորեն հեռացնելով կպած նյութերը՝ ես հաճախ մտածում եմ այն ուղիերձի մասին, որը Հիսուսի հավատացյալներին հորդորում է. «բարո՛ւն հետևել» (Հռոմ.12. 9): Որոմները հեռացնելը կարող է մարտահրավեր լինել: Բայց քանի որ Սուրբ Հոգին օգնում է մեզ ամուր պահել ամենայն լավը, մենք կարող ենք վանել չարը, որպեսզի «սերն առանց կեղծիքի լինի» (Հմ.9):

Մոլախոտերի սերմերը միայն խոզանակով չեն մաքրվում, դրանք կառչում են մեզանից: Եվ երբ մենք կենտրոնանանք բարու վրա՝ մեր միտքը պահելով Աստծո ողորմածության, կարեկցության ու պատվիրանների վրա, Նրա զորությամբ մենք էլ կկապվենք նրանց, ում սիրում ենք: Նա կօգնի մեզ «միմյանց նկատմամբ զթասիրտ լինել, պատվելու մեջ միմյանց գերազանցել» (Հմ.10):

Այո՛, այդ մոլախոտերը դժվարություն են հարուցում, բայց նաև հիշեցնում են սիրով ու Աստծո զորությամբ «հետևել բարուն» (Հմ. 9. տե՛ս նաև Փիլ. 4. 8-9):

Աղոթք - Տեր Դիսուս, հիշեցրու՛ ինձ, որ ամբողջ ուժով կառչեմ բարուն: Ուզում եմ արտացոլել Քո սերն ուրիշների հանդեպ:
Ամեն:

Բարու օգնությամբ կարելի է սիրել դժվարամարս բարեկամներին կամ ընճանհի անդամներին:

Ինչու՞ ես տրտում, ո՛վ անձ իմ,հույսդ դի՛ր Աստծո վրա: (Սաղմ. 43.5)

ԼՍԵՑԻ ԶԱՆԳԱԿՆԵՐԻ ԶԱՅՆԸ

«Սուրբ Ծննդյան օրը լսեցի զանգակների ձայնը» երգը, որ հիմնված է Հենրի Վաթսվորդ Լոնգֆելլոյի՝ 1863թ. գրված բանաստեղծության վրա, իսկապես անսովոր Ծննդյան երգ է: Սպասված Ծննդյան ուրախության ու ցնծության փոխարեն՝ ողբի ու ցավի բացականչություններ են.«Ես հուսահատ խոնարհում եմ գլուխս. երկրի վրա չկա խաղաղություն, որովհետև ատելությունն ուժեղ է և ծաղրում է երգը»: Երգի հետագա տողերում, սակայն, հույս կա և վստահություն, որ «Աստված չի մեռել, ոչ էլ քնած է: Չարը կտապալվի, ճշմարտությունը կհաղթի: Խաղաղություն երկրին, բարեհաճություն մարդկանց»:

Ողբից բխող հույսի օրինակ կա նաև Աստվածաշնչում: 43-րդ սաղմոսի սկզբում սաղմոսերգուն աղաղակում է, որ թշնամիները հարձակվել են իր վրա (Հմ.1), և Աստված կարծես մոռացել է իրեն (Հմ. 2): Բայց նա չի մոռում այդ հուսահատ վիճակում, այլ դիմում է Աստծուն, որին լիովին չհասկանալով հանդերձ՝ դեռ վստահում է. «Ինչու՞ ես տրտում, ո՛վ անձ իմ, և ինչու՞ ես խռովված ինձանում, հույսդ դի՛ր Աստծո վրա, որովհետև նա իմ երեսի փրկությունն է և իմ Աստվածը» (Հմ. 5):

Կյանքը լի է տխուր ու ողբերգական առիթներով, և մենք պարբերաբար զգում ենք դրանք: Բայց եթե թույլ տանք, որ այդ ողբը մեզ ցույց տա դեպի հույսի Աստված ճանապարհը, կկարողանանք ուրախ երգել, եթե նույնիսկ դա լինի արցունքախառն երգ:

Աղոթք - Հայր, կյանքի բռնների ներքո կանչում եմ Քեզ: Հիշեցրու՛ ինձ, որ իմ օգնությունը կգա վերևից՝ երկնքի ու երկրի Արարչից: Ամեն:

Մտահոգություններ մի՛ս էլ կունենանք, բայց Աստվածաճնչի վկայության համաձայն՝ Աստված այդ ամենի մեջ մեզ հույս է տալիս:

Մահը հաղթության մեջ ընկղմվեց: (Ա. Կորնթ. 15. 54)

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Արգենտինացի գրող Խորխե Լուիս Բորխեսի էսսեներից մեկը պատմում է հռոմեացի զինվոր Մարկուս Ռուֆուսի մասին, որը խմելով «գաղտնի գետից՝ անմահություն է ձեռք բերում»: Ժամանակի ընթացքում, սակայն, նա հասկանում է, որ դա իր երազած վիճակը չի, որ անսահման կյանքը դառնում է աննպատակ: Իրականում կյանքը մահվամբ է իմաստավորվում: Եվ Մարկուսը մաքուր աղբյուրից ջուր խմելով ու մատից մի կաթիլ արյուն հանելով՝ վերստին դառնում է մահկանացու:

Մենք նույնպես երբեմն հուսահատվում ենք կյանքի անցողիկության ու մահվան հեռանկարի պատճառով (Սաղմ. 88.3), և ընդունում ենք, որ մահն է կյանքին տալիս նշանակություն: Այս կետում, սակայն պատմությունները բաժանվում են: Ի տարբերություն Մարկուսի՝ մենք գիտենք, որ Քրիստոսի մահվամբ ենք գտնում կյանքի իսկական իմաստը: Խաչի վրա արյուն թափելով՝ Քրիստոսը հաղթեց մահին և Մահը հաղթության մեջ ընկղմվեց» (Ա. Կորնթ. 15. 52):

Ճիշտ է, մենք ֆիզիկական մահից չենք խուսափում, բայց հարցը դա չէ: Հիսուսը վերցնում է կյանքի ու մահվան մասին մեր ողջ հուսահատությունը (Եբ. 2. 12-15): Քրիստոսով մենք ապահովել ենք երկնքի հույսը և Նրա հետ լինելիք հավիտենական կյանքի իմաստալից ուրախությունը:

Աղոթք - Աստված, օգնիր ինձ ընդունելու խոստումներիդ Քեզ հետ հավիտենական կյանքի ու փրկության մասին: Ամեն:

Մահվան հեռանկարը վախեցնում է մեզ, բայց Պողոսի խոսքերը կարող են փառալերել:

Ո՞րն է այն տեղի ճանապարհը, որտեղ լույսն է բնակվում, և որն է խավարի տեղը: (Չոր.38.19)

ՆՐԱ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է ԱՄԵՆ ԲԱՆ

Ուիլյամ Շաթնեբը «Աստղային ճանապարհ» հայտնի հեռուստատեսային շարքում խաղում էր կապիտան Կրրկի դերը, բայց իրականում տիեզերք թռչելուն նա պատրաստ չէր: Իր 11 բուսանոց ենթադրյալ թռիչքը նա անվանեց «ամենամոտ փորձառությունը, որ կարող էր պատկերացնել»: Դուրս գալով իր երևակայական հրթիռից՝ նա զարմացել էր՝ տեսնելով, որ «կապույտը մնում է ներքևում, իսկ վերևում՝ սևն է: Դու տեսնում ես այդ երկուսի միջև գոյություն ունեցող շատ բարակ շերտն ու անցնում դրա միջով»:

Մեր մոլորակը մի կապույտ կետ է՝ շրջապատված բացարձակ խավարով: Սա է անհասկացանալի Շաթնեբի համար: Կապույտ երկնքից խավարի մեջ թռչելը մահվան նման է: «Մեկ ակնթարթում դու անցնում ես այդ սահմանը: Դա մահ է: Ես տեսա այդ, որը շատ հուզիչ էր: Եվ այդ փորձառությունն ինձ համար անմոռանալի է», - հետագայում ասել է նա:

Շաթնեբի այս թռիչքը կյանքի հեռանկարի պատկերն է: Մենք փոքր առարկաներ ենք տիեզերքում, իսկ լույսն ստեղծողն ու այն խավարից բաժանողը (Ծնն. 1.3-4) սիրում է մեզ: Մեր Հայրը գիտե խավարի տեղը և բնակություն ուղիքն (Հոր. 38. 19-20): Նա դրեց «երկրի հիմքերը...երբ առավոտյան աստղերը միասին ցնծությունք երգում էին, ու Աստծո բոլոր որդիները ուրախությունք աղաղակում էին» (Հմ.4-7):

Եկե՛ք մեր փոքր կյանքը վստահենք Աստծուն, որ Իր ձեռքերում է պահում ամբողջ տիեզերքը:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, Դու ես կառավարում այս աշխարհն ու նրանից դուրս ամեն բան: Ես վստահում եմ Քո հզոր սիրուն: Ամեն:

Նայի՛ր վիթխարի տիեզերքին ու հի՛շի՛ր, որ դրա հեղինակն ու արարիչը մեր Ասվածն է, և Նրա ձեռքերում է ամեն բան:

Դովնաթանը շատ վշտացավ Դավթի համար, որովհետև իր հայրը անարգեց նրան: (Ա.Թագ. 20.34)

ԿՅԱՆՔԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Անգլիացի գրող Վիլյամ Կուպերն, ի դեմս իր հոգևոր հովիվ Ջոն Նյուտոնի, գտել էր իսկական բարեկամի: Կուպերը հոգեբանական խնդիրների պատճառով մի քանի անգամ փորձել էր ինքնասպան լինել: Իսկ Նյուտոնի հետ հանդիպումները հանդարտեցրել էին նրա մտքերը: Նրանք երկար զբոսնում էին, խոսում ստրկուկյան դեմ պայքարի, ինչպես նաև Աստծո մասին: Հովիվը նույնիսկ մտահղացում ունեցավ երգարան ստեղծել Կուպերի հորինած երգերով, որովհետև դրանց մեծ մասում արդեն Աստծո խորհրդավոր գործողությունների մասին էր խոսվում: Նրանց բարեկամությունը շարունակվեց նաև այն ժամանակ, երբ Նյուտոնն այլ եկեղեցի տեղափոխվեց:

Այս բարեկամությունն ինձ հիշեցնում է Հին Կտակարանում Դավթի ու Հովնաթանի միջև եղած ամուր կապը: Երբ Դավթի-թը հաղթեց Գողիաթին, «Հովնաթանը սրտով կապվեց Դավթի սրտին» (Ա.Թագ. 18.1): Թեև Հովնաթանը Սավուղ թագավորի որդին էր, բայց նա պաշտպանեց Դավթին իր հոր բարկությունից ու նախանձից՝ հարցնելով, թե ինչու պիտի նա սպանվի: Ի պատասխան՝ «Սավուղը նիզակը նետեց դեպի նա, որ սպանի նրան» (20.33): Հովնաթանը շատ վշտացավ հոր ամոթալի վերաբերմունքի համար (Հմ.34) և միջոց գտավ փրկելու ընկերոջը:

Այս երկու ընկերների կապը կենսատու օրինակ է, որովհետև նրանք ծառայում են իրար և սիրում են Աստծուն: Դու ինչպե՞ս կարող ես քաջալերել մի ընկերոջ:

Աղոթք - Հիսուսն օգնիր ինձ, որ վայելեմ Քո բարեկամությունն ու ընկերակցությունը: Ամեն:

Բարեկամությունը ռաս կարևոր դեր ունի լավ զգացողության համար: Ասժոն սերը ցույց տուր և քաջալերիր ուրիշներին:

Մտաբերում եմ այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ սկզբում կար քո Լորդա տատի ու քո Եվնիկե մոր մեջ. համոզված եմ, որ այն նաև քեզանում է: (Բ.Տիմ. 1.5)

ՀԱՎԱՏԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

2 019-ին ԱՄՆ-ում Հիսուսին հավատացողների հոգևոր ժառանգությունն ուսումնասիրող մի հետազոտություն արդյունքներով՝ մայրերն ու տատերը զգալի ազդեցություն են ունենում մարդու հոգևոր զարգացման վրա: Մարդկության գրեթե երկու երրորդը, որ հավակնում է հավատքի ժառանգության, գնահատել են իրենց մորը, մեկ երրորդը՝ տատին ու պապին (առավելապես տատին): Զեկուլցի խմբագիրը նշել է.«Այս ուսումնասիրությունը վկայում է հոգևոր զարգացման վրա մայրերի կայուն ազդեցության մասին»: Այդ ազդեցությունը հաստատված է նաև Սուրբ Գրքում: Պողոսն իր հովանավորյալ Տիմոթեոսին ուղղված նամակում խոստովանում է. «Մտաբերում եմ այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ սկզբում կար քո Լորդա տատի ու քո Եվնիկե մոր մեջ. համոզված եմ, որ այն նաև քեզանում է» (Բ.Տիմ. 1.5): Սա շատ կարևոր անձնական մանրամասն է, որն ընդգծում է եկեղեցու երիտասարդ առաջնորդներից մեկի վրա երկու կանանց ազդեցությունը, որը երևում է նաև Պողոսի՝ Տիմոթեոսին ուղղված խրատականքում. «Բայց դու հաստատուն մնա այն բաների մեջ, որ սովորեցիր ու հավատացիր՝ իմանալով, թե ումից սովորեցիր, որովհետև մանկուց գիտես Սուրբ Գիրքը» (3. 14-15): Ուժեղ հոգևոր ժառանգությունը թանկարժեք նվեր է: Բայց եթե նույնիսկ մեր դաստիարակության մեջ բացակայեն այդ դրական ազդեցությունները, որոնք օգնեցին ձևավորել Տիմոթեոսի հավատքը, հավանաբար կան ուրիշներ մեր կյանքում, որոնք մեծ ազդեցություն կունենան ու կօգնեն ձևավորելու մեր հոգևոր զարգացումը: Ամենակարևորը՝ մենք բոլորս հնարավորություն ունենք ձևավորելու մեր շրջապատի մարդկանց անկեղծ հավատքը և թողնելու մնայուն ժառանգություն:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Քեզ իմ կյանքում այն կանանց ու տղամարդկանց համար, որոնք ցույց են տվել անկեղծ հավատք: Ամեն:

Շաքերն են էական ազդեցություն թողնում մեր հոգևոր զգացումների վրա: Եկե՛ք մենք էլ մեր հերթին փառալերենք ուրիշներին:

Ինձ աղքատություն կամ հարստություն մի՛ տուր, իմ բաժին հացով կերակրի՛ր ինձ: (Առ. 30. 8)

ՊԱՐԶԱՊԵՍ ԲԱՎԱՐԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ

«**Զուլթակահարը տանիքի վրա**» կինոնկարի հերոս Թեվյեն անկեղծանում է Աստծո հետ՝ ասելով.«Դու բազում աղքատ մարդիկ ես ստեղծել: Ես, իհարկե, հասականում եմ, որ աղքատ լինելը ամոթ չէ, բայց մեծ պատիվ էլ չէ: Ուստի ի՞նչ վատ կլինեիր, եթե ես մի փոքր հարստություն ունենայի:....Արդյո՞ք դրանով կխաթարվեիր ինչ-որ հավիտենական, մեծ ծրագիր»:

Այս խոսքերը հերոսի բերանում է դրել 19-րդ դարի հեղինակ Շոլեմ Ալիհեյմը: Իսկ Առակների գրքում Ագորն է նույնքան ազնիվ, բայց փոքր աղոթք բարձրացնում առ Աստված: Նա խնդրում է. «Ինձ աղքատություն կամ հարստություն մի՛ տուր, իմ բաժին հացով կերակրի՛ր ինձ» (Առ. 30. 8): Նա գիտեիր, որ չափից ավելի ունենալը կարող է իրեն վերածել անաստված էակի: Նա Աստծուց խնդրում է նաև չաղքատացնել իրեն, քանի որ դա կարող է պատճառ դառնալ, որ «գողանամ և արատավորեմ իմ Աստծո անունը» (Հմ.9): Աստծուն ճանաչելով որպես իր միակ մատակարար՝ Ագորը Նրանից խնդրում է պարզապես իր առօրյա կարիքները բավարարելու միջոցներ.«Իմ բաժին հացով կերակրի՛ր ինձ» (Հմ.8): Այս աղոթքը բացահայտում է Աստծուն հետևելու, Նրանով գոհանալու կարևորությունը:

Մենք էլ Ագորի նման Աստծուն ճանաչենք ամեն բանի մատակարար և գոհանանք, որ մեզ տալիս է «բավարար» միջոցներ:

Աղոթք - Մեր մատակարար Աստված, օգնի՛ր ինձ, որ գոհանամ քո պարզևած ամեն բանով: Ամեն:

Աստված հավասարիմ է և մեզ սալիս է մեր կարիքի համադասասխան: Ուսի՛ր շնորհակալ լինեն՛ք Իր սված բոլոր բարիքների համար:

Աստված Իր Որդուն ուղարկեց մեղավոր մարմնի մանուկամբ ու մեղքի համար և մեղքը դատապարտեց այդ մարմնի մեջ: (Գործ. 8.3)

ՃՆՈՒՆԴԻ ԳՐԱՇՔԸ

Վաճառվող իրերի մեջ աչքիս ընկավ ստվարաթղթե տուփով Սուրբ Ծննդյան մի հավաքածու: Ձեռքս վերցնելով մանուկ Հիսուսի քանդակը՝ նկատեցի, թե ինչ նրբորեն էր պատրաստված այն: Այս տարբերակում նորածինը փաթաթված էր ծածկոցով և աչքերն էլ փակ էին: Նա արթուն էր, կիսաբաց ձեռքերով ու մատները՝ երկարած: Կարծես ասելիս լիներ. «Ես այստեղ եմ»:

Արձանիկը ներկայացնում էր Ծնունդի հրաշքը, այն, որ Աստված Իր Որդուն աշխարհ ուղարկեց մարդու մարմնով: Երբ Հիսուս մանուկը մի քիչ մեծացավ, սկսեց խաղալ խաղալիքներով, Նա ձեռքերով բռնեց Օրենսգիրքը: Ավելի ուշ սկսեց տան կահույք պատրաստել: Ոտքերը Նրան տեղափոխեցին տեղից տեղ՝ սովորեցնելու և բուժելու համար: Կյանքի վերջում մարդկային ձեռքերն ու ոտքերը խոցվեցին մեխերով՝ մարմինը խաչի վրա պահելու համար:

Այդ մարմնով Աստված վերջ տվեց մեղքի իշխանությունը մեզ վրա: Հիսուսի զոհաբերությունն ընդունելով որպես մեր բոլոր սխալների վճար և մեր կյանքը հանձնելով Իրեն՝ մենք կազատվենք մեղքի ստրկությունից: Քանի որ Աստծո Որդին մեզ համար ծնվել է որպես իսկական, օրորվող, ոտքերով հարվածող երեխա, ուրեմն կա՛ Աստծո հետ խաղաղություն ու հավերժություն երաշխիք ունենալու միջոց:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ, որ Տեր Հիսուսին մարդկային մարմնով ուղարկեցիր աշխարհ՝ ինձ ազատելու մեղքի ու մահվան գերությունից: Ամեն:

Մեծ արբերություն կա Հիսուսի Ծնունդը և Սուրբ Ծննդյան տոները նշելու միջև:

Եթե չհավատաք, հիրավի չեք հաստատվի: (Ես.7.9)

ՀԱՎԱՏՔՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՆԳՆԵԼ

1 998թ. Նոկիան դարձավ աշխարհի ամենաշատ վաճառված հեռախոսը, և մեկ տարի անց դրանից եկած շահույթը տրիլիոններով էր հաշվվում: Սակայն 2011-ին վաճառքն սկսեց նվազել, և Նոկիայի բաժանմունքների գործը ձախողվեց: Դրա պատճառներից մեկն այն էր, որ ընկերության տնօրենները, վախենալով աշխատանքը կորցնելուց, ակամա բացահայտեցին իրենց ներքին խնդիրները:

Հուդայի Ոզիա թագավորն ու նրա ժողովուրդը վախեցան, «նրա և նրա ժողովրդի սիրտն սկսեց դողալ, ինչպես անտառի ծառերն են դողում քամուց» (Ես. 7. 2): Նրանք իմացել էին, որ Իսրայելի ու Սիրիայի թագավորները դաշնակցել են և միացյալ զորքերով Հարձակվելու են իրենց երկրի վրա (Հմ.5-6): Թեև Աստված Եսայի մարգարեի միջոցով Ոզիա թագավորին քաջալերեց և ասաց, որ նրա թշնամիների ծրագրերը չեն կատարվելու (Հմ.7), սակայն հիմար առաջնորդը վախից համաձայնեց Ասորեստանի հետ և ենթարկվեց գերտերության թագավորին (Դ. Թագ. 16. 7-8): Նա չվստահեց Աստծուն, որ հայտարարել էր. «Եթե չհավատաք, հիրավի չեք հաստատվի» (Ես.7.9):

Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակն օգնում է հասկանալու, թե ինչ է նշանակում այսօր հավատի մեջ ամուր մնալը, երբ գրում է. «Աննկուն պահենք հույսի դավանությունը, որովհետև խոստացողը հավատարիմ է» (Հմ.10.23):

Թող որ մենք էլ առաջ գնանք առանց «ընկրկելու» (Հմ.39), քանի որ Սուրբ Հոգին մեզ Հիսուսին վստահելու ուժ է տալիս:

Աղոթք - Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ կարողանամ ամուր ու հաստատուն կանգնել, որովհետև Դու ապահովում ես ինձ անհրաժեշտ հավատքը: Ամեն:

Մեր հավատքը ենթակա է մարտահրավերների, բայց Աստված մեզ ֆաջալերում է ամուր մնալ:

Մի աստղ է ծագում Հակոբից, մի մական է բարձրանում Իսրայելից: (ԹՎ. 24.17)

Ո՛Չ ՄԻ ՀԱՅՅՈՅԱԼՔ

Վիլյամ Շեքսպիրի ստեղծագործություններում անչափ շատ են վիրավորանքները: Այն աստիճան, որ դերասան Բերրի Գրաֆթը նույնիսկ մի ժողովածու է կազմել՝ «Շեքսպիրյան վիրավորանքների գեներատոր» անունով: Դրանում ներառված են տարբեր թատրոններից վերցված անհասկանալի, երբեմն զվարճալի վիրավորանքները: Օրինակ Շեքսպիրի համար մեկի հանդեպ արհամարհական վերաբերմունքն արտահայտելու ավելի ստեղծագործական ձևեր են եղել «պոռոտախոս, փայտազլուխ, նենգամիտ» բառերը, քան ավելի սովորական բառերով ասված դիտողությունը: Գրաֆթի գիրքը ավելի շատ զվարճալի է: Իսկ Մովսեսի հին թագավորներից մեկը փորձեց վճարել մի խորհրդավոր մարգարեի, որպեսզի նա ոչ միայն վիրավորեր, այլև անիծեր իսրայելցիներին: Բաղակ թագավորը Բաղաամին ասում է. «Ե՛կ, անիծի՛ր այս ժողովրդին ինձ համար» (ԹՎ. 22.6): Բայց Բաղաամը բարկացնում է թագավորին՝ երեք անգամ օրհնելով եբրայելցիներին (24.10): Այդ օրհնություններից մեկը ներառում էր հետևյալ մարգարեությունը. «Տեսնում եմ նրան, բայց ոչ հիմա, զննում եմ նրան, բայց ոչ մտտից (24.17): Թե ո՞ւմ մասին էր Բաղաամի ակնարկը, որոշակիորեն պարզաբանվում է հաջորդ տողում. «Մի աստղ է ծագում Հակոբից, մի մական է բարձրանում Իսրայելից» (Հմ.17): Այդ «աստղը» մի օր իմաստուն մարդկանց առաջնորդելու էր դեպի խոստացված Մանուկը (Մատթ. 2.1-2): Միջագետքի հին մարգարեներից մեկը, որ ոչինչ չգիտեր Փրկչի մասին, մատնանշում է աշխարհի ապագան և հայտարարում նրա գալուստը: Այսինքն՝ անհավանական աղբյուրից եկավ ոչ թե հայհոյանք, այլ օրհնություն:

Աղոթք - Աստված, խնդրում եմ՝ տու՛ր ինձ աչքեր, որպեսզի ամեն ինչի մեջ տեսնեմ Քո ձեռքը: Ամեն:

ԹՎԵՐԻ 24-ը օգնում է մեզ տեսնել ձեր ձեռքերի միջոցով արված աշխատանքները, որը կարող է փոխել մեր վարվելակերպը այն մարդկանց հետ, որոնք հակառակ են Աստծո գործին:

Եվ իմ այս խոսքերը, որ ես պաղատեցի Տիրոջ առաջ, գիշեր ու ցերեկ թող մոտենան մեր Տեր Աստծուն: (Թագ. 8.59)

ԳԱՆՁԻ ՊԵՍ ՊԱՅԱԾ ԱՂՈԹՔ

Զարմանալի թուչուն է Քլարկի փայտփորիկը: Ամեն տարի ձմռանը պատրաստվելով՝ նա 4-5 սպիտակ սոճու հազարավոր սերմեր է պահում: Ամիսներ անց թուչունը նույնիսկ առատ ձյան տակից կարողանում է անսխալ գտնել իր պահած բոլոր սերմերը: Մինչև տասը հազար տեղ մտապահելը իսկական սխրանք է, հատկապես եթե նկատի ունենանք, թե մարդիկ ինչ դժվարություններ են հիշում մեքենայի բանալիների կամ ակնոցի տեղը:

Սակայն նույնիսկ հիշողության այդ անհավանական ձևը ոչինչ է մեր աղոթքները հիշելու Աստծո ունակության համեմատություն: Նա հետևում է յուրաքանչյուր անկեղծ աղոթքի, հիշում ու պատասխանում դրանց նույնիսկ տարիներ հետո: Հայտնության գրքում Հովհաննես առաքյալը նկարագրում է «չորս կենդանիների» և «քսանչորս երեցների», որոնք երկնքում Տիրոջն էին երկրպագում: Նրանցից «յուրաքանչյուրն ուներ քնար ու խնկով լի ոսկե բուրվառ, որ սրբերի աղոթքներն են» (5.8): Ինչպես որ խունկն էր արժեքավոր հին աշխարհում, այնպես էլ մեր աղոթքներն այնքան արժեքավոր են Աստծո համար, որ Նա անընդհատ պահում է դրանք իր աչքի առաջ՝ թանկարժեք ամաններում: Մեր աղոթքները կարևոր են Աստծո համար, որովհետև մենք կարևոր ենք Իր համար և Հիսուսի՝ մեր հանդեպ անզուգական բարության միջոցով, Նա մեզ անարգել մուտք է առաջարկում (Եբ. 4.14-16): Ուստի համարձակություններ աղոթենք և իմանանք, որ ոչ մի բառ չի մոռացվում կամ անտեղի չի համարվում Աստծո զարմանալի սիրո պատճառով:

Աղոթք - Երկնավոր Հայր, խնդրում եմ տու՛ր ինձ

հավատարմորեն աղոթելու հավատ ու հաստատակամություն:

Ամեն:

Ասված երեք չի մոռանում մեր աղոթքները: Ուստի քաջալերվե՛նք և շարունակե՛նք աղոթել մեր և այլոց կարիքների համար:

Չայրը գթությունների և Աստված ամեն մխիթարության մեր բոլոր նեղությունների մեջ մխիթարում է մեզ: (Բ. Կորնթ. 1.3-4)

ՅԱԾ ԻՋՆԵԼ

Երիտասարդ մայրը հետևում էր դստերը, որը բավական արագ վարում էր հեծանիվը: Սակայն փոքրիկը հանկարծ արագացրեց ընթացքն ու գլորվեց, վայր ընկավ՝ վնասելով ոտքը: Մայրը չոքեց երեխայի մոտ, համբուրեց, որ «ցավն անցկացնի»: Եվ հաջողվեց: Փոքրիկը վեր կացավ, նորից նստեց հեծանիվն ու շարունակեց վարել: Չէի՞ք ուզենա, որ բոլոր ցավերն այդպես հեշտ անհետանային:

Պողոս առաքյալն իր շարունակական պայքարների մեջ զգում էր Աստծո մխիթարությունը, ուստի շարունակեց գործունեությունը: Այդ փորձառություններից մի քանիսի մասին նա թվարկում է Բ Կորնթ. 11. 23-29 հատվածում. մտրակումներ, ծեծ, քարկոծումներ, ծարավ, սով, նավաբեկում, անքնություն, ցուրտ, մերկություն և եկեղեցիների հոգսը: Նա սովորեց, որ Աստված «Հայրն է գթությունների և Աստված ամեն մխիթարության» (1.3) կամ ինչպես թարգմանված է տարբերակներից մեկում.«Նա է Հայրը, որ տալիս է քնքուշ սեր»: Ինչպես մայրը մխիթարեց իր երեխային, Աստված էլ խոնարհվում է, որ մեր ցավի պահին քնքշորեն հոգ տանի մեր մասին:

Մեզ մխիթարելու Աստծո սիրառատ ձևերը շատ են ու բազմազան: Նա կարող է մեզ տալ սուրբգրային խորհուրդ, որով կխրախուսի շարունակել: Կարող է ինչ-որ մեկի օգնությամբ հատուկ գրություն ուղարկել, կամ հուշել ընկերներից մեկին՝ զանգահարել: Այսպիսի ձևերով նա դիպչում է մեր հոգուն: Թեև դժվարությունը չի վերանում, բայց քանի որ Աստված խոնարհվում է մեզ օգնելու, մենք կկարողանանք վեր կենալ և շարունակել մեր ընթացքը:

Աղոթք - Ողորմած Չայր, մոտեցիր ինձ, պահիր ինձ Քո գրկում, որտեղ ես կկարողանամ հանգիստ ու քաջալերանք գտնել: Ամեն:

Ասված մխիթարում է մեզ, ուսի մենք էլ դասրաս լինենք ուրիշներին սիրով:

Թող իմ բերանը պատմի քո արդարությունը, ամեն օրը՝ քո փրկությունը: (Սաղմ. 71.15)

SUS ԿԵՏԱԶՈՒԿԸ

Օրկա կետաձուկը, որին գիտնականները տատ անունն են տվել, ըստ երևույթին գիտեր այդ դերի կարևորությունը իր «Թոռնիկ կետաձկան» համար: Կետաձկան մայրը վերջերս էր մահացել, իսկ ինքը դեռ բավականաչափ մեծ էր, որպեսզի առանց աջակցության ու պաշտպանության կարողանար զարգանալ: Տատիկը, թեև 80 տարեկան էր (կամ գուցե ավելի) սկսեց թոռանը սովորեցնել, թե ինչ պետք է անել գոյատևելու համար: Նա մի քանի ձուկ էր հավաքել թոռան համար, որպեսզի նա ոչ միայն ուտի, այլև սովորի՝ ինչ ուտել և որտեղից գտնել այդ ուտելիքը:

Մենք նույնպես այդ պատիվն ու ուրախությունն ունենք փոխանցելու մեր իմացածը: Մենք կարող ենք մեր սերունդներին պատմել Աստծո հրաշալի գործերի ու նկարագրի մասին: Մերացող սաղմոսերգուն Աստծուց խնդրում է, որ թույլ տա իրեն «հաջորդ սերնդին պատմել քո բազմի կարողությունը» (Սաղմ. 71. 18): Նա անկեղծորեն ուզում է ուրիշներին պատմել այն ամենը, ինչ ինքը գիտի Աստծո մասին՝ Նրա «արդարությունը և փրկությունը» (Հմ.15), որոնք մենք պետք է զարգացնենք:

Եթե նույնիսկ մենք ալևոր չենք (Հմ.18), Աստծո սիրո ու հավատարմության մասին մեր պատմածը կարող է օգտակար լինել ինչ-որ մեկին, որը ճանապարհ է գնում Նրա հետ: Այդ իմաստությունը ուրիշներին հայտնելու մեր պարտականությունը կարող է ուղղակի լինել այն բանը, ինչն անհրաժեշտ է մարդուն Քրիստոսով ապրելու և նույնիսկ նեղության մեջ բարգավաճելու համար (Հմ.20):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձնից առաջ քայլածների միջոցով ինձ տվեցիր իմաստություն: Թող որ ես նույն բանն անեմ ուրիշների համար: Ամեն:

**Չարգացնելով մեր հարաբերությունը Աստծո հետ՝ մենք
դաժնացնում ենք իմաստություն փոխանցել դրա կարիքն
ունեցողներին:**

Իմ բերանից դուրս եկած խոսքը... ապարդյուն չի վերադառնա ինձ մոտ, այլ կկատարի իմ փափագը: (Ես. 554.11)

ԱՍՏՈՆ ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

1 968 թ. Ծնունդի գիշերը Ապոլոն տիեզերանավի տիեզերագնացները՝ Ֆ. Բորմանը, Ջ. Լովելը և Բ. Անդերսը եղան առաջին մարդիկ, որ դուրս եկան լուսնային ուղեծիր: Լուսնի շուրջը տասն անգամ պտտվելուց հետո նրանք ցույց տվեցին Լուսնի ու Երկրի հրաշալի լուսանկարները, իսկ ուղիղ հեռարձակման ժամանակ հերթով կարդացին Ծննդոց գրքի առաջին գլուխը: Հետագայում Բորմանը պատմում էր.«Մեզ ասացին, որ Ծննդյան գիշերը մենք կունենանք առավելագույն թվով ունկնդիրներ, որոնք տիեզերքից մարդկային ձայն են լսելու: Իսկ Նասայից եկած հրահանգն էր՝ որևէ հարմար բան անել»: Ապոլոնի տիեզերագնացների՝ Աստվածաշնչից ընթերցած հատվածների պատմական ձայնագրությունը մինչև այժմ էլ ճշմարտություն սերմեր է ցանում այն լսողների սրտերում:

Եսայի մարգարեի միջոցով Աստված ասում է.«Ձեր ականջը խոնարհեցրե՛ք և եկե՛ք ինձ մոտ, լսե՛ք ինձ, և ձեր անձը կապրի» (Ես. 55.3): Բացահայտելով փրկություն իր անվճար առաջարկը՝ Նա հրավիրում է մեզ հրաժարվել մեր մեղքերից և ստանալ Տիրոջ ողորմությունն ու ներումը (Հմ. 6-7): Նա հայտարարում է, որ իր մտքերն ու ճանապարհները բարձր են մեր մտքերից ու ճանապարհներից, ինչպես երկինքն է բարձր երկրից (Հմ.8-9): Բայց Ինքը մեզ հնարավորություն է տալիս կիսվել Սուրբ Գրքի այն խոսքերով, որոնք մատնանշում են Հիսուսին և հաստատում, որ Նա պատասխանատու է Իր ժողովրդի հոգևոր աճի համար (Հմ.10-13): Երբ Հայրը, համաձայն Իր կատարյալ ծրագրի, կատարում է Իր բոլոր խոստումները, Սուրբ Հոգին օգնում է տարածելու Ավետարանը:

Աղոթք - Ամենակարող Արարիչ և պահապան, խնդրում եմ մեզ ամեն օր հնարավորություն տու՛ր Քո իմաստությունները ուրիշներին հայտնելու համար: Ամեն:

Պատճախ եղիր Աստծո խոսքի զորությունը բաժանելու ուրիշներին:

Գիտուսի եղբայրները նույնպես չէին հավատում նրան: (Գովհ. 7.5)

ՃՆՈՒՆԴԻ ԿԱՏԱՐՅԱԼ ՏԵՍԱՐԱՆ

Բարկերը ընտանիքի Սուրբ Ծննդյան թեմայով տեսաերիզը կատարյալ էր: Պատմուճան հազած երեք հովիվները (ընտանիքի երիտասարդ որդիները) խոտածածկ դաշտում նստած էին կրակի շուրջ: Հանկարծ մի հրեշտակ (նրանց քույրը) իջավ բլրի գագաթին: Երաժշտության հնչյունների ներքո հովիվները գարմացած նայում են երկինք և տեսնում իրենց կրտսեր եղբորը՝ որպես մանուկ Հիսուս, իսկ մեծ քույրը խաղում էր Մարիամի դերը:

Կային նաև «հավելյալ ներկայացումներ», որոնք ընտանիքի հայրը թույլ տվեց գաղտնի նայել: Երեխաներից շատերը դժգոհում էին, ուզում էին գնալ, և մոր՝ ուշադիր նայելու հորդորն անպատասխան էր մնում: Այսինքն՝ իրականությունը շատ հեռու էր Ծննդյան կատարյալ տեսարանից:

Հեշտ է դիտել Սուրբ Ծննդյան բնօրինակ պատմությունը՝ լավ խմբագրված ու բեմադրված տարբերակով: Բայց Հիսուսի կյանքում ոչինչ հարթ չի եղել: Չար ու նախանձ Հերովդեսը դեռ մանուկ հասակում փորձում էր սպանել նրան (Մատթ. 2.13): Մարիամն ու Հովսեփը չհասկացան իրենց որդուն (Ղուկ. 2.41-50), աշխարհն ատում էր նրան (Հովհ. 7.7), որոշ ժամանակ «եղբայրները նույնպես չէին հավատում նրան» (Հմ. 7.5): Նրա առաքելությունը տարավ սարսափելի մահվան: Նա ամեն ինչ արեց իր Հորը պատվելու և մեզ փրկելու համար:

Բարկերների տեսաերիզն ավարտվում է Հիսուսի այս խոսքերով. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը. ոչ ոք Հոր մոտ չի գա, եթե ոչ իմ միջոցով» (Հմ.14.6):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Քո Որդուն ուղարկեցիր, որպեսզի ե՛ս հավիտյան հաշտվեմ Քեզ հետ: Ամեն:

Փորձում եմ կատարյալ երևալ, բայց դեմք է ավելի լավ ճանաչեմ Գիտուսի կատարյալ գորությունը:

Տիրոջ հրեշտակը նրան երևաց ու ասաց. «Ո՛վ կտրիճ գորավոր, Տերը քեզ հետ է»: (Դատ. 6.12)

ԵՐԲ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՍ

Բժշկական ստուգումներ անցնելուս ժամանակն էր: Առողջական խնդիրներ չուներ, սակայն վախենում էի գնալ, որովհետև տարիներ առաջ անակնկալ մի ախտորոշում էր եղել: Իտեի, որ Աստված ինձ հետ է, ու ես պարզապես պետք է վստահեի նրան, բայց այնուամենայնիվ վախենում էի:

Չէի հասկանում անհանգստությունս պատճառը: Հետո մի առավոտ հիշեցի եղեռնի պատմությունը:

«Կտրիճ գորավոր» (Դատ. 6.12) կոչված եղեռնը վախենում էր մադիանացիների վրա հարձակվելու իր հանձնարարությունից: Թեև Աստված խոստացել էր իր ներկայությունն ու հաղթանակի ապահովումը, եղեռնը դարձյալ հավաստիացումներ էր որոնում (Հմ. 16-23, 36-40):

Աստված չդատապարտեց եղեռնին իր վախերի համար: Հարձակման գիշերը նա կրկին վստահեցրեց, որ հաղթելու է՝ նույնիսկ հնարավորություն տալով մեղմացնել վախերը (7. 10-11):

Աստված իմ վախն էլ հասկացավ: Նրա տված երաշխավորությունը քաջալերեց ինձ, որ վստահեմ իրեն: Ես զգացի Նրա խաղաղությունը՝ իմանալով, որ անկախ արդյունքից՝ Նա ինձ հետ է: Ի վերջո զննումները լուրջ բաներ չհայտնաբերեցին:

Մենք ունենք մեր վախերը հասկացող ու Սուրբ գրությունների և Իր Հոգու միջոցով մեզ հանգստացնող Աստված (Սաղմ. 23.4, Հովհ. 14. 16-17): Թող որ երախտագիտություններ կրկրպագենք Նրան, ինչպես եղեռնն արեց (Դատ. 7. 15):

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ, որ չդատապարտեցիր իմ վախերը, այլ միշտ վստահեցրիր Քո ներկայության մասին: Օգնի՛ր ինձ, որ երբ վախենամ, դիմեմ ու վստահեմ Քեզ: Ամեն: **Վախեր ու մարտահրավերներ կուճենանք, բայց վստահ լինենք, որ Աստված միշտ մեզ հետ է:**

Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: (ԾՆ. 1.1)

ՄՐՏԻ ԶԱՐԿԵՐԸ՝ ՄԻԱՍԻՆ

Ստեղծագործության արշալույսից ի վեր, երբ դեռ չկար գրավոր խոսք, պատմությունները փոխանցվում էին բանավոր կերպով: Բոլորիս է հայտնի, թե որքան հաճելի է լսել կամ կարդալ պատմություն, որն սկսվում է «Կար, չկար» բառերով: Պատմության ուժն, ըստ երևույթին դուրս է գալիս սոսկ հաճելի լինելու ծիրից, երբ այն միասին ենք լսում, և մեր սրտերը միաժամանակ են տրոփում: Մարդու սրտի զարկերը հազվադեպ կարող են համընկնել մեկ ուրիշի հետ, բայց վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ մեր սրտերը կարող են միաժամանակ զարկել, երբ պատմությունը լսում ենք միասին:

Աստված սկսում է մեզ պատմել իր պատմությունը «Սկզբում» բառով (Ծն. 1.1): Այն պահից, երբ Աստված իր պատկերով ստեղծեց Ադամին ու Եվային (Հմ. 27), Նա օգտագործել է այդ ծավալվող պատմությունը՝ ձևավորելու ոչ միայն մեր անհատական, այլև, գուցե նաև ավելի, մեր՝ որպես իր զավակների հավաքական կյանքը: Աստվածաշնչի միջոցով երբևէ արձանագրված ամենահիասքանչ պատմությունը միավորում է Հիսուսին հավատացողներին սրտերը, քանի որ մարդիկ առանձնացված են Նրա նպատակների համար (Ա.Պետ. 2.9):

Հիացած Հեղինակի ստեղծագործությամբ՝ թող մեր սրտերը բաբախեն նույն չափով: Եվ թող մենք Նրա պատմությունը բաժնեկցենք ուրիշներին. «Հեթանոսների մեջ պատմեցե՛ք նրա փառքը, նրա հրաշքները՝ բոլոր ազգերի մեջ» (Սաղմ. 96. 3) և հրավիրենք, որ իրենք էլ դառնան այդ պատմության մի մասը:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Աստվածաշնչի միջոցով ցույց տվեցիր, թե ով ես Դու, և ինձ դարձրիր Քոնը: Ամեն:

Աստվածաշնչի տասնությունները մեզ գրավում են ու խրախուսում, որ դրանց մասին տասներեք ուրիշներին:

Մեր պարծանքը սա է՝ մեր խղճմտանքի վկայությունը, որ Աստուծու տված պարգու-
թյամբ ու անկեղծությամբ և..... Աստուծու շնորհով վարվեցինք: (Բ. Կորնթ. 1.12)

ՄԵՐ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԵՐՈՒՄ

1 524 թ. Մարտին Լյութերն ասել է. «Առևտրականներն ունեն
մի ընդհանուր կանոն, որ դարձել է նրանց գլխավոր նշանա-
բանը.«Ես իմ հարևանի մասին չեմ մտածում այնքան ժամա-
նակ, քանի դեռ ունեմ իմ շահը և բավարարված է իմ ազահու-
թյունը»,–ասում են նրանք: Ավելի քան երկու հարյուր տարի
անց Նյու Զերսի նահանգի Մաունթ Հոլի բնակավայրից Զոն
Վոլմանը թույլ տվեց, որ Հիսուսի հանդեպ իր հանձնարարու-
թյունն ազդի դերձակների խանութների գործին: Ստրուկների
ազատագրմանն աջակցելու համար նա հրաժարվեց բամբակ
կամ ներկանյութ գնել հարկադիր աշխատանք կատարող ընկե-
րություններից: Հանգիստ սրտով նա սիրում էր դրացիներին և
իր բոլոր գործերում առաջնորդվում էր ազնվությամբ ու ան-
կեղծությամբ: Պողոս առաքյալը ջանում էր ապրել «պարզու-
թյամբ ու անկեղծությամբ» (Բ.Կորնթ. 1.12): Երբ Կորնթոսում
ոմանք փորձում էին խաթարել Հիսուսի առաքյալ լինելու նրա
հեղինակությունը, նա պաշտպանեց իր վարկը նրանց առջև՝
գրելով, որ իր ասածները կարող են հաստատվել իր գրածներով
(Հմ.13): Նա նաև ցույց տվեց, որ արդյունավետ լինելը կախ-
ված է որ թե իր, այլ Աստծո գորությունից ու շնորհքից (Հմ.12):
Մի խոսքով՝ Պողոսի հավատքը Քրիստոսի հանդեպ ներթա-
փանցել էր նրա բոլոր գործերի մեջ:

Երբ մենք ապրում ենք իբրև Քրիստոսի դեսպաններ, ուշա-
դիր լինենք, որպեսզի բարի լուրը հնչի մեր բոլոր գործերում,
ընտանիքներում, աշխատանքում և այլուր: Երբ Աստծո գորու-
թյամբ ու շնորհքով բացահայտենք Նրա սերը ուրիշների հան-
դեպ, կհարգենք Նրան և կսիրենք մեր դրացուն:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, օգնի՛ր ինձ, որ ուրիշներին ծառայեմ
մաքուր խղճով, որ իմ սերը նրանց հանդեպ լինի անթաքույց:
Ամեն:

**Որդես Տեր Հիսուսին հավաստողներ՝ ուրիշների հետ մեր հարաբե-
րություններում առաջնորդվենք ազնվությամբ ու անկեղծությամբ:**

Գիտուն իր մոտ կանչեց տասներկու աշակերտներին, նրանց իշխանություն տվեց: (Մատթ. 10. 1)

ԾԻՇՏ ԻՆՉՊԵՍ ԵՍ ԵՍ

Երիտասարդ կինը էջը կարողանում քնել: Թեև երկար տարիներ հաշմանդամություն ուներ, բայց ներկայացել էր բարձրագույն կրթության համար օժանդակություն հավաքելու նպատակով եկեղեցու կազմակերպած տոնավաճառին: «Բայց ես արժանի չեմ», - մտածում էր Շառլոտ էլիոտը՝ կասկածելով իր կարողութուններին ու հոգևոր կյանքի բոլոր կողմերին: Անհանգստությունը թոթափելու համար նա վերցրեց գրիչ ու թուղթ և գրեց հայտնի երգի խոսքերը. «Ինչպես որ կամ»:

«Ինչպես որ եմ՝ մեղքով լցված, խեղճ, մեղավոր ու կորսված, աչքերս դեպի Փրկիչն ուղղած, Աստծո՛վ դառ, քեզ մոտ եմ գալիս»: 1835-ին գրված այդ խոսքերը ասես արտացոլեն այն պատկերը, երբ Հիսուսը կանչեց իր աշակերտներին, որ գան ու ծառայեն իրեն: Ոչ այն պատճառով, որ պատրաստ էին: Ո՛չ: Նրանք պատրաստ էին: Բայց Նա լիազորել էր իրենց այնպես, ինչպես որ կային: 12 հոգուց բաղկացած այդ խմբում կային ձկնորս, մաքսավոր, նախանձ, հավակնոտ երկու եղբայր (տե՛ս Մարկոս 10. 35-37), Հուդա Իսկարիովտացին, որը «մատնեց նրան» (Մատթ. 10.4): Հակառակ այդ ամենին՝ Նա բոլորին իշխանություն տվեց «հիվանդներին բժշկելու, բորոտներին մաքրելու, դևերին հանելու» (Հմ.8), չվերցնելով իրենց հետ «ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ էլ պղնձադրամ, ո՛չ ճանապարհի պարկ, ո՛չ վերարկու և ո՛չ էլ գավազան» (Հմ. 9-10):

«Ահա ես ձեզ ուղարկում եմ», - ասաց Նա և դա բավարար էր: Մեզանից յուրաքանչյուրի համար, որ Նրան ասում է՝ այո, Ինքը կա:

Աղոթք - Հիսուս, հրամայի՛ր ինձ Քեզ մոտենալ՝ որևէ փոփոխություն անելս ամբողջովին կախված լինելով Քո շնորհից ու զորությունից: Ամեն:

Կարող ես մտածել, թե սահմանափակումներ ունես, բայց վստահ եղի՛ր, որ Տերը քեզ կանչում է ինչ-որ բան անելու այնպես, ինչպես կաս:

Նրանք ուրախացան, որ դադարեց, և նրանց առաջնորդեց դեպի մավահանգիստ, այնտեղ, ուր ցանկանում էին: (Մաղմ. 107.30)

ՇՆՈՐՀՔ՝ ՔԱՈՍՈՒՄ

Փորձում էի մի փոքր քնել, հանգստանալ, երբ հանկարծ մի ճարձատյուն լսվեց: Տղաս էլեկտրական կիթառի կլարն էր կտրել, որին արձագանքեցին պատերը: Ո՛չ խաղաղությունն կա, ո՛չ լուռություն և ո՛չ էլ քուն: Մի քանի բոպե անց լսվեց աղջկաս ձայնը, որը դաշնամուր էր նվագում ու երգում «Հիանալի շնորհք» երգը:

Ես սովորաբար սիրով եմ լսում որդուս կիթառ նվագելը: Բայց այդ պահին այն ինձ անհանգստացրեց: Այդպես էլ Ջոն Նյուտոնի հոգևոր երգի ծանոթ հնչյուններն ինձ հիշեցրին, որ շնորհքը ծաղկում է նաև քառսում: Անկախ նրանից, թե որքան բարձր, անցանկալի ու ապակողմնորոշող են կյանքի փոթորիկները, Աստծո շնորհի նոտաները հնչում են հստակ ու ճշմարիտ՝ մեզ հիշեցնելով Նրա զգոն հոգատարություն մասին:

Այս իրականությունն ենք տեսնում նաև Սուրբ Բարձր: Մաղմոս 107. 23-32 համարներում կարդում ենք, որ նավաստիները պայքարում են ջրերի հորձանքների դեմ, որոնք կարող էին կուլ տալ իրենց: «Նրանց անձերը մաշվեցին նեղությունից» (Հմ.26): Բայց նրանք չէին հուսահատվում, այլ «Տիրոջն աղաղակեցին, և նա փրկեց իրենց վշտերից» (Հմ.28): Ի վերջո «Նրանք ուրախացան, որ դադարեց, և նրանց առաջնորդեց դեպի նավահանգիստ, այնտեղ, ուր ցանկանում էին» (Հմ. 30):

Քառսային իրավիճակներում խանգարվում է մեր քունը, աղմուկն ու վախն են պատում մեր սրտերը: Սակայն երբ վստահենք Աստծուն ու աղոթենք, կզգանք Նրա ներկայությունն ու ապահովության շնորհը՝ Նրա անսասան սիրո ապաստարանը:

Աղոթք - Ռ՛վ Տեր, ուզում եմ կյանքիս ընթացքը լավ ավարտել: Օգնիր ինձ, որ ամեն բանից ավելի և ամենից առաջ Քե՛զ սիրեմ: Ամեն:

Տարին ավարտելիս եկե՛ք խնդրենք Ասծուց, որ ավարտենք ուժեղ և նորն սկսենք նոր ուժով և մեծ հույսերով:

Բարի պատերազմ մղեցի, ընթացքը ավարտեցի, հավատը պահեցի: (Ք. Տիմ. 4.7)

ՈՒԺԵՂ ԱՎԱՐՏԵԼ

2019թ. Լեհաստանում անցկացված մարմնամարզության աշխարհի առաջնությանը Հնդկաստանից մասնակցում էր 103 տարեկան Ման աուր անունով մի կին: Հատկանշանական է, որ նա շահեց չորս ոսկե մեդալ՝ տարբեր մարզաձևերում՝ նիզակ նետել, գնդակ նետել, 60 մ. և 200 մ. վազք: Ապշեցուցիչն այն էր, որ նա ավելի արագ վազեց, քան նախորդ առաջնությանը: Կյանքի երկրորդ դարը թևակոխած կինը ցույց տվեց, թե ինչպես պետք է ուժեղ ավարտել:

Պողոս առաքյալը Տիմոթեոսին՝ իր կրտսեր աշակերտին գրում է, թե ինչպես է ինքը հասել իր կյանքի ավարտին.«Իմ մեկնելու ժամանակը հասել է» (Ք. Տիմ. 4.6),- ասում է նա և վստահ է, որ իր ընթացքն ավարտում է ուժեղ.«Բարի պատերազմ մղեցի, ընթացքն ավարտեցի, հավատը պահեցի» (Հմ.7): Նա վստահ էր, որովհետև հաշվի էր առել իր տպավորիչ նվաճումները, ուսումնասիրել էր իր մեծ ազդեցությունը: Նա գիտեր, որ «պահեց հավատքը» (Հմ.7): Առաքյալը հավատարիմ մնաց Հիսուսին: Վշտերի և ուրախությունների մեջ նա հետևում էր իրեն կործանումից փրկողին: Եվ գիտեր, որ Տեր Հիսուսը պատրաստ էր «արդարության պսակը» (Հմ.8) իր հավատարիմ կյանքի ուրախ ավարտին իրեն պարգևել:

Պողոսը պնդում է, որ այդ թագը նախատեսված է ոչ թե մի քանի ընտրյալների համար, այլ «բոլորի, ովքեր սիրեցին նրա հայտնությունը» (Հմ.8): նալով դեպի Նոր տարի, եկե՛ք հիշենք, որ Հիսուսը ցանկանում է թագադրել բոլորին, ովքեր սիրում են Իրեն: Ուրեմն թող որ մենք ապրենք այնքան, որ ուժեղ ավարտենք:

Աղոթք - Ո՛վ Տեր, ուզում եմ կյանքիս ընթացքը լավ ավարտել:

Օգնիր ինձ, որ ամեն բանից ավելի և ամենից առաջ Քե՛զ սիրեմ: Ամեն:

Տարին ավարտելիս եկե՛ք խնդրենք Աստուց, որ ավարտենք ուժեղ և նորն սկսենք նոր ուժով և մեծ հույսերով:



Նյութերի ցանկ

Աղոթք	նոյ.18, դեկտ.5, 29,
Ազդել մարդկանց վրա.....	դեկտ.2,9,16,23
Առատաձեռնություն.....	Հոկտ.6
Աստվածաշնչի մեկնություն	նոյ. 21
Աստվածաշնչի պատմություն.....	դեկտ.27
Աստվածաշնչի սերտողություն.....	դեկտ.3
Աստծո ընտանիք.....	դեկտ. 9,11
Աստծո նկարագրերը.....	Հոկտ. 29, դեկտ.10,22,27
Աստծո սերն ու Հոգածությունը.....	Հոկտ.7,13, 14, 20, նոյ.19, 27, դեկտ.3,7,14,30
Աստծուն սպասել.....	դեկտ.6
Արդարություն.....	Հոկտ.21
Ավետարանչություն.....	Հոկտ.26,28, նոյ.20, դեկտ.24
Բարեկամություն.....	դեկտ. 15
Բարկություն.....	Հոկտ .22
Գոհունակություն.....	նոյ.3, դեկտ.17
Գործ.....	նոյ.7
Եկեղեցու առաքելությունն ու նպատակը.....	նոյ. 17
Իմաստնություն.....	նոյ.29
Խորհրդատվություն.....	դեկտ.2.9, 16.23
Ծառայել.....	Հոկտ.11,31,նոյ.1,8,15,22, դեկտ.4,9,29
Ծերանալ.....	դեկտ.6
Ծնող լինել.....	դեկտ.22
Կախվածություն.....	նոյ.28
Կյանքի պայքարներ.....	նոյ .7
Համբերություն.....	Հոկտ.15
Հանգիստ.....	դեկտ.22
Հաշտություն.....	նոյ.30
Հավատք.....	դեկտ.16,19
Հավիտենական կյանք.....	նոյ. 18, դեկտ.13
Հարաբերություններ.....	Հոկտ.23, 27, նոյ.30



Հնագանդուծյուն.....	Հոկտ.11
Հոգևոր կարգապահություն.....	նոյ.5
Հոգևոր հասունություն.....	Հոկտ.2,9,11,16,23,դեկտ.19,31
Հոգևոր վերափոխում.....	նոյ.11,դեկտ.26
Հույս և երջանկություն.....	Հոկտ.19,նոյ.6,7,25, դեկտ.6,12
Մարդկության մահը.....	Հոկտ.12, դեկտ.13
Մեղք.....	նոյ.11, 26
Մեղքերի թողություն.....	նոյ.12,26, 28
Ներել ուրիշներին.....	նոյ.30
Շնորհակալություն.....	Հոկտ.10, նոյ.24
Որոշումներ կայացնել.....	Հոկտ. 25, նոյ.2,9,16,23
Պաշտամունք.....	Հոկտ.19
Սեր այլոց հանդեպ.....	Հոկտ. 27, նոյ. 8, 10, 13, 29,30, դեկտ. 7,11, 22, 28
Սուրբ Հոգի.....	Հոկտ, 165, 24,25
Սուրբ Հոգու պտուղներ.....	Հոկտ.1,8,15, 22
Ստեղծագործություն.....	Հոկտ.17,դեկտ 14.
Վախ.....	Հոկտ.24
Վիշտ.....	Հոկտ.5
Վստահություն Աստծո հանդեպ.....	Հոկտ.11, 15, 26,30 նոյ.3,4,14,15, 23,24, դեկտ.26,30
Տառապանք և ողբերգություն.....	Հոկտ.5, նոյ.4,6
Փրկություն.....	Հոկտ.4, նոյ.11, 22, 26, դեկտ. 27
Քաջակերություն.....	նոյ. 10, դեկտ.1,2,8, 15,22
Քրիստոս Փրկիչ.....	Հոկտ.18
Քրիստոսի աստվածությունը.....	դեկտ.28
Քրիստոսի ծնունդը.....	դեկտ.3, 6,18, 20,25
Քրիստոսի մարգարեության մասին.....	նոյ.21, դեկտ.20,
Քրիստոսի նման ապրել.....	Հոկտ. 28, նոյ.13, դեկտ.2.28
Քրիստոսի համար ապրել.....	Հոկտ. 18,31, նոյ. 15, դեկտ.4



Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. +374 47 945 275

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....
